

DOCUMENT RESUME

ED 339 224

FL 019 891

TITLE Approaches to the Management of Large Classes.
 Lancaster-Leeds Language Learning in Large Classes
 Research Project. Project Resettling in the United
 States.
 INSTITUTION Center for Applied Linguistics, Washington, D.C.
 SPONS AGENCY Department of State, Washington, DC. Bureau of
 Refugee Programs.
 PUB DATE 91
 NOTE 106p.; For other guides in this series, see FL 019
 889-892.
 PUB TYPE Guides - General (050)
 LANGUAGE Armenian
 EDRS PRICE MF01/PC05 Plus Postage.
 DESCRIPTORS Acculturation; Adjustment (to Environment); Armenian;
 Compensation (Remuneration); *Cultural Context;
 *Daily Living Skills; Employment; Expenditures;
 Foreign Countries; Interpersonal Communication; *Land
 Settlement; Legal Problems; Occupational Mobility;
 Politics; Public Education; *Refugees; Religion;
 *Social Services; Sociocultural Patterns; Uncommonly
 Taught Languages
 IDENTIFIERS *Armenian Americans; Armenians

ABSTRACT

This resettlement guide, entirely in Armenian, describes the initial stage of resettlement and the processes that refugees undergo as new arrivals. The information is intended to prepare refugees for the first few weeks in an American community and to explain fundamental aspects of American life. An initial chapter outlines issues in pre-arrival arrangements, resettlement, and legal status, also explaining some common refugee misconceptions about their reception and status. Subsequent chapters describe aspects of employment in the United States (employment and benefit types, pay, getting a job, and job mobility); income and expenditures (budgeting, shopping, and banking services); education systems for children and adults; the American social, political, and religious system (including social services, the health care system, government and law, religion in American life, and church sponsorship); and daily living (personal communication, papers to carry, cars, alcohol, privacy, punctuality, personal habits, social conventions, money matters, and weights and measures). Notes on American holidays and special days and a list of voluntary agencies are contained in final chapters. (MSE)

 * Reproductions supplied by EDRS are the best that can be made *
 * from the original document. *

"PERMISSION TO REPRODUCE THIS
MATERIAL HAS BEEN GRANTED BY

S.P. Tucker

TO THE EDUCATIONAL RESOURCES
INFORMATION CENTER (ERIC)."

U.S. DEPARTMENT OF EDUCATION
Office of Educational Research and Improvement
EDUCATIONAL RESOURCES INFORMATION
CENTER (ERIC)

- This document has been reproduced as received from the person or organization originating it
- Minor changes have been made to improve reproduction quality

- Points of view or opinions stated in this document do not necessarily represent official OERI position or policy

**ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ
ՎԵՐԱԲԵՍԱԿՎԵԼՈՒ
ՄԻ ԶԵՇՈՒԱՐԿ**

Այս՝ Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ գիրքը, Կիրառական Լեզվաբանական Կենտրոնի ինքնաշխատությունների չորս տարրերակներից մէկն է, որը լոյս է տեսել 1982 թվականին, Միացյալ Նահանգների Արտաքին Գործոց Նախարարության (U.S. Department of State) հովանաւորութեամբ։ Այս գիրքը փաստորեն հետևյալ գործակալությունների միացյալ ջանքերի արդյունքն է.- Կիրառական Լեզվաբանական Կենտրոնի, Միացյալ Նահանգների Վերաբնակների Ծրագրերի Բյուրոյի եւ Ներգաղթողների Միջկառավարական Կոմիտեյի։

Զնայած այս ձեռնարկի բովանդակությունը կազմվել է Միացյալ Նահանգների Արտաքին Գործոց Նախարարության Վերաբնակվողների Ծրագրերի Բյուրոյի համաձայնությամբ, այն անպայմանորեն չի արտացոլում այդ գործակալության քաղաքականությունը և դուք անպայմանորէն որևէ հատուցում չպէտք է սպասեք ֆեդերալ կառավարության կողմից։

Նախարարությունը լիիրավ, բացարձակ և անվերադարձ իրավունք է վերապահում տվյալ ձեռնարկը արտադրելու, վերահրատարակելու և կամ որևէ ձևով օգտագործելու, ինչպես նաև իրավունք տալու ուրիշներին՝ կառավարական նպատակներով օգտագործելու համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Գլուխ I ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 1

Ա. Ներածություն

1. Ժամանում 2

- ա. Թույլտվություն. Ո՞վ է համարվում գաղթական
- բ. Հասկանալու դրույթը
- գ. Ծանապարհորդական ծախս
- դ. Ծամպրուկների ստանալը և Ա.Ն մաքսատունը

2. Վերաբնակեցում 6

- ա. Ի՞նչ է սպասվում
- բ. Վերաբնակեցման իրավունք
- գ. Հովանավորող ներ. Ի՞նչ է Հովանավորողը
- դ. Ժամանելուց հետո

3. Օրինական իրավիճակ (ստատուս) 9

- ա. Գաղթականի իրավիճակ
- բ. Վիզա-93
- գ. Մշտական ապրելու իրավիճակ
- դ. Քաղաքացիության իրավիճակ

4. Մի քանի ընդհանուր անհասկացողություններ 14

5. Կուլտուրական փոփոխություններին հարմարվելը 15

Բ. Ամփոփում

Գլուխ II ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ 18

Ա. Ներածություն

1. Աշխատանքի տեսակները 19

- ա. Որսկավորում չպահանջող աշխատանքներ
- բ. Որակավորում պահանջող աշխատանքներ
- գ. Պրոֆեսիոնալ աշխատանքներ

2. Նպաստների տեսակները

22

- ա. Սոցիալական ապահովագրություն
- բ. Գործազրկության փոխհատուցում
- գ. Աշխատողների աշխատավարձ
- դ. Կյանքի ապահովագրություն
- ե. Առողջական կամ բժշկական ապահովագրություն
- զ. Պաշտոնը թողնելու ծրագրեր
- է. Հիվանդության պատճառով բացակայելը
- ը. Արձակուրդ

3. Աշխատավարձ և պահումներ

25

- ա. Աշխատավարձ
- բ. Պահումներ

4. Աշխատանքի ընդունվելը

28

- ա. Աշխատանքի ընդունվելու վերաբերեալ ինֆորմացիայի աղբյուրները
- բ. Աշխատանք փնտրելը
- գ. Աշխատանքային կենսագրության ամփոփագիր

5. Փոփոխություններ աշխատանքի մեջ –Շարժունակություն և Առաջնադրում

38

- ա. Աշխատանքի մեջ
- բ. Առաջնադրում աշխատանքի մեջ
- գ. Աշխատանք փոխելը

Բ. Ամփոփում

Գլուխ III

ԵԿԱՄՈՒՏ և ԾԱԽՍԵՐ

42

Ա. Ներածություն

1. Զեր եկամուտի ֆինանսական նախահաշվարկը

42

- ա. Հաստատուն ծախսեր
- բ. Փոփոխական ծախսեր

2. Գնումներ

44

- ա. Գնումներ անելու ինֆորմացիայի աղբյուրները
- բ. Էժան գնումներ անել
- գ. Որտեղ գնումներ անել
- դ. Գնումների համար վճարելը
- է. Գնումների հարկը եւ գնումների ստացականը
- զ. Երաշխավորումներ
- է. Գնումների վերադարձնելը
- ը. Ապահովագործելը

3. Բանկային ծառայություններ

50

- ա. Զեկի հաշիվներ
- բ. Խնայողությունների հաշիվներ
- գ. Փոխառություններ
- դ. Ապահովագործություններ

Բ. Ամփոփում

Գլուխ IV

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

54

Ա. Ներածություն

1. Երեխաների կրթությունը

55

- ա. Դպրոցի տեսակները
- բ. Դպրոցների վերաբերյալ գիտելիքներ
- գ. Ընդհանուր հարցեր
- դ. Ուսանելու հետ գուգահեռ աշխատանք
- է. Ծնողական պատասխանառություններ
- զ. Միջնակարգից ավելի բարձր ուսում

2. Ուսումը չափահասների համար

63

- ա. Անգլերենը որպես երկրորդ լեզու (ESL)
- բ. Չափահասների հիմնական ուսումը
- գ. Պրոֆեսիոնալ և տեխնիկական դպրոցներ
- դ. Կոլեջներ և համալսարաններ
- է. Զինվորական ծառայություններ

Բ. Ամփոփում

Ա. Ներածություն

1. Հասարակական ծառայություններ

71

- ա. Եկամուտի պահպանման ծրագրեր
- բ. Այլ ծրագրեր

2. Ամերիկյան առողջական խնամքի սիստեմը

74

- ա. Հանրության առողջությունը
- բ. Մասնավոր բժիշկներ
- գ. Կլինիկաներ
- դ. Հիվանդանոցներ
- ե. Բժշկական շտապ օգնության ծառայություններ
- զ. Ատամնաբույժներ
- է. Բժշկական և ատամնաբուժական ծառայությունների համար վճարելը

3. Միացյալ Նահանգների կառավարությունը
և Օրենքը

79

- ա. ԱՄՆ-ի քաղաքական կառուցվածքը
- բ. Քաղաքական պարտիաներ և ընտրություններ
- գ. Ազատություն օրենքի ներքո
- դ. Օրենքը Միացյալ Նահանգներում
- ե. Լեգալ օգնություն
- զ. Օրենքի գործադրումը և հասարակության ապահովությունը

4. Կրոնը Ամերիկայի Միացյալ Նահանգներում

83

- ա. Կրոնը Ամերիկացիների կյանքում
- բ. Եկեղեցու դերը երաշխավորության մեջ

Բ. Ամփոփում

Ա. Ցուցմունքների և օգնության հայց	87
Բ. Զեզ մոտ ունենալու փաստաթղթեր	87
Գ. Ատոմեքենա	87
Դ. Հեռախոսային համարների տեղեկատու	87
Ե. Ալկոհոլ	88
Զ. Ինքնուրույն՝ մենակ լինելու իրավունք	88
Է. Ծշդապահություն	88
Ը. Ծիսելը	89
Թ. Անձնական հիգիենիա	89
Ժ. Թեյանվեր տալը	89
Ի. Թվերի գրելը	89
Լ. Դրամի էլությունը	90
Խ. Սանրություններ և Զափումներ	90

Գլուխ VII ԱՄԵՐԻԿԱՆ ՏՈՆԱԿԱՆ և ՀԱՏՈՒԿ ՕՐԵՐ

92

Գլուխ VIII ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

95

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Վերաբնակվելու վերաբերյալ այս ձեռնարկը գրված է ձեզ օգնելու՝ Միացյալ Նահանգների կյանքին ընտելանալու համար:

Գիրքը նկարագրում է վերաբնակման առաջին փուլը եվ այն պրոցեսները, որոնց ենթարկվելու եք Միացյալ Նահանգներում որպես նորեկի: Այս տեղեկության նպատակն է նախապատրաստել ձեզ ամերիկյան համայնքում ապրելու սկզբնական շրջանին և ձեզ ծանոթացնել Միացյալ Նահանգների կյանքի այն կարևոր կողմերի հետ, որոնք են՝ աշխատանք, կրթություն, կառավարություն, օրենք և գնորդի իրավունք:

Այս գրքի տարբերակները կարելի է գտնել բազմաթիվ այլ լեզուներով: Այդ «Ուրիշ Լեզու» տարբերակները այս գրքի տառացի թարգմանությունը չեն, սակայն բոլորն ել նույն նյութի մասին են խոսում:

Զնայած որ այս գրքի պարունակությունը համեմատաբար մանրամասն է և անչափ օգտակար կարող է լինել ձեզ ինչպես Միացյալ Նահանգներ գալուց առաջ, այնպէս էլ գալուց հետո, այդուհանդերձ չի փորձում նոր կյանքին համակերպվելու ծանապարհին ձեր առաջ կանգնած բոլոր խնդիրներին սպառիչ պատասխան տալ:

Ոչ մի տեղեկագիրք չի կարող տալ ձեզ այն բոլոր, ինչի կարիք կունենաք, քանի որ վերաբնակումը շատ բարդ պրոցես է: Նորություններ ընդունելու և այն փորձարկելու ազատամտությունն ու կամեցողությունը ձեր ամենաարժեքավոր գրավականները կլինեն Միացյալ Նահանգների կյանքին հաջողությամբ համակերպվելու համար:

Հաջողություն ենք ցանկանում ձեզ:

ԳԼՈՒԽ |

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Ա. ՆԱԽԱԲԱՆ

Միացյալ Նահանգները հասկանալիորեն հաճախ անվանում են գաղթականների երկիր: Ներկա ամերիկացիների մեծամասնությունը գաղթական ընտանիքների ժառանգներն են, որոնք ազատ և լավ ապրելու նպատակով լքեցին իրենց հայրենի տունը և զոհաբերությունների և քրտնաշան աշխատանքի շնորհիվ կարողացան այս օտար հողում նոր կյանք ստեղծել: Միացյալ Նահանգները բազմազգ երկիր է, որը գնահատում է մշակույթի բազմազանությունը և ողջունում է բոլոր այն նորեկներին, որոնք ցուցաբերում են աշխատելու պատրաստակամություն և ցանկանում են հասարակության մաս դառնալ:

Երբ գաղթականները գալիս են օտար երկիր, նոր հասարակության մեջ հաջողությամբ մերվելու պատասխանատվությունը վերջիվերջո մնում է իրենց ուսերի վրա: Վերաբնակման սկզբում սակայն, որոշ օգնության կարիք գգացվելու է: Իսկ ո՞վքեր են լինելու այդ առաջին օգնականները: Միացյալ Նահանգներում դրանք կամավոր կազմակերպություններն են, որոնք գործում են Միացյալ Նահանգների կառավարության հետ համատեղ: Այս կամավոր գործակալությունները գործում են Գաղթականների Ծրագրերի Բյուրոյի և Արտաքին Գործոց Նախարարության կից Միացյալ Համաձայնագրի կանոններով:

Գաղթականների վերաբնակեցման հարցում ֆեդերալ կառավարության մասնակցությունը բոլորովին նոր երևույթ է: Երբ Միացյալ Նահանգները առաջին անգամ սկսեց գաղթականներ ընդունել, նրանց վերաբնակեցման պատասխանատվությունը բացարձակապէս ընկնում էր կամավոր գործակալությունների վրա: Կառավարությունը երբեք չէր խառնվում այդ գործին: Կարևոր է իմանալ, որ տարիների ընթացքում յուրաքանչյուր կամավոր գործակալություն իր ունեցած փորձից ելնելով մշակեց վերաբնակեցման իր ուրույն կանոնները: Այդ է պատճառը, որ օրենքների և կանոնների շատ մռած բազմազանության կարելի է հանդիպել ոչ միայն միևնույն համայնքում գործող տարբեր կամավոր գործակալությունների կանոնների միջև, այլև նոյնիսկ միևնույն ազգային գործակալության տեղական տարբեր բաժանմունքներում: Դրանով հանդերձ, յուրաքանչյուր կամավոր գործակալություն գաղթականների վերաբնակեցման նախնական շրջանում աշխատում է հոգալ նրանց անմիջական կարիքները և օգնում նրանց հասկանալու Միացյալ Նահանգների կյանքի էռթյունը:

BEST COPY AVAILABLE

1. ԳԱԼՈՒՑ ԱՌԱՋ

ա. Ընդունելություններ. Ո՞վ է համարվում գաղթական

Միացյալ Նահանգների կառավարությունն է որոշում (Միացյալ Նահանգների օրեն շների և ընտրության բնորոշ հատկանիշների համաձայն) ո՞վ իրավունք ունի ընդունվելու կամ թոյլատրվելու որպես գաղթական:

Այս անհատները, որոնք ցանկանում են որպես գաղթական գալ Միացյալ Նահանգներ, պետք է իրենց դիմումները ներկայացնեն Ներգաղթի եւ Հպատակագրման Ծառայության (ՆՀԾ) և անձամբ հարցաքննման են- թարկվեն ՆՀԾ-ի պաշտոնյայի կողմից: 1980 թվականի Գաղթականների վերաբերյալ Ակտի Համար 101 հոդվածի համաձայն, գաղթական է համար- վում.-

«Յուրաքանչյուր ոք, որը գտնվում է իր ազգությանը՝ չպատկանող երկրում, կամ եթե անձը ազգություն չունի՝ յուրաքանչյուր ոք, որը գտնվում է այն երկրից դուրս, որտեղ սովորաբար ապրում էր, որտեղ ի վիճակի չէ վերադառնալ կամ չի ուզում վերադառնալ և անկարող է կամ չի ուզում տվյալ երկրի հովանավորությունը դիմել, որովհետև վախենում է հետապնդվել այդ երկրի կողմից ազգային, կրոնական, ցեղային, կամ որևէ ազգային խմբին մասնակցելու պատճառով, քաղաքականապես տարակարծիք լինելու հողի վրա» :

Բացի որոշելուց, թե ում է թույլատրվելու որպես գաղթականի ներգաղթել, ԱՄՆ-ի կառավարությունը յօւրաքանչյուր տարի քանակական և որակական սահմանափակումներ է դնում: Կառավարությունն է որոշում, թե ո՞ր երկրներից ո՞րքան գաղթականների իրավունք է տրվելու ներգաղթել ԱՄՆ: Գաղթականների ընդհանուր քանակը, որոնց թոյլատրվում է յուրաքանչյուր ֆինանսական տարի ներգաղթել Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ամեն տարի փոխվում է: Սահմանափակում գոյություն ունի նաև աշխարհի տարբեր մասերից ներգաղթող մարդկանց քանակի վրա: ԱՄՆ ընդունվող գաղթականները աշխարհի հետևյալ 5 վայրերից են . 1' Ֆրիկա, Միջին Արևելք, Արևելյան Եվրոպա-Սովետական Միություն, Լատինական Ամերիկա և Հարավ-Արևելյան Ասիա: Հետևաբար, դուք կլինեք յուրաքանչյուր տարի հետեւյալ տարբեր երկրներից ԱՄՆ ներգաղթելու համար ընդունված բազմաթիվ մարդկանցից մեկը . Աֆղանստան, Եթովպիա, Լեհաստան, Սովետական Միություն, Կուբա, Վիետնամ եւ շատ ուրիշներ:

Երբ մարդիկ ընդունված են որպես գաղթական գալ ԱՄՆ, նրանց բնակեցման գործը՝ այսինքն օժանդակություն հայթայթելը և սկզբնական շրջանում Ամերիկայի

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ |

Կյանքին համակերպվելու շնորհակալ գործը կատարում են կամավոր գործակալություններ: Այս գործակալությունները լավ են գիտակցում, որ ներգաղթողները այնպիսի մարդիկ են, որոնք Միացյալ Նահանգներն են ընտրել որպես այն երկիրը, որտեղ ազատության մեջ սկսելու են իրենց նոր կյանքը: Եվ այդ կամավոր գործակալությունները պատասխանատվությունը իրենց վրա են վերցնում օգնելու այդ մարդկանց՝ վերսկսելու իրենց նոր կյանքը:

Բ. Պատասխանատվության դրույթ

Դեռևս արտասահմանում գտնված ժամանակ, բոլոր նրանք, որոնք ներգաղթելու են ԱՄՆ որևիցե կամավոր գործակալության հովանավորությամբ, պարտավոր են ստորագրել «Պատասխանատվության Դրույթ» կոչվող փաստաթուղթը, սովորաբար իրենց հարազատ լեզվով շարադրված: Սա պարտադիր պրոցեդուրա է ԱՄՆ ընդունվելու համար:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ |

ԿԱՄԱՎՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹ (ՆՄՈՒշ)

Անուն-----

Գործ հսմար-----

Շուտով հասնելու եք ԱՄՆ որպես գաղթական: Ձեզ հովանավորելու և օժանդակելու է գոյություն ունեցող կամավոր գործակալություններից մեկը:

Հովանավորող գործակալությունը կիանձնի ձեզ տեղական կազմակերպչին կամ անձամբ կիայթայթի ձեզ սկզբնական վերաբնակեցման ծառայություններ:

Այս խնամակալության նպատակն է ամենաարագ ձևով բերել ձեզ տնտեսական ինքնաբավականացման աստիճանին, սովորաբար աշխա- տանքի միջոցով: Նպատակն է օգնել ձեզ, օգնել ինքներդ ձեզ:

Երաշխավորության պայմանների մասին ձեր գիտակցությունը և համաձայնությունը հաստատելու համար, խնդրում եմ ստորագրեցնեք հետևյալ «Պատասխանատվության Դրոյթ»:

1. Համաձայն եմ բնակություն հաստատել ԱՄՆ-ի որևէ տեղում, եթե ինձ օգնել կամ հնարավորություն ունեցող ազգականներ կամ ընկերներ չունեմ:

2. Եթե համաձայնվել եմ վերաբնակվել մի քաղաքում, հասնելուց հետո իրավունք չունեմ օգնություն պահանջել երաշխավորող գործա- կալությունից ուրիշ քաղաք տեղափոխվելու համար:

3. Ես կընդունեմ ինձ ու ընտանիքիս համար հայթայթված բնակարա- նային կարգադրություններ:

4. Եթե աշխատելու տարիքում եմ և աշխատունակ, կիամաձայնվեմ որևէ աշխատանքի՝ անկախ նրանից իմ մասնագիտությունն է թե ոչ: Հասկանում եմ, որ որոշ ժամանակ անցնելուց հետո եթե դժգոհ եմ, կարող եմ աշխատանքս փոխել, սակայն կամավոր գործակալությունը կամ ինսամակալը պարտավոր չէ ինձ համար ուրիշ աշխատանք գտնել:

5. Հասկանում եմ, որ սեփական նախաձեռնությամբ միայն կարող եմ կրթություն ստանալ և անձամբ ապահովել ուսման վրաը: Սովորաբար ձրի անգլերեն լեզվի դասեր գոյություն ունեն երեկոյան ժամերին:

Վկա-----

Ստորագրություն-----

Տարեթիվ-----

Տարեթիվ-----

Գաղթականը պարտավոր է ստորագրել այս փաստաթուղթը, որպեսզի տեղյակ լինի թե ինչ է սպասում իրեն երբ տեղ հասնի:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ|

գ. Ծանապարհածախս

Զեր ծանապարհածախսը ձեզ փոխ կտրվի էմիգրացյայի Միջկառավա- րական Կոմիտեյի (ԷՄԿ) կողմից, ԱՄՆ-ի հայթայթած ֆոնդից: Ծանապարհածախսը արտասահմանի միևնույն տեղից ԱՄՆ-ի որևէ կետ նույնն է, անկախ նրանից, թե Ամերիկայի ո՞ր քաղաքն եք ժամանում և ամեն դեպքում ավելի ցածր է քան սովորական առևտյալական գինը:

Ամերիկա մեկնելուց առաջ, դուք պետք է ստորագրեք մի պարտավորագիր, ծանապարհածախսը ետ վճարելու համար: Դուք պարտավոր եք ետ վճարել այդ պարտքը: Այդ պարտքի գանձումը կկատարվի ձեզ հովանավորող կամավոր գործակալության կողմից: Կարող եք վճարել ամսական չնչին մուծումներ կատարելով, սկզբում նույնիսկ փոքրագույն գումարներով, կամ ցանկության դեպքում կարող եք վճարել միանվագ: Այդ պարտքը տոկոսով չէ, սակայն կմնա չմարված, մինչև ամբողջապես ետ վճարելը: Ետ վճարված փողը վերադառնում է էմիգրացիայի Միջկառավարական Կոմիտեյին, նորից Ամերիկա վերաբնակվել կամեցող գաղթականների կարիքները հոգալու համար: Զեր պարտքի ետ վճարելը հնարավոր է դարձնում ուրիշ գաղթականներին ստանալ նույն օգնությունը, ինչին դուք արժանացաք:

դ. Ավելորդ բագաժ և ՄՆ-ի մաքսատունը

Ձեզ, ինչպես նաև որևէ այլ կու կարգի միջազգային ծանապարհորդի թույլատրվում է 22 կիլոգրամից ոչ ավելի բագաժ ունենալ անձագլուխ: Ավելորդ բագաժի տեղափոխության վարձը ձեր պարտականությունն է: Ոչ ԷՄԿ-ն և ոչ էլ կամավոր գործակալությունը հնարավորությունը ունեն հայթայթելու այդ ավելորդ բագաժի ծախսը: Ավելորդ բագաժ և ընտանի կենդանիներ տեղափոխելու հարցերի շուրջ տեղեկություն ստանալու համար պետք է դիմեք կամավոր գործակալություններին, նախան Միացյալ Նահանգներ մեկնելը:

ԱՄՆ-ի մաքսատան օրենքները արգելում են որոշ առարկաների ներմուծումը օտար երկրներից, ինչպիսիք են նարկոտիկ միջոցներ (Թմրադեղեր), պտուղ, բույս, բանջարեղեն, թարմ միս: Դեղատոմսով դեղեր թույլատրվում են: Հատ կարևոր է մեկնելուց առաջ կամավոր գործակալությունների հետ պարզել մաքսատան հետ կապված բոլոր տեսակի հարցերը:

2. ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ

ա. Ի՞նչ է ակնկալվում ձեզանից

Ձեր վերաբնակեցման գործի հաջողությունը գլխավորապես կախված է ավելի շատ ձեր բոնած դիրքից, քան ձեր ստացած օգնության որակից: Դուք պետք է գիտակցեք, որ ամերիկացիները սովորաբար գնահատում են «ինքն իր վրա հույս դնել» հասկացողությունը: Չնայած, որ կամավոր կամ տեղական վերաբնակեցման գործակալությունների աշխատողները կփորձեն ճիշդ ուղղության վրա դնել և օգնել ձեզ հասկանալու ձեր հարազատ երկրի և Ամերիկայի կյանքի միջև գոյություն ունեցող տարբերությունները, այնուամենայնիվ կենթադրեն, որ դուք նախաձեռնությունը կվերցնեք ձեր ձեռքը, ԱՄՆ-ում ձեր կյանքը կազմակերպելու համար:

Եթէ աշխատունակ եք, բոլորը հույս կունենան, որ դուք աշխատանք կգտնեք և կսկսեք փող վաստակել ձեր ապրուստը հնարավորին չափ շուտ ապահովելու համար, նույնիսկ եթե այդ գործը ձեր նախկին փորձառության հետ ոչ մի կապ չունի և բարձր չի վարձատրված: Եթե անգլերեն լեզու սովորելու կարիք կունենաք, ստիպված կլինեք ձեր աշխատանքին զուգընթաց սովորել: Լավագույնը կլինի այն, որ սկսեք անգլերեն սովորել Ամերիկա վերաբնակվելու որոշումն անելուց անմիջապես հետո և անշուշտ այն միջանկյալ երկրում, որտեղ կմնաք որոշ ժամանակ, մինչև Միացյալ Նահանգներ ժամանելը:

Ձեզանից սպասվում է, որ ընդունակ լինեք ապրել ինքնուրույն, առանց մշտական օգնության և դրիք զգալու սովորել հույս դնել միայն ձեր վրա և ապրելու միջոցներ հայթայթել ձեր ընտանիքի համար: Հաջողությունը լայն չափով կախված է նրանից, թե ինչքան լավ դուք կընտելանաք ամերիկյան ապրելակերպի, վարքի, օրենքների և կանոնների հետ: Ձեր սեփական արժեքներից ձեռք քաշելու կարիք չունեք, բայց պետք է նաև հասկանաք ամերիկյան արժեքները, որպեսզի համակերպվեք ԱՄՆ-ի կյանքին: Չնայած, որ ինամակալների և վերաբնակեցման աշխատողների մեծ մասը հասկանում են, որ գաղթական լինելը դժվար գործ է և համակերպվելը ժամանակ պահանջող, գաղթականներից այնուամենայնիվ կսպասեն ինքնուրույն ապրուստի միջոց հայթայթելու շուտափույթ ձեռք բերում:

բ. Վերաբնակեցման նպաստ

Յուրաքանչյուր կամավոր գործակալություն ԱՄՆ ներգաղթողների գործերն ընթացքի մեջ է դնում գաղթականների ժամանումից առաջ և որոշակի նախնական աշխատանքներ է տանում նրանց ընդունելության և այլ տեսակի ծառայությունների հետ կապված: Այսօրվա տվյալներով, կամավոր գործակալությունները ներգաղթող յուրաքանչյուր գաղթականի հետ կապված գործերը ժամանումից առաջ ընթացքի մեջ դնելու և ժամանումից հետո նախնական

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ |

անմիջական ծախսերը հոգալու համար ֆեդերալ կառավարությունից միանվագ մի փոքր գումար է ստանում: Ցուրաքանչյուր ազգային կամավոր գործակալության հայեցողության է մնում, համաձայն պայմանավորվածության, որոշելու թե ի՞նչպես պետք է նպաստը օգտագործվի:

Քանի որ վերաբնակեցման պրոցեսը կարող է և՛ երկար և՛ թանկ նստել, իսկ կառավարության կողմից հատկացված նպաստը չբավականացնի ծածկել բոլոր ծախսերն ու կարիքները, կամավոր գործակալությունները հաճախ ստիպված են լինում լրացուցիչ օժանդակության համար դիմել ուրիշ կամավորների օգնությանը:

գ. Հովանավորող ներ: Ո՞վ է հովանավորողը:

Այս կամավորներից ոմանք անհատներ են կամ խմբեր, ինչպիսիք են միաբանություններ, սինագոգներ կամ էթնիկ ակումբներ: Այս անհատներին կամ անհատների խմբերին հաճախ անվանում են «հովանավորողներ»: Այս մարդիկ իրենց օգնությունն են առաջարկում կամովին: Նրանք հասկանում են գաղթականների առաջ ծառացած դժվարությունները, անսովոր համայնքի կյանքին համակերպվելու ընթացքում: Հատ հաճախ նրանք միջին եկամուտի տեր ամերիկացիներ են, որոնք լավ գիտեն աշխատանք ծարելը և այն պահելու միջոցները, հաշիվներ կատարելը, հարկ վճարելու հարցերը, ինչպես նաև երեխան դպրոց ուղարկելու դժվարությունները: Կամավորները չեն վարձատրվում ձեզ օգնելու համար և պարտավոր ել չեն: Նրանք միայն ուզում են օգտակար լինել:

Եթե գաղթականները գալիս են միանալու որևէ ազգականի կամ ընկերոջը, ապա կամավոր գործակալությունը կարող է դիմել նրանց, օժանդակելու և հովանավորելու իրենց բարեկամին, այնքանով, որքանով օժանդակում են բոլորովին անծանոթ «հովանավորները»: Հատ դեպքերում գաղթականները օժանդակություն կստանան առաջին հերթին անձամբ կամավոր գործակալության անձնակազմից: Այլ դեպքերում՝ վերը նշված այդ երկու աղբյուրների գուգացումից:

Հետևաբար, ձեր վերաբնակեցման համար, ձեր կամավոր գործակալության ձեռք առած կարգադրությունների համաձայն ձեր «հոգաբարձուն», այսինքն նա, ով պատասխանատու է լինելու ձեր անմիջական կարիքների հոգալուն, կարող է լինել կամավոր մի անձ կամ կամավոր մի խումբ, ձեր ընկերը կամ ազգականը կամ էլ կամավոր գործակալության ներկայացուցիչը: Բայց և այնպես, ձեր կամավոր գործակալության գերագույն պատասխանատվությունն է, որ ձեր անմիջական կարգները բավարարված լինեն: Ձեր առաջնահերթ հովանավորողը, ձեր կամավոր գործակալությունն է:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ |

դ. ժամանելուց

Միացյալ Նահանգներ ժամանելուց, ձեզ կոդիմավորեն օդանավակայանում, որտեղ կենթարկվեք ՄԱՀ մաքսատան ստուգմանը, կստուգեն ձեր փաստաթղթերը և կընդունվեք Ներգաղթի և Հպատակագրման Ծառայության (ՆՀԾ) կող մից: Եվ եթե դեռ պետք է շարունակեք ճանապարհ դեպի Վերջնական վայրը, ձեզ կօգնեն մինչև այդ թուիչքը: Զեր Վերջնական ժամանման վայրում ձեզ կոդիմավորի ձեր ազգականը, ընկերը, հովանավորոջ կամ Վերաբնակեցման գործակալության աշխատողը և ձեզ կտանեն ձեր բնակատեղը:

Զեզ կարող է տեղավորեն մեկ սենյակում, կամ ձեզ համար պատրաստված բնակարանում, կամ ստիպված կլինեք մնալ ժամանակավորապես մի ոչ թանկ հյուրանոցում, և կամ կտեղավորեն ձեզ մի ուրիշ գաղթականի ընտանիքում, ազգականների, ընկերոջ մոտ, կամ Վերջապես համայնքի մի որևէ անձնավորության մոտ: Եթե ժամանակավոր ապրելու համար տեղավորված եք մի ուրիշ ընտանիքի հետ, ձեր այնտեղ մնալու տևողությունը կախում կունենա ձեր արագ աշխատանք գտնելու ունակությունից:

Որպես Վերաբնակեցման պրոցեսի մաս, ազգականները, ընկերները, կամավորները, Վերաբնակեցման աշխատողները ձեզ կօգնեն ձեր սեղ գտնել նոր համայնքում: Նրանք նաև կօգնեն.-

1. Գտնել մշտական բնակարան:

2. Կօգնեն ձեզ ձեռք բերել Սոցիալ Ապահովության Կարտ (ԱԱԿ): Երբ կսկսեք աշխատանք որոնել, աշխատանքի համար դիմում լրացնելու ժամանակ ձեզ անհրաժեշտ կլինի այդ կարտը ունենալ, որպես կարևոր անձնական փաստաթուղթ:

3. Սովորել առևտուր անել այնպես, որ կարողանաք դրամ խնայել:

4. Սովորել օգտվել տեղական և իասարակական տրանսպորտից (ավտոբուս, տրամվայ), ընտելանալ ճանապարհներին տնից գնալու և տուն վերաբառնալու, ինչպես նաև ուրիշ հատուկ վայրեր:

5. Հասկանալ ամերիկյան սովորություններն ու օրենքը:

6. Օգնել ձեզ, ձեր երեխաներին դպրոց ընդունելու համար:

7. Խորհուրդներով և օժանդակելով, ձեզ աշխատանք գտնելու համար:

8. Ծանոթանալ համայնքի ձեր շրջապատում գտնվող այլ ծառայությունների հետ տարբեր նպատակների համար.-

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ |

ա. Բարեխոսել ձեզ համար, կամ եթե հարկավոր է տանել ձեզ առողջապահական կլինիկա բժշկական քննության համար: Հավանաբար, դուք հարկադրված կլինիկա բժշկական քննության ենթարկվել ԱՄՆ ժամանելուց անմիջապես հետո: Առողջապահական վկայականներ են երբեմն պահանջվում ամերիկյան աշխատատերերի կողմից, հասարակական դպրոցներում և սոցիալ գործակալությունների կողմից:

բ. Գտնել հասարակական կամ մասնավոր անգլերեն լեզու սովորելու ծրագրեր կամ կամավոր անգլերեն դասավանդել ձեզ:

Նրանք կարող են նաև, եթե անհրաժեշտ է, ձեզ հետ միասին շրջել ձեր տան մեջ ցոյց տալու համար գոյություն ունեցող առանձնահատկությունները կամ մատնացույց անելու, թե ինչ նյութեր կամ սարքեր վտանգավոր են և այցելել ձեզ միայն ձեր հարցերին պատասխանելու համար, կամ պարզապես օգնել ձեզ զգալ նոր համայնքի հարազատ մաս:

Հնարավորին չափ, օգնության համար առաջինը պետք է դիմեք՝ (1) ձեր ազգականին, ընկերոջը կամ կամավոր հովանավորողին (եթե անշուշտ եղել է մեկը, որ օգնել է ձեզ), ապա (2) կամավոր գործակալության տեղական կամ շրջանային գրասենյակ և վերջապես (3) եթե ոչ մի օգնություն չեք կարո- դաշել ստանալ ոչ մի տեղից, պարզապես անձամբ՝ ազգային գրա- սենյակից:

Հատ համայնքներում դուք օգնություն կարող եք ստանալ տեղական Սոցիալ Ծառայության գործակալություններից, որոնք պաշտոնապես կապված չեն համագոյային գաղթականների վերաբնակեցման գործակալությունների հետ: Տեղական բնակիչներին ծառայություն մատուցելուց բացի, այդ գործակալությունները կարող են օգտակար լինել նաև գաղթականներին:

Անկախ նրանից, թե ինչ է արվում ձեզ համար, կարևոր է ընդգծել, որ վերջիվերջ դուք եք պատասխանատու ձեր հաջող վերաբնակեցման համար: Զեզանից սպասվում է, որ ԱՄՆ-ում ձեր կյանքը վերակառուցելու համար նախաձեռնությունը դուք վերցնեք ձեր վրա: Ձեր հաջողությունը կլինի ձեր սեփական նվաճումը:

3. ԼԵԳԱԼ ԻՐԱՎԻՑԱԿ

ա. Գաղթականի իրավիժակ

ԶԼ 1-94: Երբ մտնում եք ՄՆ, դուք ունենում եք գաղթականի իրավիժակ (ստատուս): Երբ առաջին անգամ ոտք եք դնում Միացյալ Նահանգներ, Ներգաղթի և Հպատակագրման Ծառայությունը կհաստատի ձեր ԶԼ 1-94ը, որը իրավունք է

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ |

Վերապահում ձեզ բնակվել և աշխատել ԱՄՆ-ում: Այս կարտը ամենակարևոր փաստաթուղթը կլինի ձեզ համար մինչև մշտական բնակման (կանաչ կարտ) ստանալը: Ապահով պահեցեք այն և աշխատեցեք չկորցնել: Այս փաստաթողթի կրկնօրինակը պետք է ունենաք ձեր ոեկորդների մեջ: Կորցնելու դեպքում, կրկնօրինակը հարկավոր բոլոր տեղեկությունները կունենա փոխարենը ստանալու համար: Այդ կարտը ձեր «Օտարի Գրանցման Համարը» (Զիկրլ Սբակվմաքմակը Լւ'զբս) ունի, Զ տառով սկսվող ութանիշ մի թիվ: Օտարի գրանցման Համարը ընդհանրապես հայտնի է որպես «Զ համար»: Ներգաղթի և Հպատակագրման Ծառայությունը ձեր փաստաթողթերը պահում է այդ համարի տակ:

Մի քանի բաներ, որոնք պարտավոր եք իմանալ «գաղթականի իրավիճակի» մասին

1. Գաղթականներն այս երկրի օրինավոր բնակիչներից են և կարող են «գաղթականի իրավիճակ»ի տակ ապրել այնքան, ինչքան կամենում են: Սակայն նրանք իրավունք են ստանում իրենց իրավիճակը վերածել «Մշտական Օտար Բնակչի» վիճակի, ԱՄՆ-ում մեկ տարի ապրելուց հետո, պայմանով, որ չեն խախտել ՄՆ-ի օրենքները:

2. Եթե անհրաժեշտ է, գաղթականները կարող են ծանապարհորդել ԱՄՆ-ից դուրս, բայց սկզբում պետք է Ներգաղթի և Հպատակագրման Ծառայությունից (ՆՀԾ) ձեռք բերեն «Գաղթականի ծանապարհորդային Փաստաթուղթ» ը: ՆՀԾ-ն վարձ է պահանջում այդ դիմումին ընթացք տալու և որոշում ընդունելու համար: Այս փաստաթուղթը իրավունք կտա ձեզ գաղթականի իրավիճակի տակ վերընդունվել ԱՄՆ: Սակայն խնդրում ենք ձեզ խորհրդակցել ձեր կամավոր գործակալության հետ ձեր ծանապարհորդությունը ծրագրելուց առաջ: Գոյություն ունեն մի քանի կանոններ, որոնց մասին դուք տեղյակ պետք է լինեք: Օրինակի համար, եթե ուզում եք ծանապարհորդել դեպի ձեր ծննդավայրը, այդպիսի այցը կիսակասի ձեր գաղթականի իրավիճակի դիմումին: Դա ԱՄՆ-ի Ներգաղթի իշխանությունների կողմից կդիտվի որպես ձեր ԱՄՆ-ի գաղթականի իրավիճակից կամավոր հրաժարում և կարող է թույլ չտրվի ձեզ նորից մտնել ՄՆ.

Բացի այդ, ձեր ծննդավայրը կարող է թոյլ չտա ձեզ վերադառնալ ՄՆ: Մուտքի վիզա պետք է ձեռք բերեք այն երկրից, որտեղ ուզում եք այցի գնալ և այդ երկիրը կարող է հրաժարվել ձեզ վիզա տալուց: Ձեր կամավոր գործակալությունը կարող է օգտակար լինել ձեզ օտար երկիր մեկնելու համար անհրաժեշտ ձևակերպումները լրացնելու գործում գաղթականի ծանապարհորդային փաստաթողթի համար ՆՀԾ դիմելիս:

3. Գաղթականները իրավունք ունեն արտասահմանում գտնվող իրենց ամուսինների կամ անչափահաս չամուսնացած երեխանների անունից դիմում ներկայացնել իշխանություններին, ԱՄՆ-ում իրեն «միանալու» թույլտվություն ստանալու համար: Այս պրոցեդուրան հայտնի է «Վիզա-93» անվան տակ:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ |

Գաղթականների համար անմիջական մտահոգության առարկա լինելու պատճառով, այս պրոցեդուրան մանրամասնորեն նկարագրվում է հաջորդ պարբերության մեջ:

բ. Վիզա-93

Միանալ ցանկացող ամուսիններ և անչափահաս չամուսնացած զավակներ: 1980 թվի Գաղթականական Ակտի պարագրաֆ 207 (գ) (2)

Միացյալ Նահանգների կառավարությունը հասկանում է, որ բազմաթիվ գաղթականներ իրենց ծննդավայրերից փախչելով հածախ այնտեղ են թողնում կամ ինչ որ ձևով բաժանվում են իրենց ամուսիններից և զավակներից: Գոյություն ունեցող պրոցեդուրանների համաձայն իենց որ գաղթականները հասնում են ԱՄՆ, կարող են դիմել իրենց ընտանիքի այդ անդամներին Ամերիկա բերելու համար:

Այն գաղթականները, որոնք ամուսին կամ անչափահաս չամուսնացած երեխաններ ունեն արտասահմանում, անկախ իրենց ազգությունից կամ ներկա ապրած երկրից պետք է իրենց կամավոր գործակալությանը հայտնեն և օգնություն խնդրեն նրանց օգտին «Վիզա-93» ձևը լրացնելու համար:

«Վիզա-93»ը ընդունելություն է շնորհում միայն գաղթականի ամուսնուն կամ անչափահաս չամուսնացած զավակներին: Դա չի երաշխավորում, որ ամուսինը կամ երեխանները իրենց ներկա երկրի տեղական կառավարության ներկայացուցիչների կողմից կթոյլադրվեն թողնել երկիրը:

Գաղթականները կարող են դիմել «Վիզա-93»-ի համար միայն ԱՄՆ Ժամանելուց հետո և միայն եթե ամուսնությունը տեղի է ունեցել **նախքան** իրենց որպես գաղթական Միացյալ Նահանգներ ընդունվելը: Այն գաղթականները, որոնք դիմում են «Վիզա 93»-ի համար, պետք է իրենց կամավոր գործակալություններին տեղյակ պահեն իրենց հասցեի փոփոխության մասին մինչև ամբողջ ընտանիքի վերամիանալը:

Վերամիանալու նպատակով եկող ամուսինները և անչափահաս չամուսնացած երեխանները «Վիզա 93»-ի պրոցեդուրայի համաձայն ԱՄՆ-ե ն ընդունվում որպես գաղթականներ:

գ. Մշտական Բնակչի Իրավիժակը (Ստատուս)

Զե 1-551> Մուտքի օրից հաշված մեկ տարի ԱՄՆ-ում ապրելուց հետո գաղթականները իրավունք են ձեռք բերում մշտական բնակչի իրավիժակի համար դիմելու: Ոչ մի վարձ չի պահանջվում վճարել ՆՀԾ-ին, գաղթականի իրավիժակը մշտական բնակչի իրավիժակի փոխելու համար դիմումը ընթացքի մեջ դնելու համար: Նրանք պետք է դիմեն ՆՀԾ-ի այն գրասենյակը, որը իրավասու է իրենց ապրած շրջանի համար: Այս իրավիժակի փոփոխման հետ, գաղթականները ստանում

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխի ।

Են ձև Կռոօ-ը: Դա մի փայլուն կարտ է տիրոջ ֆոտոնկարով, որը հայտնի է «կանաչ կարտ» անվան տակ: Մշտական բնակիչի իրավիճակը ինքնաբերաբար չի տրվում: Գոյություն ունեցող կամավոր գործակալությունները օգտակար կարող են լինել ձեզ լրացնելու հարկավոր թղթերը և այն հանձնել ՆՀ-ին: Քանի որ կամավոր գործակալություններն ու ՆՀ-ն գտնվում են աշխատանքային փոխհարաբերությունների մեջ, և գիտեն ինչ է պահանջվում, այդպիսով կարող են կանխել անցանկալի բարդությունները:

Ահա մի քանի կետեր, որոնք պետք է իմանալ «մշտական բնակիչի իրավիճակի» մասին.

1. Մշտական օտար բնակիչները, ինչպես անունն է թելադրում, համարվում են ԱՄՆ-ի մշտական բնակիչներ: Նրանք կարող են իրենց ամբողջ կյանքը անցկացնել այդ իրավիճակի տակ առանց երբեք հպատակագրման միջոցով ԱՄՆ-ի քաղաքացի դառնալու:

2. Մշտական բնակչի իրավիճակում գտնվող օտարերկրացիները կարող են ծառայել ՄՆ-ի զինված ուժերի շարքերում:

3. Մշտական բնակիչները կարող են ծանապարհորդել ԱՄՆ-ից դուրս, սակայն նախքան մեկնելը ՆՀ-ից պետք է ձեռք բերեն «նորից մտնելու թույլավություն»: Այս փաստաթուղթը ուժի մեջ է 2 տարի: ՆՀ-ը վարձ է պահանջում այս դիմումը ընթացքի մեջ դնելու համար: Որևէ երկիր այցելելու համար անհրաժեշտ է այդ երկրի համար մուտքի վիզա ձեռք բերել: Կանադա և Մեքսիկա այցելելու համար «կանաչ կարտը» բավական է. (Ոչ մի «նորից մտնելու թույլավություն» կամ վիզաներ պետք չեն:)

4. Մշտական բնակվելու իրավիճակ ունեցող անձիք կարող են խնդրագիր ներկայացնել ՆՀ-ին, իրենց ամուսիններին կամ չամուսնացած բոլոր տարիքի որդիներին և դստրերին ԱՄՆ մշտական գալու օգտին: Այդ խնդրագրի հաստատման դեպքում, ՄՆ-ի ներգաղթի օրենքի համաձայն, ՆՀ-ը նրանց կտա «երկրորդ կարգի նպաստ ստացող անձնավորության» իրավիճակ: Այս ձևի վիզաների քանակը սահմանափակ է և կարող է շատ ամիսներ կամ նույնիսկ տարիներ տևել, մինչև ամուսնու կամ չամուսնացած որդիներին կամ դստրերին թույլատրի մուտք գործել ԱՄՆ որպես գաղթականների:

Դ. Քաղաքացիության իրավիճակ (Ստատուս)

Ամերիկյան քաղաքացիությունը մենաշնորհ է, ոչ թե իրավունք կամ պարտականություն: Գաղթականները իրավունք են ստանում դիմել ՄՆ-ի քաղաքացիության համար Ամերիկա մուտք գործելուց 5 տարի հետո: Պայմաններից մի քանիսը հետևյալներն են.-

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ |

- 1. Աշտական բնակչի իրավիրակ (կանաչ կարտ) ունենալը:**
 - 2. ԱՄՆ-ում ապրած լինել ընդհանուր գումարով ոչ պակաս քան 30 ամիս, ոչ ավելի քան 6 ամիս միաժնվագ բացակայությամբ: (Եթե դուք ցանկանում եք ՄՆ-ը թողնել ավելի քան 6 ամիս, ժամանակով, ապա դուք պետք է տեղեկանաք, թե դա ինչպես կարող է անդրադառնալ ձեր քաղաքացի դառնալու հեռանկարի վրա):**
 - 3. Երբեք դատված չլինել որևէ լուրջ հանցանքի համար:**
 - 4. Կոմունիստական կուսակցության և ամավոր անդամագրված չլինել:**
 - 5. Հիմնական գիտելիքներ ունենալ ՄՆ-ի պատմության և կառավարության մասին:**
 - 6. Որոշ չափով տիրապետել անգլերեն լեզվին (այսինքն ի վիճակի լինել հոսել, գրել և կարդալ):**
 - 7. Ունենալ լավ բարոյական նկարագիր:**
 - 8. Առնվազն 6 ամիս ապրած լինել Նահանգում, որտեղ դիմում եք քաղաքացիության իրավիրակի համար:**
- Միացյալ Նահանգների քաղաքացիություն ստանալու համար դիմումները պետք է ներկայացնել ՆՀԾ-ը: Երդման տակ տեղի ունեցած հարցազրույցի արդյունքից է կախված տվյալ անձնավորությանը ՄՆ-ի քաղաքացիություն շնորհվելու է թե ոչ: Վերոհիշյալ հարցի շուրջ լրացուցիչ տեղեկություն ձեռք բերելու համար կարող եք դիմել ՆՀԾ-ի գրասենյակ, կամ ձեր կամավոր գործակալությանը: ՆՀԾ-ը գանձում է որոշ գումար քաղաքացիության համար դիմումներին ընթացք տալու համար:
- ՄՆ-ի քաղաքացիություն ունեցող անձնավորությունները օգտվում են որոշ մենաշնորհներից: Օրինակի համար, որպես նատուրալիզացված քաղաքացի իրավունք ունեք ստանալ ՄՆ-ի անձնագիր: Խնդրում եմ նշեք, որ վիզաներ են անհրաժեշտ շատ երկրներ մուտք գործելու համար: Որպես նատուրալիզացված քաղաքացի ձեզ թույլատրվում է մասնակցել ըն-տրություններին, և որպես ՄՆ-ի նատուրալիզացված քաղաքացի դուք կարող եք դիմել ՆՀԾ, ամուսինների, ծնողների, ամուսնացած կամ ամուրի զավակների, ազգականների համար: Այս դիմումների համար լրացուցիչ տեղեկություններ կարող եք ձեռք բերել ՆՀԾ-ի գրասենյակից կամ ձեր կամավոր գործակալությունից:

4. ՄԻ ՔԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԽԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Առաջին մի քանի ամիսները Միացյալ Նահանգներում շատ կարևոր են և հաճախ դժվար: Անկախ նրանից, թե ինչ լսած կլինեք Մն-ի կյանքի մասին, կարող է հայտնաբերեք, որ իրականությունը տարբեր է: Գուցե պետք կլինի վերաբնակվել ձեր ունեցած պատկերացումները: Փորձառությունը ցույց է տալիս, որ վերաբնակվելու և վերջնական տեղավորվելու պրոցեսին զգալի խոշոնդուր հանդիսացող պատճառներից մեկը եկող ների անհրագործելի ակընկալումներն են:

Գաղթականները չպետք է ենթադրեն, որ հովանավորողները կամ կամավոր գործակալությունները ուտեստեղ են, բնակարան և այլ տեսակի օգնություն են հայթայթելու անվերջ ժամանակով, որ իրենց առաջին աշխատանքը կլինի բարձր վարձատրումով, կամ առընչված կլինի իրենց նախորդ մասնագիտության հետ, որ կամավոր գործակալությունները կվճարեն իրենց կրթության համար, որ կարող են հրաժարվել մեկ աշխատանքից և շարունակել տնտեսական օժանդակություն ստանալ կամավոր գործակալությունից:

Ստորև թվարկվում են մի քանի կարևոր փաստեր, որոնք հաճախ սխալ են մեկնաբանվում որոշ գաղթականների կողմից, որը կարող է նույնիսկ իրենց հիասթափեցնել: Լավ է տեղյակ լինել այդ փաստերի մասին և հիշել, որ դժվարությունների մեծ մասը լուծվում է ժամանակով և համբերությամբ:

1. Որոշ գաղթականներ հաճախ կարծում են, թե վերաբնակեցման կամավոր գործակալություններն են իրենց ԱՄՆ բերել, և հետևաբար հոգ են տանելու մինչև վերջ: Սա անհասկացողություն է: ԱՄՆ-ում վերաբնակվելու համար գաղթականները դիմում են իրենց հոժար կամքով և պատասխանատու են իրենց արարքների համար: Կամավոր գործակալությունները օգնում են դիմումները ընթացքի մեջ դնելով, նրանցից կախված պրոցեդուրաներին օգնելով, ինչպես նաև գաղթականների ժամանումից հետո նրանց վերաբնակեցնելով: Այնուամենայնիվ, կամավոր գործակալությունները գաղթականներ չեն բերում ԱՄՆ, գաղթականները դիմում են գալու համար, անհրաժեշտության դեպքում նրանց պարտքով դրամ է տրվում Միացյալ Նահանգներ գալու համար, և թույլատրվում են ՄՆ կառավարության կողմից:

2. Ամերիկայի Միացյալ Նահանգներ ժամանելուց քիչ ժամանակ անց, որոշ գաղթականներ նախազգում են, որ անընդունակ կլինեն հարմարվել ԱՄՆ-ի կյանքին, կամ հուսախաք են լինում տեսնելով, որ իրենց նոր կյանքը բավականաշափ արագ չի դասավորվում: Դա ծիշտ ժամանակն է դիմելու կամավոր գործակալության խորհրդին ու օգնությանը: Սակայն պետք է նաև գիտակցել, որ վերադառնալ այնտեղ, որտեղից եկել եք կամ գնալ որևէ այլ երրորդ տեղ միշտ չեք, որ հնարավոր է: Դա կախում ունի գաղթականի տնտեսավիճակից և գնալիք երկրի գաղթականական օրենք- ներից: Կամավոր գործակալությունները անկարող են հարթել այդ

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ |

Խնդիրները: Իր եկած երկիրը նորից վերադառնալու համար գաղթականի դիմումին ընթացք տալը Միացյալ Ազգերի Գաղթականների Բարձրագույն Կոմիսիայի (ՄԱԳԲԿ) գրասենյակի գործն է:

3. Կամավոր գործակալությունները ոչ մի պարտականություն չունեն գաղթականներին օգնելու, եթե նրանք իրենց սկզբնական բնակատեղից տեղափոխվում են այլ վայր: Դա այդպես է նույնիսկ, եթե նրանք վերադառնան իրենց սկզբնական բնակատեղին: Լավ կլիներ Ամերիկա ժամանելուց առաջ տեղեկացնել կամավոր գործակալությունը ՄՆ-ում ունեցած ձեր ազգականների և ծանոթների մասին: Կամավոր գործակալությունը կաշխատի ձեզ տեղավորել նրանց շրջապատում:

4. Կամավոր գործակալությունները միջոցներ չունեն ձեր կրթության համար վշարելու (Տես կրթություն չափահասների համար գլուխը):

5. Որոշ գաղթականներ կարծում են թե բժշկական խնամքը ձրի է ԱՄՆ-ում: Դա սխալ հասկացողություն է: Սովորաբար բժշկական ապահովագրություն կարող եք ձեռք բերել ձեր աշխատատիրոջ միջոցով, կամ ինքներդ կարող եք գնել ձեր սեփական բժշկական ապահովագրությունը: Բժշկական խնամքի ծախսերի և վճարման վերաբերյալ տեղեկություն կարելի է ստանալ ձեր կամավոր գործակալություններից, հովանավորողից, ընկերներից և ազգականներից, ինչպես նաև հասարակական առողջապահության պաշտոնյաներից (Տես, Ամերիկյան Առողջապահության Սիստեմը):

6. Որոշ գաղթականներ երբեմն կարծում են, թե կամավոր հովանավորողները աշխատավարձ են ստանում իրենց օգնելու համար: Դա ծիշտ չէ: Այն անհատները կամ խմբերը որոնք կամովին համաձայնվում են օգնել գաղթականներին, նրանց օգնելով վերաբնակվել ԱՄՆ-ում և այդ գործը անում են միմիայն բարեսրտությունից և բարիք անելու ցանկությունից դրդված:

7. Գաղթականները ՄՆ-ի օրենքներին ենթարկվելուց ազատված չեն: Դուք և միայն դուք եք պատասխանատու որևէ կամ բոլոր ձեր կողմից արված պարտքերի համար: Բացի դրանից, ոչ ոք բացի ձեզանից չի կարող պատասխանատու լինել ձեր կողմից կատարված հանցավոր գործունեության համար: (Տես, Միացյալ Նահանգների Կառավարությունն ու Օրենքը):

5. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՐՊՈՒՄ

Յուրաքանչյուր անձնավորություն, որը գնում է մի բոլորովին այլ երկիր ապրելու, այնտեղ հասնելուց հետո բավական ժամանակ որոշ աստիճանի կուլտուրական ցնցում կունենա: Կուլտուրական ցնցումը կարելի է բնորոշել որպես

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ |

անօգնականություն, հուսախաբության մի զգացում այնպիսի մի երկրում, որտեղ ոչ լեզուն է հարազատ, ոչ էլ կուլտուրան:

Բացի դրանից, կուլտուրական ցնցում ստացվում է նաև բոլորովին նոր և տարբեր ապրելակերպի հետ բախվելուց, նաև նույնպես անկախ ապրելու անկարողությունից, ինչպես հարազատ երկրում էր:

Կուլտուրական ցնցումի նշաններից են ամենօրյա պարտականությունները կատարելու անկարող լինելուց առաջացած հուսախաբությունը, այն պարտականությունները որոնք առվում էին հարազատ երկրում, այն են՝ խանութ գնալ, հասարակական տրանսպորտից օգտվել, հասարակական հեռախոս օգտագործել կամ հասարակական տեղ երրում եղած նշանների իմաստը հասկանալ: Կուլտուրական ցնցման այլ նշաններից կարող են լինել ընտանիքի անդամների ստանձնած նոր պարտականությունները նոր երկրում, ինչպես նաև փոքրամասնությունն կազմող որոշ ազգությունների մարդկանց խմբերի ցածր հանդուր-ժողականությունը կամ անհամբերատարությունը:

Այնուամենայնիվ կուլտուրական ցնցման գլխավոր պատճառը կարող է լինել այն, որ անկարող եք հաղորդակից լինել ձեր ընկերների և հարազատների հետ, մենակ օտար երկրում ապրելուց ձեր ունեցած զգացումներն ու փոխազդեցությունները:

Չնայած որ կուլտուրական ցնցումը ժամանակ առ ժամանակ կարող է ծնշիչ դառնալ, շատ օգտակար կարող է լինել իմանալ թե ինչպես վարվել այդպիսի վիճակից դուրս գալու համար: Եթե կուլտուրական ցնցման վիճակ եք ապրում, ապա ստորև նկարագրում ենք որոշ առաջարկություններ այդպիսի վիճակից դուրս գալու համար:

1. Մի թույլ տվեք ձեր սահմանափակ անգլերեն խոսելու կարողությունից առաջացած անհարմար զգացումը խոչընդոտի ձեր անգլերեն խոսելու փորձերին:

2. Հնարավորին չափ շատ և շատ սովորեցեք անգլերեն լեզուն և աշխատեցեք օգտագործել այն ամեն պատեհ առիթներին:

3. Աշխատեցեք ունենալ ամերիկացի ընկերներ և ժամանակացնել միասին:

4. Ուսումնասիրեցեք ամերիկյան նիստուկացը ամերիկացիների պես ապրելով և միացեք նրանց հետ և գործի մեջ և զվարժության ժամին:

5. Դիտեցեք հեռուստատեսության հաղորդումներ և ձեր ամերիկացի ընկերների հետ քննարկեցեք ծրագրերն ու ոեկամները, որոնք կարող են բացատրել թե ինչպես ամերիկյան հեռուստատեսությունը անդրադառնում է ամերիկյան կուլտուրային և արժեքների վրա:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ |

6. Մասնակցեցեք անգլերեն լեզվի դասընթացներին, որտեղ կարող եք հանդիպել այնպիսի մարդկանց, որոնց հետ կարողանաք կիսել կամ քննարկել ձեր դժվարությունները:

7. Անդամակցեցեք և հաճախ այցելեցեք ձեր ազգային անցյալն ու ժառանգությունը գնահատող և պս հպանող կազմակերպություններից մեկի հետ, որտեղ դուք կարող եք օժանդակություն գտնել ձեր կարիքների համար: Քանի որ փոքրամասնություն կազմող ազգությունների ժառանգությունն ու կուլտուրան պահպանելը քաջալերվում է ՄՆ-ում, կան այնպիսի կազմակերպություններ որոնք հաճախակի կազմակերպում են ինչպես հասարակական այնպես էլ ժամանցային միջոցառումներ, ինչպես նաև այլ տեսակի միջոցառումներ ինչպիսիք են անգլերեն լեզվի դասընթացներ և կուլտուրական այլ տեսակի միջոցառումներ:

8. Ընդգրկվեցեք այնպիսի գործունեությունների մեջ, որը ձեզ հաճույք էին պատճառում ձեր եկած երկրում:

9. Խոսեցեք և խորհրդակցեցեք ձեր հովանավորողի կամ ընկերոջ հետ այն դժվարությունների մասին, որոնք ունենում եք նոր կուլտուրային հարմարվելու գործում:

10. Կանոնավոր ձեռվ խոսեցեք ձեր ընտանիքի անդամների հետ: Նրանցից յուրաքանչյուրը հավանաբար կունենա նույնպիսի կուլտուրական ցնցում տարբեր ժամանակներում տարբեր ձևերով: Նույնիսկ երեխաները կուլ- տուրապես հարմարվելու դժվարություն են ունենում:

11. Զնայած կարող է հուսահատություն զգաք ժամանակ առ ժամանակ, ինքներդ ձեզ համբերող եղեք: Նոր կուլտուրային հարմարվելը ժամանակ է պահանջում:

F. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք նկարագրեցինք վերաբնակեցման պրոցեսը փորձելով գաղթականներին զաղափար տալ թե ինչ կարող են իրենք ակընկալել: Կամավոր գործակալությունները ենթադրում են, որ գաղթականները բարձր ձգտումներ պետք է ունենան, և դրա հետ ազատությունն ու հնարավորությունը բարձրանալու այնքան՝ ինչքան իրենց ունակություններն ու քրտնաշան աշխատանքը թույլ կտան իրենց բարձրանալու: Գաղթականները պետք է հասկանան, որ այդ ձգտումները չեն իրականանալ անմիջապես տեղ հասնելուն պես:

Նոր կուլտուրայի հետ համակերպվելը շատ մարդկանց համար կարող է լինել դժվար և հոգնատանց: Փորձը ցույց է տալիս, որ ավելի շատ դժվարությունների են հանդիպում այն գաղթականները որոնք տեղ հասնելուց հետո շատ քիչ ժամանակում

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ |

շատ մեծ սպասելիքներ են ունենում. նրանք կարող են հուսախաբ զգալ, դժգոհ կամ տիկուր լինել ենթադրելով, որ իրենց հովանավորողը սպասածին չափ օգնություն ցույց չի տվել, կամ թերևս իրենց ձեռնարկած առաջին աշխատանքը իրենց նախընտրած առևտրի գծով կամ մասնագիտությամբ չէր և կամ առաջին բնակելի տան պայմանները այնքան չէին, որքան իրենք էին ակնկալում:

Ընդհանուր առմամբ վերահիշյալ բոլոր դժվարությունները բարելավվում են քրտնաշան աշխատանքով, իամբերությամբ և ժամանակի ընթացքում: Վերաբնակեցման այս ամբողջ պրոցեսը ծիշտ հասկանալով, գաղթականները կարող են իրենց ամբողջ ուժերն ու էներգիան կենտրոնացնել իրենք իրենց օգնելով հասնելու ինքնաբավարման իրենց նպատակին և անձնական ձգտումներին:

ԳԼՈՒԽ ॥

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ա. ՆԱԽԱԲԱՆ

Եթե որպես գաղթականներ եք գալիս ԱՄՆ, պետք է գիտակցեք, որ Ամերիկացիները յուրաքանչյուր անձի մեջ գնահատում են «ինքնավստահությունը»: Եթե դուք աշխատունակ եք, ձեզնից կսպասեն, որ իսկույն ընդունվեք որևէ աշխատանքի, որպեսզի հնարավորին չափ չուտ կարողանաք ապահովել ձեր ապրուստը, եթե նույնիսկ այդ աշխատանքը որևէ կապ չունի ձեր նախկին աշխատանքի հետ և կամ այնքան էլ բարձր վարձատրվող աշխատանք չէ: Ամերիկացիները հավատացած են, որ այն անձնավորությունները որոնք աշխատունակ են, պետք է աշխատեն և չպետք է տնտեսապես կախված լինեն ուրիշներից:

Աշխատանքի տեղավորելու ժառայությունները կարող են օգտակար լինել ձեզ աշխատանք գտնելու հարցում: Սակայն, քանի աշխատանք գտնելը ՄՆ-ի կառավարության կողմից երաշխավորված չէ, ձեզ հովանավորող անձը կամ ձեզ հովանավորող գործակալությունը, ձեր անձնական նախաձեռնությունը և կարողությունները շատ կարևոր են որոշելու համար, թե արդյոք դուք կգտնեք ձեզ համապատասխանող որևէ աշխատանք:

Հնարավոր է, որ առաջին աշխատանքը ձեր մասնագիտությամբ չլինի, բայց ԱՄՆ-ում գնահատում և հարգում են այն անձնավորություններին, ովքեր թեկուզ ժամանակավորապես կատարում են որևէ աշխատանք, մինչև հնարավորություն ունենան ավելի լավ աշխատանք գտնելը: Քանի որևէ աշխատավայրից լավ հանձնարարական ստանալու համար գոնե վեց ամիս աշխատելը նախընտրելի է, բայց և այնպես մարդիկ ազատ են որևէ ժամանակ նոր աշխատանքի համար դիմելու եթե գտնում են, որ դա հարմար է իրենց:

Աշխատանքի մեթոդներն ու պրոֆեսիոնալ պահանջարկները շատ հաճախ տարբեր են երկրից երկիր, և նույնիսկ հնարավոր է, որ որևէ կոնկրետ աշխատանքի համար ծցգրիտ համարժեք գոյություն չունեն: Դուք պետք է պատրաստված լինեք ընդունելու որևէ աշխատանք, նույնիսկ եթե այդ աշխատանքը միևնույն հեղինակությունը չունի համեմատած այն աշխատանքի հետ, որ դուք կատարում էիք ձեր երկրում: Առաջխաղացման շատ հնարավորություններ կան այն անձանց համար, ովքեր կկարողանան ծկունություն ու կարողություն ցուցադրել: Մարդիկ

BEST COPY AVAILABLE

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ II

գնահատում ու հարգում են այն անձանց, ովքեր ժրացան և ինքնուրույն աշխատանքով սկսնակի մակարդակից բարձրանում են բարձր դիրքերի:

Աշխատանքը շատ կարեւոր է ԱՄՆ-ում: Ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք աշխատում են: Կանայք կազմում են ԱՄՆ-ի աշխատութի կեսը և կատարում են բոլոր մակարդակների, փորձառություն չպահանջող, փորձառություն պահանջող և պրոֆեսիոնալ աշխատանքներ: Աշխատում են նաև և երիտասարդներ և ծեր մարդիկ: Երեխաներին փոքր հասակից սովորեցնում են աշխատանքի արժեքը և ինքնուրույն լինելը: Օրինակի համար, նրանք կարող են ամեն առավոտ նախքան դպրոց գնալը օրաթերթեր բաժանել, դպրոցի դասերից հետո կամ ամառնային արձակուրդների ժամանակ կես դրույք աշխատել: Նրանք ոչ միայն սովորում են աշխատանքի արժեքը, ներառյալ ձեռքի աշխատանքը, նրանք նաև սովորում են ինչպես վերաբերվել դրամի հետ և լինել ինքնուրույն և ինքնավստահ: Այս ինքնավստահ լինելու ցանկությունը շատ հաճախ տարիքավոր անձնավորություններին ստիպում է թոշակի չգնալ նույնիսկ 65 տարին անցնելուց հետո անգամ:

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ա. Փորձառություն չպահանջող աշխատանքներ

Ամերիկյան աշխատանքի մեջ նոր մտնող մարդկանցից մեծ մասը սկզբնական շրջանում կատարում են ցածր մակարդակի աշխատանքներ և կամ զբաղեցնում են որակ չպահանջող պաշտոններ: Շատ անձիք, ներառյալ Ամերիկացիները, որոնք ուսանում են կամ հաճախում վերապատրաստման դասընթացների, աշխատում են փորձառություն չպահանջող աշխատանքներում մինչև իրենց ուսումը ավարտելը. Նրանք հետագա այդ աշխատանքի հանձնարարականը օգտագործում են իրենց նոր ձեռք բերած արհեստի կամ մասնագիտության գծով աշխատանք գտնելու համար:

Անգլերեն լեզուն անբավարար իմանալը չպետք է արգելվ լինի ձեզ ընդհանրապես աշխատելուց, բայց դա արգելվ կիանուիսանա ավելի լավ աշխատանք գտնելու համար: Շատ նորեկներ և ներգաղթողներ աշխատելու հետ զուգահեռ Անգլերեն են սովորում կամ հաճախում են նոր մասնագիտություն ձեռք բերելու դասընթացներին, որպեսզի հետագայում հնարավորություն ունենան ավելի բարձր մակարդակի աշխատանք գտնել:

Փորձառություն չպահանջող աշխատանքներ կարելի է գտնել համարյա աշխատանքային բոլոր ճյուղերում լինի լրիվ կամ կես դրույք: Զեր լրիվ ապրուստը ապահովելու համար, երբեմն նույնիսկ անհրաժեշտ կլինի աշխատել մեկից ավելի տեղերում:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

Ակսնակ մակարդակի աշխատանքները սովորաբար վճարվում են ժամական աշխատավարձով և կամ գործարքային սկզբունքով:

Ժամական վարժ. Ժամականով վճարումները հիմնված են աշխատած ժամերի ծագրիտ քանակի վրա: Հատ աշխատավայրերում սովորաբար վարչությունը գործության շաբաթվա ժամերի քանակը 35-ից 40 ժամ է (կամ յուրաքանչյուր օր յոթից ութե՛ւ ժամ): Այն աշխատավորները որոնք ժամական վճարով են աշխատում, մեկ շաբաթվա ընթացքում թույլատրված ժամերի քանակից ավելի աշխատելու դեպքում արտաժամ ստանալ: Մեկ շաբաթվա ընթացքում 40 ժամից ավելի աշխատելու դեպքում, ժամական վարձը այդ ավելորդ ժամերի համար վճարվում է մեկ և կես անգամ ավելի: Աշխատավորները պետք է աշխատատերերի թույլատրությունը ունենան արտաժամ աշխատելու դեպքում վճարվելու համար: Պարզապես, առանց նախնական թույլատրության, արտաժամ կատարած աշխատանքը, ենթակա չէ վճարման:

Հավանական է, որ որոշ աշխատավայրերում արտաժամ աշխատանքը սովորական աշխատանքի մասը կազմի. այդպիսի դեպքերում աշխատավորները կստանան իրենց լրացուցիչ վճարը, բայց և այնպես անհրաժեշտության դեպքում իրենց իրավունք չի վերապահվել մերժել արտաժամ աշխատելը: Նախորոշ որոշված արտաժամ ժամերին աշխատանքից խուսափելը տվյալ աշխատանքից հեռացվելու պատճառ կարող է հանդիսանալ:

Ժամական աշխատավարձը տարբեր աշխատանքների համար տարբեր է: Փորձառություն չպահանջող աշխատանքները մեծամասամբ վճարվում են նվազագույն և կամ նվազագույնից մի քիչ ավելի բարձր ժամական աշխատավարձով: Նվազագույն աշխատավարձը դա այն գումարն է, որ աշխատատերերը պարտավոր են վճարել իրենց աշխատավորներին: Այդ որոշված է ֆեդերալ կառավարության կողմից: Մի քանի նահանգներ ունեն իրենց սեփական նվազագույն աշխատավարձի վերաբերյալ օրենքներ, որը մի քիչ ավելի բարձր է սովորական նվազագույն աշխատավարձից: Դուք կարող եք իմանալ ձեր ապրած նահանգի նվազագույն աշխատավարձի չափը, զանգահարելով նահանգի աշխատավարձի գրասենյակը: Նվազագույն աշխատավարձի օրենքի բացառություններ կարող են լինել միայն այն դեպքերում, երբ աշխատավորը աշխատանքի ընթացքում ստանում է հավելյալ վարձատրություն իր կատարած աշխատանքի համար (մատուցողների ստացած թեյանվերները, տարբեր սպասարկումների համար ստացած դրամական նվերներ), որոնք կազմում են սովորական աշխատավարձի մի մասը, ընդհանուր աշխատավարձը հասցնելով առնվազն նվազագույն աշխատավարձին:

Գործարքային աշխատանք. Գործարքային աշխատավարձը շատ յաճախ օգտագործվում է հավաքման արհեստանոցներում, մեծաքանակ արտադրություններում: Սա փաստորեն վաստակողին հաստատուն աշխատավարձով ապահովելուց բացի, յուրաքանչյուր հավելյալ արտադրանքի համար վճարում է

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

հավելյալ գումար: Գործարքային աշխատանքի հիմնական միջին նորման սովորաբար աշխատողին երաշխավորում է այնպիսի աշխատավարձով, որ նա կստանար եթե աշխատելու լիներ նվազագույն աշխատավարձով: Նախատեսված նվազագույն քանակից ավելի արտադրված յուրաքանչյուր միավոր արտադրանքը աշխատողի հավելյալ շահույթն է: Այս տեսակի աշխատավարձով աշխատելը ձեռնտու է և աշխատողին և աշխատատիրոջը:

բ. Փորձառություն պահանջող աշխատանքներ

Փորձառություն պահանջող աշխատանքները կամ արիեստ պահանջող աշխատանքները առնվազն պահանջում են տվյալ մասնագիտության մեջ որոշակի փորձ կամ կրթություն, ինչպես նաև որոշ չափով անգլերեն լեզու: Հմտություն պահանջող աշխատանքները սովորաբար ավելի բարձր վճարվող են քան հմտություն չպահանջող աշխատանքները և հմտության ավելանալուն հետ մեկտեղ շատ հաճախ բարձրանում է նաև աշխատավարձը: Ամերիկայում հմտություն պահանջող աշխատանքը կարելի է դիտել որպես կարիերա խոստացող աշխատանք, այսինքն այնպիսին, որը հնարավորություն է տալիս աշխատողին և պաշտոնապես բարձրանալու և բարձր աշխատավարձ ստանալու: Կախված աշխատանքի օյուղից, որոշ արիեստավորներ կարող են ավելի բարձր աշխատավարձ ստանալ, քան թե որոշակի պրոֆեսիոնալ պաշտոններ գրավող անձնավորությունները: Հմուտ արիեստավորների համար աշխատանք կարելի է գտնել աշխատանքային համարյա բոլոր ծյուղերում և այդպիսիներին մեծամասամբ աշխատանքի են ընդունում լրիվ դրույքով:

Մինչև հատուկ պատրաստվածություն ձեռք չբերեն, շատ անձիք իսկույն հնարավորություն չեն ունենում ընդունվել որպես հմուտ արիեստավորներ: Նույնիսկ հետագայում, որոշ փորձառություն ձեռք բերելուց հետո, աշխատատերերի համար սովորություն է աշխատողին տեղավորել հմտություն չպահանջող աշխատանքներում մինչև հմտություն պահանջող աշխատանքներում նշանակելը: Ձեր մասնագի- տության մեջ ցածր պաշտոնով սկսելով, դուք ժամանակի ընթացքում աստիճան նաբար կարող եք ավելի բարձր պաշտոնի հասնել լինի նույն աշխատավայրում լինի այդ ծյուղի այլ աշխատավայրերում: Այս պաշտոններում աշխատող անձիք սովորաբար նվազագույն աշխատավարձից ավելի բարձր աշխատավարձ են ստանում, ինչպիսի հիմունքով էլ որ աշխատելու լինեն՝ ժամանակն թե շաբաթական, և սովորաբար իրավունք են ձեռք բերում անհրաժեշտության դեպքում արտաժամ աշխատել ու ստանալ լրացուցիչ աշխատավարձ:

գ. Պրոֆեսիոնալ աշխատանքներ

Որոշ մասնագիտություններ ինչպիսիք են բժշկությունը, առամ-նաբուժությունը և իրավաբանությունը խիստ կարգավորված մասնագիտություններ են ԱՄՆ-ում: Որպես օտար հավակնորդի անհրաժեշտ է, որ դուք...

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

- Ենթարկվեք այնպիսի ակադեմիական պատրաստության, ինչպիսին ունենում են համապատասխան մասնագիտությունների մեջ աշխատող ամերիկացի մասնագետները:
- անցնեք գործնական ստուգարք:
- որևէ նահանգում տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար ձեռք բերեք համապատասխան վկայագիր կամ արտոնագիր:

Վերոհիշյալ այս պահանջարկների կապակցությամբ, այս օյուղերում աշխատել ցանկացող համարյա բոլոր օտար մասնագետները, մինչև համապատասխան վկայագիր կամ արտոնագիր ձեռք բերելը, կարիք կունենան հաճախել լրացուցիչ դասընթացների: Նկատի պետք է ունենաք, որ այդպիսի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար ուսման վարձ պետք է վճարեք: Վերոհիշյալ դասընթացներին մասնակցելու համար եթե կարիք ունեք ֆինանսական օգնության, ապա կարող եք դիմել տվյալ համալսարանի կամ ուսումնական հաստատությանը, ուսման վարձի չափի և կամ փոխ դրամ վերցնելու հնարավորությունների մասին տեղեկություններ ստանալու համար: Ի հակադրություն վերը նշված կարգավորված մասնագիտությունների, տարբեր հիմնարկություններում, ֆինանսական հաստատություններում, կառավարական աշխատատեղիներում և այլ տեղերում գոյություն ունեն մասնագիտական մակարդակի շատ աշխատանքներ, որտեղ պահանջվում է միայն կիսաբարձրագույն կրթություն: Սկսելով աշխատել այդպիսի մասնագիտությունների ցածր մակարդակի աշխատանքներում, ժամանակի հետ զուգընթաց դուք մեծ հնարավորություններ կունենաք ձեր գիտելիքներին համապատասխան հասնել բարձր մակարդակի կամ պաշտոնի:

Նկատի պետք է ունենաք, որ սկսնակ մակարդակի մասնագիտական աշխատանքները սկզբնական շրջանում ավելի քիչ են վճարվում քան արհեստավորները կամ փորձառություն պահանջող աշխատանքները, սակայն հետագայում նրանք ընդհանրապես ամենաբարձր վճարվող աշխատանքներն են: Պետք է նաև գիտակ լինեք այն փաստին, որ չնայած աշխատավարձը ժամանակի ընթացքում կավելանա, դուք կնկատեք որ սկզբում ավելի քիչ կտանաք քան նույն աշխատանքը կատարող մի այլ աշխատող, որը ավելի երկար ժամանակ է աշխատել այդ հիմնար- կությունում:

Բոլոր մասնագիտություններում անգլերեն լեզվի էֆեկտիվ օգտագործումը կարևոր հանգամանք է:

2. ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ա. Սոցիալ Ապահովություն

Սոցիալ Ապահովությունը թոշակի անցնելու ֆեղերալ կառավարության ապահովագրության ծրագիր է, որը վերաբերվում է համարյա բոլոր նրանց ովքեր աշխատում են: Բոլոր անձիք և աշխատավորները և աշխատաերերը հարկ են վճարում կառավարությանը: Նրանք ովքեր հիմնարկություններում են աշխատում, համապատասխան հարկը ուղղակի հանվում է նրանց աշխատավարձից: Ինքնուրույն աշխատող անձիք կամ հիմնարկատերերը նույնպես հարկ են վճարում, սակայն պատասխանատու են ինքնուրույն վճարել օգտագործելով հատուկ ձևեր (ֆորմաներ), որոնք կարելի է ձեռք բերել տեղական Սոցիալ Ապահովագրության գրասենյակներից: Բոլոր այն անձիք, որոնք ընդգրկված են Սոցիալ Ապահովագրության ծրագրի մեջ կարող են թոշակի անցնել 65 տարեկան հասակում և դիմելու դեպքում կարող են համապատասխան թոշակ ստանալ: Թոշակի անցնելը հնարավոր է նաև 62 տարեկան հասակում, սակայն այդ դեպքում թոշակի չափը կլինի պակաս: Թոշակի չափը կախված է տվյալ անձի աշխատավարձի և աշխատած տարիների քանակից: Սոցիալ Ապա- հովագրության սիստեմը օգնում է նաև այն աշխատողներին, որոնք անկարող կլինեն աշխատել (լինի ֆիզիկապես կամ հոգեպես): Անաշխատունակության վճարումների համար տարիքի սահմանափակում գոյություն չունի: Ավելի տեղեկություններ ստանալու համար դիմեցեք ձեր տեղական Սոցիալ Ապահովագրության գրասենյակը:

բ. Գործազրկության փոխհատուցումը

Գործազրկության փոխհատուցման ծրագրեր գոյություն ունեն բոլոր նահանգներում, որոնք ստեղծվուս են հիմնարկատերերի վճարած հարկերից: Եթե գործազրկության աշխատել է որոշակի ժամանակ միևնույն հիմնարկում (սովորաբար վեց ամիս) և հետագայում զրկվել է աշխատանքից անկախ իր կամքից, սովորաբար իրավունք է ձեռք բերում հետագա որոշակի ամիսների համար գործազրկության փոխհատուցում ստանալ: Եթե դուք լքեք ձեր աշխատանքը առանց որևէ էական պատճառի կամ հեռացվեք աշխատանքից որևէ էական պատճառով, ապա շատ հնարավոր է, որ չկարողանաք օգտվել գործազրկության փոխհատուցումից:

Այն անձնավորությունները ովքեր գործազրկության փոխհատուցում են ստանում, անհրաժեշտ է որ գրանցվեն որևէ հասարակական աշխատանքի գրասենյակում, նրանց միջոցով աշխատանք գտնելու նպատակով:

գ. Աշխատավորների փոխհատուցում

Աշխատավորների փոխհատուցում գոյություն ունի ԱՄՆ-ի շատ նահանգներում, բայց քանի որ ոչ բոլոր հիմնարկատերերն են որ մասնակցում են նահանգի

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

Աշխատավորների Փոխհատուցման ծրագրերին, այդ պատճառով էլ, ոչ բոլոր աշխատավորներն են որ իրավունք են ծեռք բերում օգտվելու այդ ծրագրերից:

Աշխատավորների փոխհատուցման ծրագրերից օգտվում են նրանք, ովքեր իրավունք ունեն օգտվելու: Աշխատավորների փոխհատուցում ասելով հասկանում ենք այն աշխատավարձը կամ բժշկական այն ծախսերի գումարը, որ աշխատավորը ստանում է աշխատանքի ընթացքում կամ աշխատանքի պատճառով տեղի ունեցած վթարի հետևանքով ժամանակ-կավորապես անաշխատունակ դառնալու դեպքում: Այս փոխհա- տուցումները աշխատավորները ստանում են ժամանակավորապես լրիվ անաշխատունակ լինելու համար, բժշկական ծախսերի և մնայուն վնասվածքների համար: Մինչդեռ շատ գործատերեր նահանգի Աշխատավորների Փոխհատուցման ծրագրերին չեն մասնակցում, սակայն նրանք կարող են նույն կարգի փոխհատուցում ապահովել այլ ապահովագրական գործակալությունների միջոցով:

Դ. Կյանքի Ապահովագրություն

Կյանքի ապահովագրությունը աշխատավորի համար երբեմն ապահովվում է աշխատատիրոջ կողմից: Եթե այդպես է, ասիա կյանքի ապահովագրության արժեքը աշխատատերն է վճարում ամբողջությամբ, կամ էլ մասամբ աշխատատերն է վճարում՝ մասամբ աշխատավորը: Կյանքի ապահովագրությունը սովորաբար դրամական հատուցում է տալիս աշխատավորին աշխատանքի ընթացքում կամ աշխատանքից դուրս մնայուն վնասվածք ստանալու դեպքում, իսկ աշխատավորի մական դեպքում՝ նրա ընտանիքին:

Ե. Առողջապահական կամ բժշկական ապահովագրություն

Առողջապահական կամ բժշկական ապահովագրությունը շատ հաճախ առաջարկվում է աշխատավորին, աշխատատիրոջ կրղմից շատ փոքր գումարով կամ բոլորովին ձերի: Մի փոքր հավելյալ գումարով այս ծրագրերից շատերը հասանելի են նաև աշխատավորի ընտանիքին համար: Կախված առաջարկված կամ ընտրված պլանից, առողջապահական կամ բժշկական ապահովագրությունները կարող են շատ տարբերվել իրարից:

Հ. Պաշտոնաթող լինելու ծրագրեր

Պաշտոնաթող լինելու ծրագրերը նպաստի ծրագրեր են, որին մասնակցում են և աշխատատերը և աշխատավորը: Պաշտոնաթող լինելու շատ ծրագրերում աշխատավորը իր աշխատավարձից մի կայուն գումար է հատկացնում, իսկ աշխատատերը իր հերթին այդ գումարին ավելացնում է աշխատավորի ընդհանուր աշխատավարձի որոշակի տոկոսի չափով մի գումար: Այս վճարումները շարունակվում են այնքան ժամանակ, քանի դեռ աշխատավորը աշխատում է տվյալ ընկերությունում և հետագայում երբ բավականաչափ տարիքով է աշխատելու համար, մաս առ մաս յուրաքանչյուր ամիսը մեկ ետ է վերադարձվում

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ ॥

աշխատավորին, որպես պաշտոնաթողության նպաստ: Սովորաբար աշխատավորը որոշակի թվով տարիներ պետք է աշխատի տվյալ ընկերությունում, որպեսզի իրավունք ձեռք բերի պաշտոնաթողության դեպքում նպաստ ստանալու համար:

է. Հիվանդության պատճառով բացակայություն

Հիվանդության պատճառով աշխատանքից բացակայելու վճարվող օրերի քանակը սահմանափակ է բոլոր լրիվ դրույքով աշխատողների համար: Հիվանդության պատճառով բացակայելը տարբեր աշխատատերեր դիտում են տարբեր ձևով: Նույնիսկ շատ աշխատավայրերում հիվանդության պատճառով բացակա օրերի համար չեն վճարում:

Ծ. Աշխատանքային արձակուրդ

Այս տեսակի բացակայությունը աշխատավորի կողմից սովորաբար օգտագործվում է հանգստանալու համար: Ինչպես հիվանդության պատճառով բացակայելու, այնպես էլ արձակուրդային օրերի քանակը, աշխատավորը վաստակում է իր աշխատանք ամիսների քանակի հիման վրա: Շատ աշխատատերեր արձակուրդային օրերի համար վճարում են (այսինքն, աշխատավորը ստանում է իր արձակուրդային օրերի լրիվ աշխատավարձը) իսկ որոշ աշխատատերեր չեն վճարում: Անհրաժեշտ է, որ աշխատավորը մինչև արձակուրդ գնալը նախօրոք թույլտվություն ստանա աշխատատիրոջից:

Սովորաբար աշխատավորները արձակուրդային օրերի իրավունք են ձեռք բերում միայն տվյալ ընկերությունում որոշակի ժամանակ աշխատելուց հետո, օրինակի համար 6 ամիս կամ 1 տարի:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՒ ՊԱՀՈՒՄՆԵՐ

ա. Աշխատավարձ

Որոշ դեպքերում, հատկապես եթե ընկերությունը շատ փոքր է, (կամ ընկերությունում աշխատում են շատ քիչ թվով աշխատավորներ) աշխատատերը աշխատավորների աշխատավարձերը կարող է վճարել առձեռն թղթադրամով, սակայն սովորաբար աշխատավորները իրենց աշխատավարձերը ստանում են չեկով: Եթե դուք ձեր աշխատավարձը ստանում եք և ոձեռն, այսինքն թղթադրամով, ապա աշխատավարձի հետ մեկտեղ դուք պետք է ստանաք նաև աշխատավարձի ծրար կամ ստացական, որտեղ մանրամասնորեն նշված պետք է լինեն աշխատավարձի ու պահումների բոլոր հաշվարկները: Իսկ եթե դուք ձեր աշխատավարձը ստանում եք չեկով, ապա վերոհիշյալ հաշվարկներն ու պահումները նշված են լինում չեկի մի մասը կազմող կտրոնի վրա, որը կոչվում է աշխատավարձի կտրոն: Աշխատավարձի կտրոնի վրա պետք է նշված լրնեն ընդհանուր շահույթի, մաքուր եկամուտի և

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ ॥

պահումների գումարները:

Ընդհանուր աշխատավարձ - Gross Pay. Այն աշխատավարձը, որը առաջարկվում է որևէ կատարած աշխատանքի համար, իրենից ներկայացնում է ընդհանուր (առանց պահումների) աշխատավարձ: Ընդհանուր աշխատավարձը դա այն գումարն է, որը վաստակել է աշխատավոր որոշակի աշխատած օրերի համար, առանց պահումները հանելու:

Զուտ եկամուտ (Մաքուր աշխատավարձ) - Net Pay. Ցուրաքանչյուր անգամ աշխատավարձ ստանալուց փաստացի ստացած գումարը կոչվում է զուտ աշխատավարձ: Զուտ աշխատավարձը փաստորեն իրենից ներկայացնում է այն գումարը, որ աշխատավոր ստանում է բոլոր տեսակի պահումները կատարելուց հետո:

բ. Պահումներ

Ցուրաքանչյուր անգամ պահումները հանվում են աշխատած օրերի ընդհանուր աշխատավարձի գումարից: Ընդհանուր առմամբ գոյություն ունեն երկու տեսակի պահումներ՝ պարտադիր և կամավոր:

Պարտադիր պահումները կատարվում են ըստ օրենքի և յուրաքանչյուր վճարման ժամանակ հանվում են անձնավորության ընդհանուր աշխատավարձից: Պարտադիր պահումները հետևյալներն են.-

1. Ֆեդերալ եկամտահարկ.. Federal Income Tax. Ամերիկայի Միացյալ Նահանգներում ֆեդերալ եկամտահարկ վճարում են բոլոր նրանք, ովքեր ապրում են այս երկրում և եկամուտ ունեն: Եկամտահարկերը հարկադրվում են օրենքով, չվճարելու կամ խուսափելու դեպքում պատժվում են և տուգանքներով և/կամ բանտարկությամբ: Ֆեդերալ եկամտահարկերից առաջացած գումարներով ծածկում են կառավարության բոլոր տեսակի ծախսերը, ինչպես նաև վճարում են կենտրոնական կառավարության տարբեր ծրագրերի և ծառայությունների համար, ինչպիսիք են ազգային պաշտպանությունը, արտաքին օգնությունները և պատերազմական գործողությունները:

Ֆեդերալ եկամտահարկի գումարը սովորաբար կազմում է անձնավորության աշխատած օրերի համար ստանալիք աշխատավարձի որոշակի տոկոսը: Եկամտահարկի տոկոսը որոշվում է այսպես կոչված «W-4» - պահումների ձևի հիման վրա, որը յուրաքանչյուր անձնավորությունից պահանջվում է լրացնել, ամեն անգամ նոր աշխատանքի ընդունվելու դեպքում: Այս ձևի մեջ նշվում են, Միացյալ Նահանգների եկամտահարկի կանոնի համաձայն, աշխատողի խնամքի տակ համարվող անձանց թիվը: Արտասահմանում ապրող ընտանիքի անդամները սովորաբար խնամքի տակ համարվելու ենթակա չեն:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

Աշխատատերերը իրենց աշխատավորներին հասանելիք «W-2» - ձևերը պետք է հանձնեն նրանց կամ ուղարկեն նրանց հասցեներով մինչև յուրաքանչյուր տարվա ջունվարի 31-ը: Այս փաստաթղթի կամ ձևի մեջ ցույց է տրված աշխատավորի ընդհանուր տարեկան եկամուտը և այն բոլոր պահումները, որ կատարված են այդ եկամուտից: Շատ կարևոր է պահել ու ձեռքի տակ ունենալ «W-2» - ձևը, որը փաստորեն ցոյց է տալիս, թե ձեր տարեկան եկամուտի դիմաց որքան եկամտահարկ եք վճարել ամբողջ տարվա ընթացքում: Դուք այդ ձեւի կարիքը հատկապես ունեք ձեր տարեկան այսպես կոչված եկամտահարկի Վերադարձի Զեռնը լրացնելու ժամանակ: Եկամտահարկերի Վերադարձի Զեռնը պետք է լրացվի և «W-2» ձևի կրկնօրինակներից մեկի հետ միասին ուղարկվի Ներքին Եկամուտի Գործակալությանը (ՆԵԳ) - (IRS), մինչև յուրաքանչյուր տարվա Ապրիլի 15-ը: Ցուրաքանչյուր տարվա համար նախատեսված եկամտահարկերի այդ ձևերը դուք կարող եք գտնել բանկերում և փոստի բաժանմունքներում:

Եթե դուք տարվա ընթացքում բավարար չափի եկամտահարկ չեք վճարել (ասենք, պատահաբար կամ դիտավորյալ ձևով ձեր խնամքի տակ գտնվող անձանց թիվը ավելացնելով և հետևաբար անհրաժեշտ քանակից քաշ եկամտահարկ վճարելով) ապա դուք պարտավոր եք տարվա վերջին լրացուցիչ նկամտահարկ վճարել ՄՆ-ի կառավարությանը: Իսկ եթե վճարել եք ավելին քան անհրաժեշտ է, ապա կառավարությունը կվերադարձնի ձեզ, ձեր հավելյալ վճարած գումարը:

Ցածր եկամուտ ունեցող աշխատողներից քիչ եկամտահարկ գանձելու նպատակով գոյություն ունի եկամտահարկը հաշվարկելու մի այլ կանոն: Ըստ այդ կանոնի, աշխատավորի սովորական տարեկան եկամտահարկից հանվում է մի որոշակի գումար, կամ հաճախ նույնիսկ հատուցում է տրվում աշխատավորին, եթե նա նոյնիսկ ոչ մի եկամտահարկ չի վճարել պետությանը:

Ներքին եկամտահարկի Գործակալությունը (ՆԵԳ) տեղական շատ գրասենյակներ ունի: Եթե դուք հարցեր ունեք եկամտահարկերի վերաբերյալ եւ կամ եկամտահարկերի ձևերը լրացնելու ժամանակ օգնության կարիքի դեպքում կարող եք դիմել այդ գրասենյակներին:

2. *Սոցիալ Ապահովության եկամտահարկը - Social Security Tax* - կամ ֆեդերալ Ապահովության Օժանդակության Հրամանագիր (ֆ.Ա.Օ.Հ.) կազմում է աշխատավորի ընդհանուր աշխատավարձի մի հաստատուն տոկոսը: Վերոհիշյալ եկամտահարկը փաստորեն աշխատավորին է վերադարձվում ամսեկան վճարումների տեսքով, եթե նա պաշտոնաթող է լինում (սովորաբար 65 տարեկան հասակում), կամ վնասվածքի պատճառով հնարավորություն չի ունենում այլևս աշխատել:

3. Նահանգային եկամտահարկ - *State Income Tax* - Նահանգային եկամտահարկ գոյություն ունի ԱՄՆ-ի միայն մի քանի նահանգներում: Նահանգային եկամտահարկ գոյություն ունի ԱՄՆ-ի միայն մի քանի նահանգներում, աշխատավորի ընդհանուր աշխատավարձից պահում են նրա վաստակի մի հաստատուն տոկոսը (որը միշտ ավելի փոքր տոկոս է կազմում քան

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ

ֆեղերալ եկամտահարկի պահումների տոկոսը): Այս հավաքված գումարը օգտագործում են ծածկելու նահանգի ներքին ծախսերը: Ինչպես նշեցինք վերևում որոշ նահանգներ իիմնական եկամտահարկ չունեն, որը ընդհանրապես պահպում է յուրաքանչյուր աշխատավարձի ժամանակ, սակայն այդպիսի նահանգներում եկամտահարկ հավաքում են առանձին դեպքերում միայն հատուկ նպատակների համար:

4. Տեղական Եկամտահարկ - Local Income Tax. Որոշ բնակավայրերում ինչպիսիք են քաղաքը, երկրամասը գոյություն ունի նաև տեղական եկամտահարկ:

Կամավոր Պահումներ. Կամավոր են կոչվում այն պահումները երբ աշխատավորը ինքն է խնդրում աշխատատիրոջը իր աշխատավարձից ինչ որ նպատակի համար պահումներ անելու համար։ Այս տեսակի պահումները կարող են հանվել աշխատավարձից ինչպես սովորական յուրաքանչյուր աշխատավարձի ժամանակ, այնպես էլ նախօրոք պայմանավորված ժամ-կետներին (օրինակի համար.ամսեկան մեկ անգամ, յուրաքանչյուր երեք շաբաթը մեկ, կամ ամսեկան 2 անգամ)։ Այդ պահումները նախատեսված կարող են լինել բժշկական ապահովագրության, միությունների անդամականության, ապառիկ առնված ապահովագրության և կամ կյանքի ապահովագրության վճարումների համար։ Տարբեր ընկերություններում կարող են լինել նաև տարբեր նպատակների համար հանվող պահումներ։

Ներքում տրված է աշխատավարձի «W-2» - ձևի մի օրինակ, որ տարվա սկզբին յուրաքանչյուր աշխատավոր ստանում է աշխատատիրոջից, որտեղ նշված են բոլոր թեսակի և պետական հկամատահարկերը և կամավ որ պահումները:

1 Control number		OMB No. 1345-0008					
2 Employer's name, address, and ZIP code The Shade Department Store, Inc. 7120 Woodruff Street Wheaton Shopping Center Wheaton, VA 22502		3 Employer's identification number					
		4 Employer's State number					
		5 Statutory employee <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Dedicated <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Legal <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	941 emp <input type="checkbox"/>	Subtotal <input type="checkbox"/>	VA <input type="checkbox"/>
		6 Allocated tips		7 Advance EIC payment			
8 Employee's social security number 123-45-6789	9 Federal income tax withheld 3.96	10 Wages, tips, other compensation 114.61		11 Social security tax withheld 6.93			
12 Employee's name, address, and ZIP code John T. Wallas 18714 Jay Avenue Takoma Park, MA 22502		13 Social security wages 114.61 16		14 Social security tips			
		17 State income tax 1.66		18 State wages, tips, etc.		19 Name of State	
		20 Local income tax		21 Local wages, tips, etc.		22 Name of locality	

Form W-2 Wage and Tax Statement 1985 Copy C For EMPLOYEE'S RECORDS

This information is being furnished to the Internal Revenue Service.

**Department of the Treasury
Internal Revenue Service**

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՎԵԼԸ

Աշխատանք փնտոելը պահանջում է ժամանակ և համբերություն: Աշխատանք գտնելը կախված է նաև աշխատելու ցանկությունից:

Եթե դուք ժամանում եք Միացյալ Նահանգներ և դառնում աշխատուժի մի մաս, աշխատանք գտնելու համար պետք է դիմեք և մրցակցեք բոլոր այլ աշխատանք չունեցող անձանց հետ ոչ միայն գոյություն ունեցող թափուր աշխատատեղիների համար, այլ նաև այն աշխատողների հետ, որոնք աշխատանք ունեն, բայց ձգտում են գտնել ավելի լավ պայմաններով աշխատանք: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր անձնավորություն որը աշխատանքի կարիք ունի կուզենա ստանալ իր կարողությունների մակարդակից կախված, գոյություն ունեցող աշխատանքներից լավագույնը: Աշխատատերը աշխատանքի կը նդունի այն անձնավորությանը որը ավելի հարմար է տվյալ ընկերությունում աշխատելու համար, կամ այն անձնավորությունը որը ավելի լավ տպավորություն կթողնի աշխատատիրոջ վրա տվյալ պաշտոնը գբաղեցնելու տեսակետից:

Որպեսզի հնարավորություն ունենաք մրցակցել և ընդունվել աշխատանքի, դուք նախ պետք է ցանկանաք աշխատել և նաև պատրաստ չինեք կատարել ձեզ առաջարկված ցանկացած աշխատանքը:

Որպեսզի ընդունվեք աշխատանքի և կարողանաք պահել այն, շատ կարևոր է հասկանաք, որ.-

- Աշխատանքներ չկան, որ ձեզ են սպասում ՄՆ ժամանելիս:
- Հնարավոր աշխատանքների համար դուք պետք է մրցակցեք ինչպես մյուս գաղթականների, այնպես էլ անգործ ամերիկացիների հետ:
- Բարձր գնահատվող և ավելի ցանկալի աշխատանքների համար ավելի շատ քանակով մրցող մարդիկ կլինեն:
- Անպայման չէ, որ առաջին աշխատանքը որ դուք կստանաք ՄՆ-ում, ձեր աշխատանքային կյանքում լինի վերջինը:
- Որոշակի տեխնիկական պրոֆեսիալիզմ կամ արհեստով ՄՆ-ում աշխատելու համար անհրաժեշտ է նախօրոք համապատասխան վկայական կամ աշխատանքային իրավունք ձեռք բերել:
- Զեր արտագաղթած երկրից ձեր ունեցած գիտական աստիճանը կամ համապատասխան վկայականը անպայմանորեն չէ, որ իրավունք վերապահի ձեզ այդ մասնագիտությամբ ՄՆ-ում աշխատելու համար:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

Աշխատանք փնտոելիս շատ կարևոր է այն հանգամանքը, որ դուք տվյալ աշխատանքի հետ կապված ձեր բոլոր հնարավորությունները, ճկունությունն ու փորձառությունը կարողանաք ցուցադրել:

Դուք պետք է սովորեք, թե ինչպես կարող եք ձեր բոլոր կարո- դությունները հնարավորին չափ չուտ հարմարեցնել ամերիկյան աշխա- տանքային շուկայի հետ: Հիշեցեք, որ ամերիկացիները իրենք ևս հաճախ են փոխում իրենց աշխատանքները որպեսզի կարողանան տվյալ մասնագիտության բնագավարում Ամերիկայում տեղի ունեցող փոփոխություն- ներին հարմարվելու և նաև իրենց մասնագիտությունների մեջ առաջ գնալու համար: Տարբեր տեղեր աշխատելը թույլ է տալիս մարդկանց վերամշակել և փոխել իրենց աշխատանքի բնույթը հարմարեցնելով այն իրենց կարողություններին և հետաքրքրություններին:

Աշխատանք փնտոելը պահանջում է համբերություն, երևակայություն և անձնական նախաձեռնություն: Նույնիսկ եթե անմիջական թափուր աշխատանք տեղ գոյություն չունի, դուք կարող եք կապ հաստատել հավանական աշխատատերերի հետ գրելով կամ զանգահարելով նրանց: Շատ ընկերություններ ունենում են այսպես կոչված «բաց դոներ» օրը, որի ժամանակ դիմումներ են ընդունում և հարցազրույց են ունենում մասնագետների հետ, որպեսզի հետագայում անհրաժեշտության դեպքում հրավիրեն աշխատանքի: Որքան շատ աշխատատերեր իմանան ձեր մասին, այնքան մեծ կլինի ձեզ աշխատանք գտնելու հնարավորությունը: Երբ աշխատանք եք փնտոում, մշտական ձեզ մոտ պետք է ունենաք Սոցիալ Ապահովության կարտը (Social Security Card), իսկ եթե դեռևս չունեք այն, ապա ապացույց որ դիմել եք ստանալու համար և I-94 կարտը, որը ապացուցում է, որ իրավունք ունեք աշխատելու: Իսկ եթե դիմում եք պրոֆեսիոնալ մասնագիտական աշխատանքի համար, ապա ձեզ մոտ պետք է ունենաք նաև ձեր աշխատանքային կենսագրությունը "Résumé" և կամ ուսումնական կենսագրությունը "Curriculum Vitae":

ա. Աշխատանքի հետ կապված ինֆորմացիայի աղբյուրներ

1. Ընկերներ և Հովանավորողներ. Անձնական կապերը կարող են շատ հաճախ լինել աշխատանքի հետ առնչություն ունեցող ինֆորմացիայի լավագույն աղբյուրը: Ձեր ընկերներն ու հովանավորողները հավանաբար կարող են աշխատանքի հետ առնչվող լավագույն տեղ եկությունները հաղորդել ձեզ: Ձեր ծանոթներն ու ընկերները իմանալով ձեր գալստյան մասին, կարող են նախնական հեղձկություններ հավաքել ձեր կատա- րելիք աշխատանքի վերաբերյալ և թե ինչ աշխատանքներ են անմիջապես հնարավոր, որին դուք իսկույն կարող եք դիմել: Դուք միշտ պատրաստ պետք է լինեք այդպիսի հնարավորությունների համար:

2. Կամավոր Գործակալություններ. Կամավոր գործակալությունների կազմում գոյություն ունեն աշխատանքային խորհրդատուններ, որոնք լավատեղյակ են իրենց բնագավառի աշխատանքային շուկային և այնպիսիները որոնք

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ ॥

Մասնագիտացված են գաղթականների համար աշխատանք գտնելու մեջ: Հատեր երկար տարիների փորձ ունեն և մտերմական կապեր ունեն աշխատանքային բոլոր բնագավառների աշխատողների հետ, այդ պատճառով էլ ինչ ացի կլինի ծանոթանալ նրանց հետ և մշտական կապ հաստատել նրանց հետ:

3. Նահանգային և տեղական աշխատանքային գործակալություններ. Յուրաքանչյուր նահանգ հանրային աշխատանքային գործակալություն ունի, որը անվճար օգնում է մարդկանց աշխատանք գտնելու համար: Եթե դուք կապ հաստատեք այդպիսի գործակալություններից մեկի հետ, ապա նրանք ձեզ տեղյակ կպահեն ձեր կարողությունների և կրթական մակար-դակից կախված, բոլոր հնարավոր աշխատանքների հետ:

4. Մասնավոր, ձրի և շահույթաբեր աշխատանքային գործակա-լություններ. Մասնավոր աշխատանքային գործակալությունները նույն ծառայություններն են մատուցում ինչ անում են նահանգային և տեղական աշխատանքային գործակալությունները: Հակույթով աշխատող գործակալությունները իրենց կատարած աշխատանքի համար ձեզնից կգանձեն մի գումար, որը սովորաբար կազմում է ձեր ստանալիք ամսեկան կամ տարեկան աշխատավարձի մի որոշակի տոկոսը, եթե իհարկե դուք ընդունվելու լինեք նրանց կողմից ձեզ առաջարկված աշխատանքը: Որոշ դեպքերում այդ գումարը վճարում է աշխատատերը: Ուրեմն նախ քան աշխատանքի համար այդպիսի գործակալություններին դիմելը նախօրոք իմացեք վերոհիշյալ պայմանների մասին, քանի որ շատերին հետա-քրքրում է միայն իրենց ստանուլիք գումարը, ոչ թե ձեզ համար հարմար աշխատանք գտնելը: Բացի դրանից այդպիսի գործակալությունների միջոցով աշխատանք գտնելը կարող է տևել մի քանի ամիս, այդ պատճառով էլ աշխատանք գտնելու համար միմիայն նրանց վրա չպետք է հենվեք:

Բ. Աշխատանք որոնելը

Քանի որ աշխատանք ունենալը պետք է լինի ձեր առաջնային խնդիրներից մեկը, ապա այդ պատճառով դուք ևս ինքնուրույն պետք է ձգտեք ձեզ համար աշխատանք գտնել հետևյալ ծանապարհներով.

1. «Պահանջվում է աշխատող» հայտարարությունները - Wants Ads. Ձեր մոտակայ-քում գոյություն ունեցող աշխատանքների մասին տեղեկությունների գլխավոր աղբյուրը թերևս «պահանջվում է աշխատող» հայտարարությունները կամ հավելվածներն են: Այսպիսի հայտարարությունները կարող եք գտնել տեղական օրաթերթի «Պահանջվում է Օգնություն կամ Աշխատանքային Հնարավորություններ բաժիններում»: «Պահանջվում է աշխատող» հայտարարությունները ցուցակագրված են լինում ըստ մասնագիտությունների այբենական կարգով. այդ հայտարարություններում գրված կլինի նաև աշխատանքի բնույթի հակիրծ բովանդակությունը, աշխատանքի պահանջները և առաջարկվող աշխատավարձը: Այդտեղ կլինի նաև հեռախոսի թիվը և կամ հասցե, զանգահարելու

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

կամ գրելու համար: Եթե աշխատանք եք փնտում, դուք պետք է ամեն օր հետևեք այդ հայտարարություններին և եթե հանդիպեք ձեզ հետաքրքրող որևէ հայտարարության, անմիջապես շփման մեջ պետք է մտնեք: Սպասելու նվազեցնում է աշխատանքը ձեռք բերելու հնարավորությունը: Փոքրամասային (Էթնիկական) օրաթերթը աշխատանք գտնելու գերազանց աղբյուրներից մեկն է հատկապես նրանց համար, ովքեր լավ անգլերեն խոսել չգիտեն:

2. «Պահանջվում է օգնություն» ցուցանակները - "Help Wanted" Ads. Չատ գործատեղիներ երբ աշխատողի կարիքը ունեն, այս տեսակի հայտարարություններ են տեղադրում իրենց աշխատավայրերի լուսամուտների վրա: Եթե նույնիսկ գոյություն ունեցող աշխատանքը ձեզ համապատասխան չէ, այնուամենայնիվ պետք է որ լրացնեք համապատասխան դիմումնագիրը, ապա-գայում սպասվող այլ թափուր տեղերից օգտվելու համար:

3. Հեռախոսագրքի դեղին էջերը - Yellow Pages. Տեղական հեռախոսագրքի այս բաժինը կազմված է ըստ աշխատանքների և այբենական կարգով ցուցակագրված են բոլոր աշխատատեղիներն ու կազմակերպությունները: Զանգահարելով կամ գրելով կազմակերպություններին որոնք աշխատանքի են ընդունում ձեր մասնագիտությունը ունեցող մարդկանց, դուք կարող եք հայտնաբերել աշխատանքի տեղ, ինչպես նաև գաղափար կազմել այդ բնագավառում գոյություն ունեցող կամ ապագայում սպասվող աշխատանքային հնարավորություններին:

4. Մասնագիտական ամսաթերթեր և նորույթների նամակներ. Գոյություն ունեն շատ մասնագիտական ամսաթերթեր և նորույթների նամակներ, որտեղ շարադրված են լինում գլխավոր հաստատություններն ու կազմակերպությունները որոնք կապված են տվյալ մասնագիտության հետ և պարունակում են հակիրժ բացատրություն ինչպես նաև հասցե: Այս ձեռնարկները սովորաբար հնարավոր է ձեռք բերել հանրային և համալսարանական գրադարաններից: Հնարավորին չափ շատ կապ հաստատելով այսպիսի կազմակերպությունների հետ, աշխատանք գտնելու հարցում դուք անհամեմատ կավելացնեք ձեր հնարավորությունները և ավելի շատ կարծիք կազմեք ձեր մասնագիտությանը վերաբերող աշխատանքային շուկայի մասին:

գ. Աշխատանքային Կենսագրություն

Այն անձնավորությունները, որոնք դիմում են պրոֆեսիոնալ աշխատանքների համար պետք է պատրաստեն հակիրժ և ծշգրիտ գրված «Աշխատանքային Կենսագրություն»: Պետք է գրված լինի մաքուր, ծշգրիտ քերականությամբ, անսխալ ուղղագրությամբ և կետադրությամբ և չպետք է լինի մեկ էջից ավելի:

Անձնավորության մասնագիտությունից և անձնական նախասի րություններից կախված, աշխատանքային կենսագրականները կարող են տարբեր ձևի լինել, բայց սովորաբար պետք է պարունակեն մասերի բաժանում հետևյալ տեղեկությունները:-

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

1. Անձնական տվյալ ներ. Անուն, հասցե և հեռախոսի համարը:

2. Աշխատանքային փորձառություն կամ աշխատանքային պատմություն.

Այս բաժնում գրված պետք է լինեն ձեր կատարած բոլոր աշխատանքների ցուցակը, սկսելով ամենավերջին կատարած աշխատանքից և ավարտելով ձեր կատարած ամենաառաջին աշխատանքով։ Այստեղ գրված պետք է լինի յուրաքանչյուր հիմնարկության անունը, ձեր գրաված պաշտոնը և ունեցած պարտականությունների հակիրծ բացատրությունը, ինչպես նաև տարեթվերը։ Այն անձիք որոնք քիչ աշխատանքային կենսագրություն ունեն և կամ երբեք չեն աշխատել տվյալ մասնագիտությամբ, անհրաժեշտ է որ տվյալներ հաղորդեն իրենց կատարած այլ աշխատանքների կամ ունեցած գործունեությունների մասին (օրինակի հատուկ, հատուկ վկայագրեր, տպագրված աշխատանքներ, տեղական կազմակերպություններում կատարած աշխատանքներ, և լու.)։ Նույնիսկ այն աշխատանք- ների մասին, որ կարող եք կատարած լինել ձեզ համար առաջին ապաստարան հանդիսացած երկրում։

3. Ուսում և պրակտիկա. Սա պետք է լինի ձեր ուսման կամ պրակտիկայի ժամանակագրական ցուցակը։ Դա պետք է պարունակի դպրոցի անունը, ուսումնասիրած առարկաները, հաճախած տարիների քանակը, ստացած վկայականներն ու գիտական աստիճանները և կամ տեղեկանքներ տվյալ դասընթացներին մասնակցած լինելու մասին։ Վերոհիշյալ այս փաստաթղթերը պետք է վերաբերվեն աշխատանքի համար ձեր դիմած մասնագիտությանը։

4. Տարբեր տեղեկություններ. Այս հավելյալ տեղեկությունները անպայման չեն, որ կապված լինեն ձեր մասնագիտության հետ։ Այս բաժինը կարող է պարունակել ակումբներին կամ մասնագիտական կազմակերպություններին ձեր անդամակցած լինելը, ձեր իմացած օտար լեզուները կամ հատուկ տեխնիկական գիտելիքներ (օրինակ, մեքենագրություն, մեքենայի վերանորոգում, կարուծել, և լու.)։

5. Անձնական հանձնարարականներ. Աշխատանքային կենսագրականը շատ հաճախ պարունակում է այնպիսի անձանց անունները, պաշտոններն ու հասցեները, որոնք տեղյակ և գիտակ են աշխատանքի համար։ Դիմողի հնարավորություններին և գիտելիքներին։ Կարող են լինել նաև այնպիսի անձնավորություններ, որոնք «հանձնարարական նկարագիր» կարող են տալ ձեր անցյալի և առհասարակ հնարավորությունների մասին։ Օրինակի համար, դուք կարող եք գրել ձեր հովանավորողի անունը։

Եթե աշխատանքային կենսագրությունը մինչև ինտերվյուն է ուղարկված աշխատատիրոջը, ապա դրա հետ միասին պետք է ուղարկված լինի նաև կից նստական։ Այս նստական նպատակն է հակիրօրեն նկարագրել դիմորդին (ցանկալի է մեկ էջ), ընդգծելով գրելու պատճառները և նամակին կից ուղարկվող գրությունների ցուցակը։ Ուղարկելով այդպիսին դիմորդը պետք է վստահ լինի, որ նամակը.-

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

- տպագրված կամ գրված է հակիրք և մաքուր.
- հասցեագրված, անշուշտ եթե հնարավոր է տվյալ ընկերության մեջ աշխատող կոնկրետ անձնավորությանը.
- ծցգրիտ այն պաշտոնը որի համար դիմում եք և ինչու եք հատկապես դիմում այդ կազմակերպությանը.
- գրված լինի մաքուր, կարծ և գործունյա.
- պարունակի աշխատանքային գործունեության օրինակը:

Հաջորդ էջերում տրված են կից նամակի և աշխատանքային կենսագրության օրինակներ:

Կից Նամակի Նմուշ

Էդիսոն Էլեկտրական Ընկերություն
Դիրեկտոր Պր. Զոն Զոնսին
954 Ատլանտիկ ավենյու
Շիֆակո, Իլինոյս 60021

Սիրելի Պր. Զոնս,

«Շիֆակո Թայմ» թերթի այսօրվա համարում, կարդալով տեղեկացա, որ Զեր ընկերությունում էլեկտրիկ ինժեների թափուր պաշտոն գոյություն ունի: Կցանկանայի, որ ինձ հաշվի առնեյիք այդ պաշտոնի համար, ուստի կից ուղարկում եմ իմ աշխատանքային կենսագրության մի օրինակը:

Եթե դուք կցանկանաք լրացուցիչ տեղեկություն ունենալ իմ ուսման, սաշխատանքային փորձառության կամ անձնական տվյալների վերաբերյալ, ապա ես ավելի քան ուրախ կլինեմ հայթայթել Զեզ այդ տեղեկությունները:

Սպասելով Զեր մոտալուտ պատասխանին

Հարգանքներով Զերդ

Յան Սմոլինսկի
544 Սառը Վուդսայթ ավենյու
Շիֆակո, Իլինոյս 60653

Ծանոթագրություն..- Այս նամակը միայն մի նմուշ է: Նամակի մեջ դուք պետք է նշեք նաև որևէ լրացուցիչ տեղեկություն, որը կարող է օգտակար լինել համապատասխան կարդացողի համար: Այնուհանդերձ նամակը պետք է լինի հակիրք ու գործունյա:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ ॥

Mr. John Jones, Director
Edison Electric Company
954 Atlantic Avenue
Chicago, Illinois 60021

Dear Mr. Jones:

I read in today's issue of the Chicago Times that there is a position available with your company for an electrical engineer. I would like to be considered for this position and therefore attach a copy of my resume.

If you should require additional information regarding my education, work experience, or personal situation, I will be more than happy to provide it.

I look forward to your reply.

Sincerely yours,

Armen Bedrossian
544 South Woodside Avenue
Chicago, Illinois 60653

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ ॥

Curriculum Vitae

Armen Bedrossian
544 South Woodside Avenue
Chicago, Illinois 60653
(312) 667-6969

JOB OBJECTIVE

To be employed in the field of electrical engineering and eventually specialize in network analysis.

EDUCATION

Polytechnic Institute of Yerevan, Armenian SSR. Masters in Electrical Engineering (equivalent to U.S. undergraduate and masters degree combined). 1975-1980.

EXPERIENCE

Junior Engineer in the Yerevan Electrical Utility Plant. Performed load-level control.
Teaching Assistant at the Yerevan Electrical Utility Plant.

PUBLICATIONS

"Utility Plants: Load-Leveling Efficiency Study." Yerevan Polytechnic Periodical No. 54 (1981)

REFERENCES

Dr. Frank Jones, Chairman
Department of Engineering
Woodrow College
Charleston, South Carolina 39060
Tel. (201) 510-7200

Mr. John Smith, sponsor, Tel. (416) 318-9711

LANGUAGES

Armenian (native); Russian and German (reading ability); English (basic spoken and written ability).

PERSONAL INFORMATION

Born in Yerevan, Armenian SSR, May 20, 1955. Married, two children. Admitted to the United States as a refugee on March 30, 1982. No restrictions on employment.

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

Աշխատանքային Կեսնագրության Օրինակ

Ար մեն Պետրոսյան
544 Սպութ Վուտսայդ ավենյու
Չիկագո, Իլինոյս 60653
հեռ. (312) 667-6969

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Աշխատելու համար որպես էլեկտրիկ ինժեներ և մասնակիորեն մասնագիտանալու ընդհանուր անալիզի ծյուղի մեջ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտ համալսարան, Հայկ. Ս.Ս.Հ. էլեկտրիկ ինժեների դիպլոմ (որը համազոր է ԱՄՆ-ում համալսարանի վերջին կուրսի ուսանողի և ավարտական կոչման միջև):

ՏՊԱԳՐՎԱԾ ԳՈՐԾԵՐ

«Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Գրախոսական» թիվ 54-1981 «Ծանրաբեռնվածության Կարգավորման էֆեկտիվության Ուսումնասիրություն»:

ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐ

Դոկտոր Ֆրանք Ջոնս, Ինժեներական Բաժանմունքի Դիրեկտոր, Վուտրո Կոլեջ (201) 510-7200

Պարոն Ջոն Սմիթ, հովանավոր (416) 318-9711

ՀԵԶՈՒՆԵՐ

Հայերեն (մայրենի), Ռուսերեն և Գերմաներեն (կարդալու կարողություն), Անգլերեն (հիմնական խոսակցական և գրելու կարողություն):

ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՆՎԵԼ եմ 1955թ. Մայիսի 20-ին Երևանում, Հայկ. Ս.Ս.Հ.: Ամուսնացած եմ, ունեմ 2 երեխա: Թույլատրված եմ Միացյալ Նահանգներ որպես գաղթական 1982 թ. Մարտի 30-ին: Աշխատելու համար սահմանափակում կամ արգելք չունեմ

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԸ ՓՈԽԵԼԸ - ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՌԱՋԻԱՂԱՑՈՒՄ

Աշխատանքը բարեկեցության և Միացյալ Նահանգների կյանքին հաջողությամբ մերվելու գլխավոր բանալին է: Եթե դուք արդեն սկսել եք աշխատել, ապա ամենակարևոր խնդիրը այդ աշխատանքը պահել կարողանալն է: ԱՄՆ-ում սկսած ձեր առաջին աշխատանքը կարևոր է հատկապես նրա համար, որ այդ աշխատանքով է սկսվելու ԱՄՆ-ում ձեր աշխատանքային կենսագրությունը կամ աշխատանքային պատմությունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատատերեր չեն հետաքրքրվում այն աշխատողներով, ովքեր նախընտրում են քիչ ժամանակ աշխատել մի տեղում, ընդհանրապես խելացի կլինի գոնե առաջին աշխատանքում մնալ 6 ամիս կամ ավելի: Դրանով դուք կհամարվեք հուսալի և վստահելի աշխատող իսկ հետագայում ձեր առաջխաղացման համար մեծ նշանակություն կունենա:

ա. Աշխատանքում

Ձեր արդեն սկսած աշխատանքը պահել կարողանալու համար դուք պետք է իմանաք, որ գործատերերը նոր աշխատողների մոտ սիրում են տեսնել հետևյալ կարևոր առանձնահատկությունները.

1. Լինել ծշտապահ և ժամանակի հարգը իմացող: Եթե դուք ինարավորություն չունեք ժամանակին ներկայանալ աշխատանքի, պետք է զանգահարեք ձեր վերակացուին: Շատ աշխատավայրերում օգտագործում են այսպես կոչված «ժամանակի կարտեր» կամ ժամը ավտմատ գրանցող գործիքներ աշխատանքի ներկայանալու և աշխատանքը ավարտելու ծցգրիտ ժամը որոշելու համար: Աշխատանքից հաօախակի ուշացող աշխատողները կարող են հեռացվեն աշխատանքից, կամ էլ համապատասխանաբար կպահեն աշխատավարձից: Շատ ընկերություններում յուրաքանչյուր 15 րոպե ուշացման համար կարող է աշխատողի կես ժամյա աշխատավարձը կտրեն:

2. Թույլ չտալ որ անձնական հոգսերը խանգարեն աշխատանքի ընթացքը, և խուսաբել անձնական հանձնարարություններ կատարել աշխատանքի ժամերին:

3. Հարցեր տալ երբ կասկածում եք, քան թե փորձեք թաքցնել որոշ նույթի վերաբերյալ ձեր անգիտակլինելը:

4. Անհրաժեշտ է նախաձեռնություն հանդես բերել աշխատանքի մեջ շուտ սովորելու և նոր պարտականություններ ստանձնելու համար:

5. Լինել ընկերական և օգնելու պատրաստ առանց չարաշահելու աշխատանքային ձևականություններն ու միջավայրը:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

Աշխատանքի նկատմամբ ցուցաբերած կարողությունն ու քրտնաշան աշխատանքը հարգվում է և լավ գնահատվում:

բ. Առաջինադասումը աշխատանքի մեջ

Ավելի բարձրին ճգտելը, աշխատանքային իրավիճակը շարունակաբար բարելավելը ամերիկյան կեցության ու կուլտուրայի ամենաուժեղ տրադիցիաներից մեկն է: Աշխատանքային վիճակը կարելի է լավացնել տարբեր ճանապարհներով, որոնցից են.- Նույն աշխատանքի տարբեր մակար- դակների մեջ աշխատելով, միևնույն ընկերության մեջ մեկ պաշտոնից մյուսը անցնելով, փոխելով ընկերությունը կամ աշխատանքային բնագավառը կամ փոխադրվելով մեկ քաղաքից մյուսը և կամ նույնիսկ մեկ նահանգից մյուս նահանգը: Այնուամենայնիվ, երբեք մի ազատվեք մի աշխատանքից, քանի հաջորդը ապահովված չէ:

Միևնույն աշխատավայրում աշխատավարձի, ինչպես նաև պաշտոնի բարձրացում ընդհանրապես տեղի է ունենալ աշխատավորի կատարած աշխատանքի արդյունքների վերանայումով, որը փաստորեն շատ ընկերությունների աշխատանքը գնահատելու կարևոր պրոցեսներից մեկն է: Աշխատանքի մեջ առաջինադասում կարող է տեղի ունենալ նաև նույն ընկերության մեջ բաժինը կամ պաշտոնը փոխելով: Այսպիսի առաջինադասման համար հաճախ պահանջվում է լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցել: Վերապատրաստման և լրացուցիչ ուսուցման համար ԱՄՆ-ում գոյություն ունեն շատ հնարավորություններ: Վերապատրաստման այս հնարավորությունները գոյություն ունեն ոչ միայն գաղթականների այլև ՄՆ-ում ապրող բոլոր այն չափահասների համար, որոնք կցանկանան մասնակցել այդ դասընթացներին: (Տես, Ուսումը Չափահասների Համար բաժինը):

գ. Աշխատանք փոխելը

ԱՄՆ-ում դիրքի կամ օբաղեցրած պաշտոնի բարձրացման նպատակով աշխատանք փոխելը սովորական և բնական երևությ է: ՄՆ-ի աշխատանքային ուժը առանձնահատուկ է իր շարժունակության տեսակետից, լինի աշխատանքից աշխատանք թե բնակավայրից բնակավայր: Որպես ՄՆ-ի աշխատուժի նոր անդամ, պետք է իմանաք, որ աշխատանքի մեջ հաջողություն ունենալու և բարձր դիրքի հասնելու համար, դուք հավանաբար կարիք կունենաք աշխատել տարբեր ընկերություններում, տարբեր պաշտոններով, մինչև վերջապես կարողանաք գտնել ձեր ցանկացած աշխատանքն ու պաշտոնը:

Եթե դուք ցանկանում եք բարելավել ձեր աշխատանքային պայմանները ավելի բարձր աշխատավարձի կամ բարձր պաշտոնի համար աշխատատեղին փոխելով, պետք է հիշեք, որ ավելի լավ աշխատանք գտնելու համար ՄՆ-ում անհրաժեշտ է ունենալ լավ և կայուն աշխատանքային կենսագրություն: Ուստի շատ կարևոր է ստեղծել լավ աշխատանքային կենսագրություն լինելով ծշտապահ, արդյունավետ

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Զեռնարկ/Գլուխ ॥

և անշուշտ լրիվ կատարելով ձեր վրա դրված բոլոր տեսակի պարտականությունները: Լավ աշխատանքային կենսագրություն ունենալու և դրական երաշխավորագիր ձեռք բերելու համար շատ կարևոր է նաև միևնույն աշխատավայրում մնալ առնվազն երեքից մինչև 6 ամիս: Միշտ հիշիր, որ նոր աշխատանք փնտռելու լավագույն ժամանակը այն է երբ դուք աշխատում եք:

Աշխատանքային լավ տվյալներ ունեցող աշխատավորը կարող է երաշխավորագիր խնդրել իր աշխատատիրոջից, աշխատանքից ազատվելու դիմումը ներկայացնելու հետ մեկտեղ: Սա մի հասարակ նամակ է, որտեղ գործատերը ընդգծում է աշխատավորի լավագույն հատկություններն ու կարող ությունները, որ նա ցուցադրել է տվյալ ընկերությունում աշխատելու ընթացքում: Լավ երաշխավորագիր ստանալու համար պետք է գգուշ լինեք ձեր աշխատատիրոջ կարիքների նկատմամբ: Նախքան մի ուրիշ աշխատանքի տեղափոխվելը անհրաժեշտ է, որ դուք նվազագույնը 2 շաբաթ առաջ հանձնեք աշխատանքից ազատվելու ձեր դիմումը, սա փաստորեն ժամանակ կտա գործատիրոջը փոխանորդ գտնելու համար: Տնտեսական և աշխատանքային վիճակը բարելավելու նպատակով աշխատանք փոխելը չի դիտվում որպես վատ արարք ամերիկյան գործատերերի կողմից: Բոլոր դեպքերում գործատերը կցանկանա, որ աշխատավորը նախօրոք հայտնի աշխատանքից ազատվելու իր ծրագրերի մասին:

Նախօրոք դիմում ներկայացնելը կարող է նույնիսկ պարտադիր լինել որոշ ընկերություններում և այն չհարգելու դեպքում կարող եք զրկվել ձեր մեկ շաբաթվա աշխատավարձից:

Ա. ԱՄՓՈՓՈՒՄ

Հատ գաղթականների համար աշխատանքը իրենց բարեկեցության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կյանքին հարմարվելու բանալին է: Սկզբնական աշխատանքը հնարավորություն կտա գաղթականներին տնտեսապես անկախ լինելու և իրենց անմիջական կարիքները հոգալու համար և անշուշտ կարող է հիմք ծառայել հետագայում ավելի բարձր վճարվող աշխատանք գտնելու և ֆինանսապես ավելի ապահով լինելու համար: Ամերիկյան աշխատանքի փորձառություն ձեռք բերելու հետ մեկտեղ, գաղթականները կարող են նկատել, որ աշխատանքը նաև հնարավորություն է ուղիս խոսելով և շփում ունենալով ամերիկացի աշխատողների հետ, զարգացնել իրենց անգլերեն խոսակցական լեզուն և ավելի մոտիկից ծանոթանալու ամերիկյան ապրելակերպին և մշակույթին:

Կամավոր գործակալությունները, հովանավորողները, ոնկերները, ազգականներն ու նաև աշխատանքային հատուկ ծրագրերը կարող են Միացյալ Նահանգներ ժամանող գաղթականներին օգտագործ լինել աշխատանք գտնելու համար: Մինչդեռ առաջին աշխատանքը կարող է սկզբնակ-մակարդակի լինել, կամ ոչ մասնագիտական, սակայն կարևոր է ստանձնել այն և որոշակի ժամանակաշրջան

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Զեռնարկ/Գլուխ ॥

պահել, աշխատանքային հուսալի կենսագրության հիմք դնելու համար։ Հետագայում հնարավոր կլինի փոխել և անցնել ավելի բարձր մակարդակի կամ մասնագիտական աշխատանքի։ Գաղթականների համար ամերիկյան աշխատաձևին համա- կերպվելու և հարմարվելու կարողականությունը, Միացյալ Նահանգներում նրանց հաջողության և երջանկության հասնելու ամենակարևոր պայմաններից և գործոններից մեկն է։

ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Ա. ՆԱԽԱԲԱՆ

Գնումներ կատարել, բանկի հետ գործարք կատարել, վճարել տարրական կարիքների համար ինչպես տան պակասների, այնպես էլ մթերքի համար այս բոլորը երկրե երկիր կարող է տարբեր լինել: Ապրելու ծախսերը Միացյալ Նահանգներում հաշախ բարձր են, և այն գաղթականները որոնք անհոգաբար են վերաբերվում իրենց եկամուտի և ծախսերի հետ, ինչպես նաև կրեդիտ օգտագործելու մեջ, կարող են լուրջ տնտեսական կացության առաջ կանգնել:

Այս գլուխը տեղեկացնելու ններ է պարունակում ՄՆ-ում կատարվող ֆինանսական գործողությունների մասին, ներառյալ բյուջեի, առևտուր անելու և բանկի մատուցած ծառայությունների մասին:

1. ԵԿԱՄՈՒՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲՑՈՒՁԵԻ ՀԱՄԱՁԱՑՆ

Միացյալ Նահանգներում սահմանափակ եկամուտով ապրելիս, շատ կարևոր է ֆինանսական նախահաշիվ կազմել և ծախսել նրա համաձայն: Դա նշանակում է ինչպես հավասարակշռել եկամուտն ու ծախսերը: Դա նշանակում է այնպես պլանավորել, որ չծախսել ավելի քան շահում եք և առաջին հերթին ծախսել ամենաառաջնային կարիքի առարկաների վրա: ՄՆ-ում ճեր ամսական բյուջեն հավանաբար մի քանի ավելի իրեր կը նշեմ նախատեսում նախկինում:

ա. Հաստատուն ծախսեր

Հաստատուն ծախսեր կատեգորիայի մեջ (այն գումարները որ հավանաբար ամեն ամիս վճարելու եք), պետք է հաշվի առնել.-

1. Տան վարձը. Աս հավանաբար կլինի ճեր ամենաբարձր հաստատուն ամսական ծախսը և առաջինը որ դուք պետք է պլանավորեք: Անկախ նրանից թե որևէ համաձայնագիր նշորագրել եք թե ոչ, ճեր տան ամսեկան վարձը պետք է վճարվի նշանակված օրը: Եթե այն չի վճարված կամ հաշախ ուշացումով է վճարվում կարող են ճեզ վտարել բնակարանից: Զեր եկամուտից կպարզվի թե որտեղ կարող եք ապրել:

2. Կենցաղային սպասարկում. Կենցաղային սպասարկման ծախսերի մեջ մտնում են, ձեր տան էլեկտրականության, բնական գազի և ջրի համար Վճարվող ծախսերը. երբեմն այս ծախսերը կարող են մտնել բնակարանի ամսեկան վարձի մեջ: Հատ հավանական է, որ ընդհանուրապես դուք ինքներդ պատասխանատու լինեք ձեր տան կենցաղային սպասարկումը ձեռք բերել համապատասխան կազմակերպություններից, երբ մի բնակարանից տեղափոխվում եք մյուսը: Կենցաղային սպասարկման համար Վճարումները կկատարվի տեղեկագրի միջոցով, որը սովորաբար կգա ամիսը մեկ. որի վրա թվարկված կլինեն հետևյալ տվյալները. հաճախորդի անունն ու հասցեն, հաշվի համարը, ժամանակի պարբերությունը որի համար Վճարելու եք, ծառայության վարձը (հարկով միասին) և վճարման ժամկետը: Վերոհիշյալ վճարները կարելի է ուղարկել փոստով կամ անձամբ: Անկախ այն հանգամանքից թե վճարումը ինչպես է կատարվում, կարելոր է որ այն կատարվի ժամանակին: Եթե վճարումները ժամանակին չկատարվեն, ապա կպահանջվի տուգանք վճարել, կամ համապատասխան սպասարկումը վերջիվ երջո կդադարեցվի:

3. Սննդամթերք. Երբ սննդամթերք եք ընտրում, գոյություն ունեցող տեսակները կարող են ձեզ զարմացնել: Սակայն խուսափեցեք «շտապ» կատարված գնումներից: Հարկավոր է գնել սննդարար, չափավոր էժան ապրանք, մի քանի օրվա բավարար քանակությամբ: Պետք է ապրանքը համեմատել նույն տեսքն ունեցող այն փաթեթների հետ, որոնք ավելի շատ ապրանք են պարունակում համարյա նույն գումարով: Պետք է նաև ստուգել ժամկետը: Նշված ամսաթվից հետո գնված սննդամթերքը երաշխավորագիր չունի որ թարմ կամ չփացած կլինի:

4. Երթևեկություն. Պետք է հաշվել նաև հասարակական տրանսպորտից օգտվելու ասենօրյա ծախսը աշխատանքի գնալ-գալու համար: Նույնիսկ կարելի է մշտական գնել, որը անսահմանափակ թվով երթևեկություն է ապահովում տրանսպորտի միևնույն ձևի համար:

5. Ապահովագրություն. Հատ հաճախ մարդիկ հնարավորություն չեն ունենում վճարել թանկ արժող բժշկական ծախսերը կամ որևէ արկածի դեպքում սեփական որևէ արժեքավոր ունեցվածքը նորով փոխարինելը: Ապահովագրություն գնելիս, որոշ գումար եք վճարում մի մասնավոր ընկերության: Նա իր հերթին պարտավորվում է նախօրոք որոշված մի գումար վճարել եթե որևէ դժբախտություն պատահի կամ ձեզ կամ ձեր ընտանիքի անդամներից մեկին: Զնայած ապահովագրություն գնելը կամովին է, որոշ տեսակի ապահովագրությունները պարզապես անհրաժեշտ են:

- Առողջապահության ապահովագրությունը, որը ծածկում է հիվ. նորանոցում մնալու ծախսերը և այնտեղ ստացած ինսամքի որոշ մասը: Որոշ ապահովագրական ծրագրեր կարող են ընդգրկել բժիշկի վարձը և բժշկական ստուգումների ծախսերը: Այս կարգի ապահովագրությունը հաճախ մասամբ վճարվում է աշխատատիրոջ կողմից: Բժշկական ինսամքի չափազանց սուր պայմաններում, առողջապահական ապահովագրությունը անհրաժեշտություն է:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ճեռնարկ/Գլուխ III

- Ավտոմեքենայի ապահովագրությունը պետք է ձեռք բերվի երբ ավտոմեքենա եք գնում: Հատ նահանգներում օրենքի դեմ է ավտոմեքենա վարելը առանց ապահովագրության: Եթե դուք ընդգրկվում եք որևէ դժբախտ պատահարի մեջ և համապատասխան ապահովագրություն չունեք, եթե մեղավորը ինքներդ եք, ապա գուցե և բոլոր ծախսերը ինքներդ վճարեք: Այդ գումարը հազարավոր դոլարների կարող է հասնել: Ավտոմեքենայի ապահովագրության շատ տեսակներ կան: Որոշ տեսակները կարող են վճարեն պատահարի մեջ վիրավորված մարդկանց հիվանդանոցի և բժիշկի ծախսերը: Դուք պետք է որոշակի ժամանակ հատկացնեք ծանոթանալու գոյություն ունեցող տարբեր տեսակի ապահովագրությունների հետ:
- Սեփականության ապահովագրությունը, որը օգնում է վճարել իրդեհով, գողությամբ կամ այլ պատահարների պատճառով կրած կորուստների համար:
- Կյանքի ապահովագրությունը ընտանիքի անդամներին ապահովում է ֆինանսապես, եթե ընտանիքի համար ապրուստ ապահովող անձը մահանա:

5. Հեռախոս. Այս ծառայությունը ըստ ցանկության է: Սակայն եթե դուք հեռախոս եք վերցրել, ապա պատասխանատու եք ամեն ամիս կատարել համապատասխան մուծումները: Ինչպես մյուս կենցաղային սպասարկման ծառայությունների ծախսերը, այնպես էլ հեռախոսի ծախսերի ամսեկան հաշիվը պետք է մուծվի նշված վերջին ժամկետից առաջ:

Երբ մշտական ծախսերը լրիվ պարզված են, կարող եք նկատի առնել:-

Բ. Փոփոխական Ծախսերը

1. Խնայողություն:
2. Ապահովագրության միջոցով չժածկվող բժշկական և ատամ-նաբուժական ծախսերը:
3. Հագուստեղեն:
4. Կահույք և տնային իրեր:
5. Այլ ծախսեր (անձնական կարիքներ և ցանկություններ):

2. ԳՆՈՒՄՆԵՐ ԱՆԵԼ

ԱՄՆ-ի շուկան գնորդին շատ մեծ ինսարավորություններ է տրամադրում: Բազմազան արտադրանքների անընդհատ ածը սկզբում շատ է դժվարացնում ընտրելու գործը: Բոլոր ԱՄՆ եկողները ունեն շատ կարիքներ: Այդ պատճառով էլ դուք պետք է ձեզ համար պարզեք առաջնայինը և համա-պատասխանաբար կատարեք ձեր գնումները: Բնական է, որ որոշակի գումար կծախսեք այնպիսի անհրաժեշտութիւնների վրա ինչպիսիք են սննդամթերքը և տնային տնտեսութեան իրերը, հետո կունենաք կարծ ժամկետով ծախսեր ինչպես օրինակ՝ հագուստեղենը և

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ III

Երկար ժամկետով գնումներ, ինչպիսիք են կահոյքը, հեռուստացոյցը կամ ավտոմեքենան: Խնայողությամբ գնումներ կատարելու հաշար դուք պետք է հետազոտեք թերթերի հայտերը, զեղչով վաճառող խանութները, ինչպես նաև սովորական խանութների մի որոշակի ժամկետի ընթացքում մեծ զեղչով կատարվող վաճառքները: Զեզ հովանավորողը, կամավոր գործակա- լությունը, ընկերները օգտակար խորհուրդ կարող են տալ ձեզ այդ առումով:

ա. Գնումներ կատարելու տեղեկատու աղբյուրներ

1. Հեռատես գնորդի համար թերթերը առաջին կարգի տեղեկատուներ են: Թերթում 3 բաժիններ կան, որոնք օգտակար տեղեկություն են տալիս ապրանք գնելու, ծախելու և այլ ծառայությունների մասին:

Ads - Հայտերը սովորական հայտարարություններ են, որոնք զետեղվում են թերթի տեքստի մեջ: Այդ հայտերը սովորաբար ոեկամում են որոշակի ապրանքներ և ծառայություններ, օրվա գների հետ միասին: Եթե զեղչ վաճառք գոյութիւն ունի որեւէ հատուկ ապրանքի համար, այն սովորաբար ընդգծվում է:

Supplements - Հավելվածները մեկուսացված հայտեր են, որոնք օրաթերթերի հետ միասին գալիս: Այս հավելվածները սովորաբար տպվում և բաժանվում են գնորդներին, երբ որոշակի խոշոր խանութներ իրենց ապրանքների մեծ մասը զեղչյալ գներով վաճառք են հայտարարում:

Classified Ads - Դասակարգված Հայտերը գնորդներին առաջարկում են ծառայությունների մի ամբողջ շարան, ինչպես նաև նոր և օգտագործված ապ- րանքներ: Սա աչքի ընկնող առաջին բաժինն է, որը սովորաբար կարելի է գտնել թերթի վերջում: Սովորական հայտերն ու հավելվածները խոշոր ֆիրմաների կամ մեծ խանութների ցանցի պատվերներով են տպվում, իսկ դասակարգված հայտերը սովորաբար տեղադրվում են թերթերի մեջ այն անհատների կողմից, որոնք որևէ հատուկ ծառայություն են առաջարկում, որևէ ապրանք ունեն ծախելու, վարձելու և կամ փոխանակելու: Այս բաժնի հայտարարությունները սովորաբար դասակարգված են լինում ըստ վերնագրերի այբենական կարգի, օրինակ՝ **HOUSES FOR SALE** - ծախութներ, **BICYCLES FOR SALE** - ծախութ հեծանիվներ, **LIVESTOCK FOR SALE** - ծախութ ընտանի կենդանիներ կամ **ELECTRICAL APPLIANCES FOR SALE** - էլեկտրական սարքեր:

Թերթերի օգնությամբ գնումներ անելը այն մեծ առավելությունն ունի, որ կարելի է նույն ապրանքի գները համեմատել և որոշել թե որտեղ է ամենից ձեռնտու այն գնել: Դա փաստորէն վերացնում է ժամա- վաճառությունն ու բազմաթիվ խանութներ այցելելու հետ կապված ծախսերը:

2. Փոստով պատվիրելու կատալոգները, տարբեր տեսակի վաճառվող իրերի ցուցակներ են, գների հետ միասին: Նրանք կարող են լինել միայն մի քանի էջ և

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ III

հատուկ բնույթի, ինչպես օրինակ ծաղկի հունդերի կատալոգ կամ կարող է բաղկացած լինեն մի քանի հարյուր էջերից ու պարունակեն վաշառքի ենթակա բոլոր տեսակների ամենաաներևակայելի ապրանքները։ Այս տեսակի կատալոգներից են Սիրզ, Ռոբակ և Հնկ. - **Sears, Roebuck & Co. Catalog** կատալոգը, Մոնգոմերի Ռուրդ կատալոգը և Շպիկել - **Spiegel Catalog** կատալոգը։

Կատալոգի մեջ ընդգրկված յուրաքանչյուր ապրանք ուղեկցվում է տվյալ ապրանքի նկարով և նրան վերաբերող այլ տեղեկություններով։ Օրինակ՝ չափերը, գույները, մատերյալը, կապոցային տեղեկություններ, ևայլն, որոնք անհրաժեշտ են պատվեր տալու համար։ Ցուրաքանչյուր իր ունի նաև իր ուրույն կատալոգային համարը, որը անհրաժեշտ է գրել պատվեր տալու դեպքում, տվյալ ապրանքը միարժեք ձևով բնորոշելու համար։

Այնուամենայնիվ, դուք պետք է մանրամասնորեն ծանոթանաք փոստով ապրանք պատվիրելու կարգուկանոնին և պայմաններին մինչև այդ ձևով ապրանք գնելը։

3. Դեղին էջերը - *The Yellow Pages*. Ճեր հեռախոսագրքի դեղին էջերը գնում կատարելու ամենալավ տեղեկատու աղբյուրներից մեկն է։ Դեղին էջերում զետեղված են նաև ճեր շրջակայքում գտնվող բոլոր տեսակի իրերի վերանորոգման կետերը։

բ. Էժան առևտուր

1. Զեղչով վաշառք - *Sales*. զեղչով վաշառվող իրերը նրանք են, որոնք վերագնահատվում և վաշառվում են իրենց սովորական գնից ցածր գնով։ Նրանք սովորաբար զեղչով վաշառքի օրվանից շատ առաջ են հայտարարվում։ Շատ խանութներ միշտ զեղչով ապրանքներ ունեն վաշառքի, սակայն այդպիսի վաշառքի համար ընտրված ապրանքներն ու ժամկետները միշտ փոփոխվում են։ Երբեմն զեղչված գնով նշանակված ապրանքը կարող է լրիվ ծախված լինել մինչև ճեր խանութ հասնելը։ Այդ դեպքում, դուք կարող եք «ույնչեկ» պահանջել (զեղչված գնով ապրանքը հետագայում գնելու իրավունք)։ Դա մի կտոր թուղթ է, որը նշում է զեղչված գնով վաշառվող ապրանքի անունն ու գինը։ Սա ճեզ թույլ կտա ապրանքը գնել իշեցրած գնով երբ խանութը լրացուցիչ կտանա այդ ապրանքից, նույնիսկ այն ժամանակ երբ զեղչ վաշառքը տվյալ ապրանքի համար վերջացած լինի։

2. Կտրոններ - *Coupons*. Երբեմն հնարավոր է կտրոններ ճեռք բերել, որոնք ճեզ հնարավ որություն են տալիս որոշ առարկաներ գնել զեղչված գնով։ Սովորաբար կտրոններ կարելի է գտնել թերթերում, նույն ապրանքի նախորդ գնած տուփի մեջ կամ գալիս են փոստով առանց պատվերի։ Տվյալ ապրանքը գնելու դեպքում, այդ կտրոնը պետք է նեղկայացնել գործակատարին, ապրանքի գինը վճարելու ժամանակ։

գ. Որտեղ առևտուր անել

Միացյալ Նահանգներում գոյություն ունեն ամենատարբեր տեսակների խանութներ և շուկաներ, որտեղ ապրանքների որակներն ու ծառայությունների տեսակները չափազանց տարբեր են իրարից: Ներքեւում թվարկում ենք մի քանի այդպիսի խանութներ և շուկաներ.-

1. Ինքնասպասարկման հսկա խանութներ (*Սուպերշուկաներ*) - *Supermarkets*: Այս խանութները ամենահարմարն են սննդամթերք գնելու համար: Դրանք շատ խոշոր ժամանակակից խանութներ են, որոնք ամեն տեսակ ուտեստեղ են են ծախում: Բացի սննդամթերքից, այս խանութները վաճառում են նաև մաքրիչ նյութեր, կոսմետիկա, ամսաթերթեր, որոշ հագուստեղեն, տնային տնտեսության իրեր, ինչպես նաև առանց դեղատոմսի վաճառվող դեղորայք:

2. Ունիվերսալ խանութներ - *Department Stores*: Այս խանութները մեծ մասամբ խոշոր խանութների մի շղթա են, որտեղ վաճառվում են հագուստեղեն, կահույք, սարքեր, տնտեսական ապրանքներ, կոշիկներ և այլ շատ տեսակի ապրանքներ:

3. Խնայողական խանութներ (*Թրիֆթ խանութներ*) - *Thrift Shops*: Այս տեսակի խանութները սովորաբար օգտագործված իրեր են վաճառում շատ մատչելի գներով: Ամերիկացիները ամենայն էլ չեն քաշ Հում օգտագործված հագուստեղեն կամ կահույք գնել այսպիսի խանութներից: Այս տեսակի խանութները սովորաբար պատկանում են բարեգործական ընկերություններին:

4. Մենատնտեսների շուկա - *Farmers' Markets*: ՄՆ-ի որոշ շրջաններում, մենատնտեսները գյուղից քաղաք են գալիս շաբաթվա հատուկ օրերին թարմ պտուղ, բանջարեղեն և ծաղիկներ ծախելու համար: Մինչդեռ գները կարող են ցածր չլինել, սակայն ապրանքի որակը սովորաբար ավելի բարձր է քան ինքնասպասարկման հսկա խանութներում:

5. «Էթնիկ» մթերային խանութներ - *"Ethnic" Grocery Stores*: Շատ քաղաքներում գոյություն ունեն էթնիկ (ազգային) խանութներ, որտեղ վաճառվում են աշխարհի տարբեր տեղերից բերված ուտեստեղեն:

դ. Ապրանքի համար վճարելը

Եթե ապրանքի ըտրությունը առաջին քայլն է, գնված ապրանքի համար վճարելը հաջորդն է: Սակարկելը սովորություն չէ: Մարդիկ միայն սակարկում են թանկարժեք իրերի վրա, ինչպիսիք են ավտոմեքենաները, տները, ինչպես նաև մենատնտեսների շուկաներում, սև շուկաներում, կամ եթե ուղղակի գնում եք սեփականատիրոջից:

Վճարման պարզագույն ձևը թղթադրամն է: Սակայն հաճախ հարմար չէ նույնիսկ վտանգավոր է մեծ գումարով թղթադրամ ունենալ մոտը: Այդ պատճառով, շատեր նախընտրում են չեկ կամ կրեդիտ կարտ օգտագործել: Անձնական չեկ ընդունում են համարյա ամենուրեք, բայց անհատից սովորաբար պահանջում են ներկայացնել ինքնությունը հաստատող երկու փաստաթուղթ: Քանի որ երբեք չի կարելի թղթադրամ ուղարկել փոստով, անձնական չեկը կամ «Դրամ պատվերներ» ը ամենապահով ձև են փոստով վճարելու համար: «Դրամի պատվերներ» կարելի է գնել կամ ձեռք բերել բանկերից, նամակատներից մի որոշակի գումարի համար: «Դրամի պատվերներ» գնելու ժամանակ գումարի մեծությունից կախված ձեզանից կպահանջվի վարձ վճարել: Կրեդիտ կարտերը հնարավորություն են տալիս ապրանքը գնել ապահով ձևով, սակայն հետագայում որոշ վարձ կգումարվի ապրանքի արժեքի վրա եթե ապրանքի արժեքի վճարումը կատարվի մասերով կամ նշանակված ժամկետից ուշ, այդպիսով կրեդիտ կարտով գնված ապրանքի գինը դարձնելով ավելի թանկ քան թղթադրամով կամ անձնական չեկով վճարելու դեպքում:

Ե. Գնումների հարկերն ու ստացականները

Հատ նահանգներում գնումներ կատարելու ժամանակ գնորդը բացի ապրանքի արժեքից վճարում է նաև վաճառքի հարկ: Հարկի չափը կախում ունի ապրանքի գնից:

Գնված ապրանքի հետ միասին դուք կստանաք նաև առուժախի ստացական: Գնված ապրանքների ստացականները պահելը լավ սովորություն է, քանի որ այս ստացականները ապրանքը գնելու ապացույցն են այն դեպքերի համար, երբ անհրաժեշտություն գտաք ապրանքը վերադարձնել ետ կամ փոխարինել ուրիշով:

Զ. Երաշխավորագրեր

Երաշխավորագրերը գնորդին պաշտպանում են անորակ գնված ապրանքներից: Երաշխավորագիրը գրավոր ձևով շարադրում է գնորդի և վաճառողի կամ արտադրողի պատասխանատվություններն ու պարտականությունները այն դեպքում, երբ գնված ապրանքը անսարքին է կամ ժամանակից շուտ է շարքից դուրս գալիս: Դա կարող է բացատրել նաև թե որ դեպքերում ապրանքը պետք է փոխարինել նորով, վերանորոգվի կամ ապրանքի արժեքը վերադարձվի գնողին: Անշուշտ նշված է նաև ուժի մեջ լինելու ժամկետը: Որոշ դեպքերում երաշխավորագրերը պահանջում են, որ գնորդները գրանցման կարտ ուղարկեն տվյալ ապրանքը արտադրող ընկերությանը, երաշխավորագրերը ուժի մեջ դնելու համար:

Է. Ապրանքը ետ վերադարձնելը

Յուրաքանչյուր խանութ կանոնադրություն ունի վերադարձված ապրանքի վերաբերյալ: Դուք պետք է ծանոթանաք դրա հետ: Պահեցեք գնված ապրանքների ստացականները այն դեպքերի համար երբ կցանկանաք վերադարձնել ապրանքը:

Եթե գնորդը անախորժության դեմ է կանգնում, կարող է զանգահարել գնորդի պաշտպանության տեղեկան գործակալությանը։ Այս կազմակեր-պությունները կմիջամտեն գնորդի օգտին, նրան խորհուրդ կտան կամ էլ այլ տեսակի օգնություն։

Ը. Ապառիկ օգտագործելը (Կրեդիտ)

Ապառիկ գնել նշանակում է ապրանքը գնել դրամը ավելի ուշ վճարելու պայմանով։ «Գնիր իմա, վճարիր հետո»։ Ապառիկ գնելը ունի իր առավելությունները։ Ապառիկը ձեզ հնարավորություն է տալիս գնել իրերը օգտագործել դրանք քանի դեռ ոչինչ չէ վճարված դրա համար։ Երբեմն խնայում եք ապրանքի գնի մեջ իմա գնելով, քանի ապրանքի գինը դեռևս չի բարձրացել։ Բայց ապառիկով գնելը կարող է և վտանգավոր լինել։ Դուք կարող եք փորձվեք շատ ապրանք գնել, այսպիսով ձեր ապագա եկամուտի մեծ մասը ստիպողաբար ապառիկ գնված իրերի վճարումներին հատկացնելով։ Իսկ վճարումները ժամանակին չկատարելու կամ ընդհանուրապես չկարողանալ վճարելու դեպքում, ապրանքը կարող են բռնագրավել։ Բացի դրանից ապրանքը այդ ձևով ավելի թանկ կնստի քան իր սկզբնական գինն է, քանի որ ապառիկ գնումների համար տոկոս է գանձվում։

Այնուամենայնիվ, մարդիկ ապառիկի կարիք ունեն մեծ գնումներ կատարելու համար, ինչպիսիք են տունը կամ ավտոմեքենան։ Կրեդիտ հաստատելը շատ կարևոր քայլ է շատ ընտանիքների և անհատների համար։

Խոշոր գնումների կամ փոխառությամբ դրամ վերցնելու համար առաջին անգամ ապառիկ ձեռք բերելը դժվար է։ Ավելի հեշտ կլինի ապառիկ ձեռք բերել փոքր գնումների համար։ Բայց երբեմն նույնիսկ այն ժամանակ հարկավոր է լավ ապառիկ ունենալ նոր ապառիկ ստանալու համար։ Ուրեմն, ինչպես և սկսել։ Ապառիկ հաստատելու ամենալավ միջոցը բանկերից մեկում խնայողության և անձնական չեկի հաշիվներ բացելն ու այդ հաշիվները միշտ դրական վիճակում պահելն է։ Կենցաղային սպասարկման և այլ ամսեկան ձեր պարտքերը ժամանակին վճարելը նույնպես կարևոր է ապառիկ ստանալու համար։ Հետո, շատ դժվար չպետք է լինի կրեդիտ կարտ ձեռք բերել ձեր շրջակայքում գտնվող որևէ խոշոր ինքնասպասարկման խանութից։

Ընտանիքներում, ամուսինները առանձին-առանձին պետք է կրեդիտ հաստատեն, որպեսզի բաժանվելու կամ ամուսինների մեկնումեկի մահվան դեպքում, մյուսը արդեն հաստատված «կրեդիտի գնահատական» ունենա։

Ի նշ բան է «կրեդիտ գնահատական» հասկացողությունը։ Հիմնականում լավ կրեդիտ գնահատական ունենալու համար, անձնավորությունը պետք է ապառիկ գնված ապրանքի վճարումները կատարած լինի ժամանակին։ Անձնավորությունը չպետք է թերացած լինի որևէ պարտքի վճարման մեջ։ Խանութներն ու այլ կազմակերպությունները որոնք որևէ անձի կրեդիտ գնահատականն են ուզում իմանալ, դիմում են տեղական կրեդիտի գրասենյակ։ Կրեդիտ գրասենյակը անձի

անցյալ և ներկա ֆինանսական գործարքների, ինչպես նաև նրան վերաբերող անձնական և ընտանեկան դրության վերաբերյալ, գրանցումներ է պահում։ Անհատները կարող են դիմել այդ գրասենյակներին իրենց կրեդիտ գնահատականի կրկնօրինակը ձեռք բերելու և առարկելու գրանցված տվյալները եթէ կարծում են, որ սխալմունք է թույլ տրված։

Որոշակի կրեդիտ կարտերի միջոցով կատարված գնումների կամ ծառայությունների գումարները պետք է վճարվեն ամբողջությամբ, որը նշանակում է, որ մեծ գնումների գումարները հնարավոր չեն բաժանել մասերի ժամանակի ընթացքում վճարելու համար։ Հատ կարևոր է նշել նաև, որ կրեդիտ կարտի հիմնարկները պարտքի քանակի վրա մինչև 21 տոկոսի հասնող դրամ են գանձում։ Անհրաժեշտ է ուշադրությամբ կարդալ կրեդիտի բոլոր պայմանները մինչև կարտը օգտագործելը։

Եթէ կրեդիտ կարտը կորած կամ գողացված է, անհապաղ պետք է հայտնել խանութին կամ հիմնարկությանը։ Կորուստի մասին ժամանակին տեղեկացնելը, կարտի տիրոջը զերծ է պահում անօրեն օգտագործված գումարները վճարելուց։

3. ԲԱՆԿԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամերիկացիները լայն չափով են օգտվում բանկերի ծառայություններից։ Դա արդյունք է այն զանազան և հարմարավետ առավելություններին, որ բանկերը առաջարկում են անհատներին և կազմակերպություններին։ Բանկի սովորական ծառայությունների մեջ են մտնում։

ա. Զեկի Հաշիվներ

Զեկի հաշիվը բոլորից շատ տարածված և օգտագործվող բանկային ծառայությունն է։ Հավանաբար դրա պահանջը կօգագ աշխատանքի մտնելուց անմիջապես հետո։ Հատ մարդիկ խուսափում են մեծ գումարներով թղթադրամ ունենալ իրենց գրաններում ապահովությունից ելնելով, այդ պատճառով էլ անձնական չեկ են օգտագործում ամենօրյա ծախսերի համար։ Երբ հաշիվը «բացված է», հաճախորդին թույլատրվում է փողը պահել հաշվի մեջ, կամ հանել երբ անհրաժեշտ է։ Բանկի հաճախորդին չեկերի գրքույկ է տրվում։ Անհրաժեշտության դեպքում չեկը պետք է լրացնել համապատասխան գումարով, ստորագրել ու տալ թղթադրամի փոխարեն։ Հաշիվ բացելու համար պետք է բանկ գնալ հարկավոր կարգադրություններ անելու և ստորագրության կարտը լրացնելու համար։ Բանկն ընտրելիս դուք պետք է հիմնվեք նրա տվյալ ծառայությունների վրա, կամ ժամերի հարմարավետությունն ու դիրքը հաշվի առնելով։ Ամուսինները կարող են մեկ միացյալ հաշիվ բացել և երկուսով չեկեր օգտագործել։

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ III

Զեկի հաշիվ ունեցող մարդիկ պետք է լավ ծանոթ լինեն չորս հիմնական ձևերի կամ պրոցեդուրաների հետ.- փող դնելու կտրոն, չեկեր, չեկի գրքույկի գրանցում և հաշվի ամսեկան տեղեկագիր:

1. **Փող դնելու կտրոն - Deposit Slips** .Եթի արդեն բացված հաշիվ ունեք, կարող եք ցանկանալ կանոնավոր ձևով փող դնել հաշվի մեջ: Փող դնելու կտրոնները սովորաբար կրում են ճեր անունը (կամ երկուսիդ անունները, եթե ամուսիններով եք բացել հաշիվը) և հաշվի համարը վրան տպված կամ բաց տեղ, որտեղ կարելի է լրացնել այդ տեղեկությունները: Փող դնելու կտրոնները ծառայում են որպես ստուգիչ միջոց, երբ թղթադրամի հետ միասին նաև մի քանի չեկեր եք ուզում դնել հաշվի մեջ: Կտրոնը լրացնելուց հետո թղթադրամի և չեկերի հետ միասին հանձնում եք բանկի աշխատողին, որը իր հերթին ձեզ ստացական կտա: Դատարկ կտրոններ ձեզ կտան երբ հաշիվը բացեք: Լրացուցիչ կտրոններ կարելի է ստանալ բանկի որևէ աշխատողից:

2. **Չեկեր - Checks** .Զեկը լրացնում ու ստորագրում է այն անձը, որի անունով (անուններով) որ բացված է հաշիվը: Զեկ լրացնելիս պետք է նշեք.-

1. ամիս ամսաթիվը:

2. այն անձի կամ կազմակերպության անունը, որի համար որ գրվում է չեկը:
3. թվերով գրված գումարը, օրինակ Հօծ՝ ծծ, Հիսո՞նծ ներառյալ դոլարներն ու սենտերը:
4. տառերով գրված գումարը, օրինակ «տասը դոլար և ոչ մի/100», «երեսունհինգ դոլար և 50/100»:
5. Ճեր ստորագրությունը:

Դատարկ չեկեր են տրվում սովորաբար երբ հաշիվը բացվում է, իսկ տպագրված չեկերը պատրաստ են լինում մի քիչ ավելի ուշ, ընդհանրապես քիչ վարձի դիմաց: Յուրաքանչյուր տպված չեկ պետք է ունենա տիրոջ անունը, հասցեն, չեկի համարը և հաշվի համարը: Յուրաքանչյուր չեկ պետք է ստուգել հավաստիանալու համար, որ տվյալները ճիշտ են տպված: Եթե չեկ է կորչում, պետք է անհապաղ բանկին հայտնել, չ' ի վճարումը կանխելու համար:

3. **Չեկի գրքույկի գրանցում - Checkstubs or Registers** .Երբ չեկ եք գրում, գրքույկի մեջ պետք է գրանցել օրը, ում համար է գրված, ինչ գումարով: Այս գրքոյից պետք է պարունակի բանկի հետ ճեր կատարած բոլոր գործարքների ցանկն ու դրամի մուտքն ու ելքը, յուրաքանչյուր գործարքից հետո ցույց տալով բանկում մնացած ճեր գումարը, որը կոչվում է «բալանս»: Փաստորեն «բալանս» այն գումարն է, որը դուք դեռ ունեք ծախսելու:

4. **Հաշվի տեղեկագիր - Account Statement** . Ամեն ամիս բանկը իր հաճախորդներից յուրաքանչյուրին իր հաշվի տեղեկագիրն է ուղարկում, որը ցույց է տալիս տվյալ

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ III

Ժամանակամիջոցում բոլոր մուտք արված և դուրս գրված գումարները, ինչպես նաև բանկի գանձած վարձերը: Որոշ բանկեր ամսեկսն վարձ են գանձում իրենց ծառայությունների համար: Ուրիշ բանկեր փոքր վարձ են գանձում յուրաքանչյուր կատարված գործարքի համար: Վերջապես մի այլ խմբի բանկեր օգտագործում են այդ մեթոդների գուգորդումը: Շատ քչերն են, որ ոչ մի վարձ չեն գանձում: Իսչպիսի մեթոդ էլ որ բանկը օգտագործելու լինի, դա արտացոլված կլինի ամսեկան տեղեկագրի մեջ: Այդ տեղեկագրի տվյալները կարելի է օգտագործել ստուգելու համար ձեր սեփական գրանցումները գրքույթի մեջ և հավաստիանալու համար, որ բանկը սխալներ թույլ չի տվել: Եվ վերջապես մարած չեկերը (նրանք, որոնք վրարված են) սովորաբար ամսեկան տեղեկագրի հետ վերադարձվում են և դառնում են ձեր նախորդ ծախսերի պաշտոնական ստացականները:

Շատ բանկեր տոկոս են վճարում չեկի հաշիվների վրա, բայց մինիմում բալանս է պետք պահպանել, որը սովորաբար բավական բարձր է: Տոկոսը վճարելու ժամկետը փոփոխական է: Երբ այդ տոկոսն ավելանում է հաշվի վրա, ամսեկան տեղեկագրի մեջ «բալանս» համապատասխան գումարով ավելացած է լինում:

Երբ գրված չեկի գումարը ավելի մեծ է քան հաշվի մեջ գոյություն ունեցող բալանսը, հաշիվը «գերածախսված» է համարվում և դա շատ վատ հետևանքներ կարող է ունենալ հաշվի տիրոջ նկատմամբ: Նրա հաշիվը կարող է փակեն կամ իր կրեդիտ գնահատականը կտուժի: Հնարավոր են նաև տուգանք, նույնիսկ դատական միջոցառումներ ձեռք առնվեն և գործը հասնի բանտարկության, եթե «գերածախսված» գումարը զգալի մեծ է: Բայց այս բոլորից կարելի է խուսափել, եթե «գերածախսելու» մենաշնորհից եք օգտվում:

բ. Խնայողությունների հաշիվ

Խնայողության հաշիվ - savings account - բացելը դժվար չէ: Պահանջվում է միայն Սոցիալ Ապահովության կարտ և շատ քիչ բանակությամբ դրամ: Այս տեսակի հաշիվները նախատեսված են ամենից առաջ փող կուտակելու և տոկոս շահելու նպատակով:

Որոշ խնայողական հաշիվներ «անցագիրք» (պասբուկ) - passbook - ունեն, որտեղ գրանցվում են մուտք արված գումարները, շահած տոկոսները, հանված գումարները և բանկի վարձերը (եթե գոյություն ունեն): Անցագիրքը սովորաբար մնում է անձնավորության մոտ, որին պատկանում է հաշիվը, բայց պետք է բանկ բերվի յուրաքանչյուր գործարքի ժամանակ:

Առև տրական բանկերը միակ տեղերը չեն, որտեղ խնայված փողի վրա տոկոսով դրամ կարելի է շահել: Խնայողության համար դրամ կարելի է դնել նաև «խնայողություններ և Փոխառություն» հաստատությունները, պրոֆմիությունները, կրեդիտ միությունները դրանցից մի քանիսն են միայն:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ III

գ. Փոխառություններ

Բանկերը միակ տեղերը չեն, որտեղ կարելի է փոխառությամբ փող վերցնել: Այնուհանդերձ, բանկերը փոխառությամբ փող են առաջարկում հարմար տոկոսի դիմաց, այն պատճեռով էլ լավ կլինի առաջ բանկ այցելեք երբ պարտքով փող առնելու կարիքն ունենաք:

Հատ մարդկանց համար, որոնք նոր են հաստատվել համայնքում, շատ դժվար է նույնիսկ աննշան գումարով փոխառություն վերցնել կամ պետք է իմանան մեկին, որին կարելի է համարել «լավ կրեդիտ ռիսկ» և որը պատրաստ է երաշխավորել և ստորագրել փոխառություն խնդրելու դիմումները: Այդ երաշխավորող-ստորագրող պարտավորվում է պարտքը վճարել այն դեպքում, եթե դուք այն վերադարձնել չկարողանաք: Ո՞վ է համարվում լավ կրեդիտ ռիսկ: Բանկերից շատերը կասեն, նա ով հաստատուն եկամուտ ունի, բանկում հաշիվ և իր պարտքերը ժամանակին է վճարում: Այս տեսակի մարդկանց է, որ բանկերը սիրով փոխառություն կտան կամ կընդունեն որպես երկրորդ ստորագրող (ուրիշին երաշխավորելու համար):

դ. Ապահով փող դնելու տուփեր

Ապահով փող դնելու տուփերը - Safety Deposit Boxes - ապահով տեղեր են, որտեղ կարելի է պահել կարևոր փաստաթղթեր կամ իրեր: Այս տուփերը փականքով են, լինում են տարբեր չափսերի և գտնվում են բանկերում այն մարդկանց համար, որոնք լավ ապահովություն են ուզում իրենց թանկարժեք իրերի համար: Որոշ բանկեր այդ տուփերը առաջարկում են իրենց հաճախորդներին որպես իրենց ծառայությունների մի մասը: Հատ բանկեր, այնուամենայնիվ, մի փոքր վարձ են գանձում այդ տուփերը օգտագործելու համար:

Բ. ԱՄՓՈՓՈՒՄ

ՄՆ-ի տնտեսական և ֆինանսական օրենքներն ու նրանց գործածությունը կարող են բավականին բարդ լինել, սակայն գաղթականները կարող են շատ բան սովորել այս գլխի պարունակությունից և ուրիշ աղբյուրներից, ինչպիսիք են բանկերն ու օրաթերթերը: Քանի որ գաղթականները հավանաբար սահմանափակ տնտեսական հնարա- վորություններ կրւնենան իրենց ԱՄՆ գալու առաջին տարիներին, ուստի շատ էական է կարողանալ լավագույն ձևով օգտագործել ունեցած փողը: Հեռատեսորեն բյուջե կազմելը, համեմատելով գնումներ կատարելը և կրեդիտ ու բանկային ծառայություններից խելամտորեն օգտվելը շատ կօգնի գործին:

ԳԼՈՒԽ IV

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ա. ՆԱԽԱԲԱՆ

Միացյալ նահանգներում ուսումնական հաստատությունները արտացոլում են ազգի հիմնական արժանիքները, հատկապես այսպես կոչված հավասար հնարավորությունների գաղափարը: Միացյալ նահանգներում ուսումը հասանելի է յուրաքանչյուրին անկախ տարիքից, ցեղից և փոքրամասնություն կազմող ազգությունից, կամ սոցիալ դասակարգից:

Օրենքը պահանջում է, որ երեխաները սկսեն սովորել վեց տարեկան հասակից և լինեն դպրոցում մինչև 16 տարեկան հասակը: Շատ աշակերտներ սակայն, տասնըերկուերորդ դասարանը ավարտում են առնվազն 17 տարեկան հասակում:

Երեխաների համար դպրոցը բաժանվում է երկու մասի «նախնական» (վեց տարեկանից մինչև տասնըմեկ տարեկան հասակը ներառյալ), և «երկրորդական» (12 տարեկանից մինչև 17): Նրանք որոնք ավարտում են երկրորդական վարժարանը ստանում են միջնակարգի վկայական:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս երեխաների համար ուսման 12 տարիների բաժանումները: Դուք ձեր երեխաներին կարող եք ուղարկել ձեր ապրելատեղիի մոտ գտնվող տարբեր տեսակի դպրոցներ, նախ կախված նրանց տարիքից և երկրորդ թե տվյալ համայնքը ինչպես է բաժանում ուսման 12 տարիները:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ IV

Տարրական Կրթություն

(Կարող է կոչվել նաև.-
Նախնական դպրոց,
տարրական դպրոց)

տարիք.-	6	դասարան.-	1
	7		2
	8		3
	9		4
	10		5
	11		6

Երկրորդական Կրթություն

(Կարող է կոչվել նաև.-
Միջին դպրոց,
միջնակարգ դպրոց)

տարիք.-	12	դասարան.-	7
	13		8
	14		9
	15		10
	16		11
	17		12

Չափահասները (18 տարեկան և բարձր) նույնպես ուսման շատ հնարավորություններ ունեն: Այդպիսինքից շատեր միաժամանակ և աշխատում են և հաճախում դպրոց: Նկատի ունենալով, որ ուսման վարձը միջնակարգից հետո որոշ բարձրագույն ուսումնական հաստատություններում կարող է շատ բարձր լինել, հնարավորություններ շատ կան միաժամանակ և բարձրագույն ուսումնական հաստատություն հաճախելու և որևէ տեղ կես դրույք աշխատելու:

Հետևյալները ուսման հնարավորությունների և նրանցից բխող պատասխանատվությունների վերաբերյալ մի հակիրծ ամփոփոգիր է:

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա. Դպրոցի տեսակները

1. Հանրային դպրոցներ - *Public Schools* - Բոլոր երեխաները կարող են 12 տարի հաճախել հանրային դպրոցներ: Որոշ հանրային դպրոցներ ունեն նաև մեկ տարի տևող «Մանկապարտեզ»: Մանկապարտեզը նախորդում է առաջին դասարանին: Հանրային դպրոցների ծախսերը կատարվում է քաղաքացիներից գանձված տեղական հարկերից (պահումներից) գոյացած գումարով: Այդ պահումներից առաջացած գումարի ծախսումները ղեկավարում է յուրաքանչյուր շրջանի «Դպրոցական մարմինը»: Դպրոցական մարմնի անդամները ընտրվում են այդ շրջանի բոլոր քաղաքացիների կողմից: Քանի որ տվյալ համայնքի յուրաքանչյուր քաղաքացի այս ձևով մասնակցում է տեղական կրթական սիստեմի աշխատանքներին այդ պատճառով էլ դա կոչվում է հանրային կրթական սիստեմ:

ԱՄՆ-ի բոլոր հանրային դպրոցներում դասավանդվող առարկաները հիմնականում հետևյալներն են, գրել ու կարդալ, մաթեմատիկա, Միացյալ Նահանգների և աշխարհի պատմություն, գիտություն, արվեստ և երաժշտություն և ֆիզիկական դաստիարակություն: Դասընթացների քանակն ու պահանջները

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ IV

որոշվում են դպրոցների տեղական մարմինների կամ նահանգի կրթական բաժանմունքի կողմից: Այս պատճառով էլ դասընթացների պահանջները նահանգից նահանգ, քաղաքից քաղաք կամ նույնիսկ դպրոցից դպրոց կարող են տարբեր լինել:

Էլեմենտար մակարդակի դպրոցը ունի որոշակի պարտադիր առարկաներ: Երկրորդական կամ միջնակարգ դպրոցը բացի պարտադիր առարկաներից ունի նաև ընտրովի առարկաներ: Հատ միջնակարգ դպրոցներում դասավանդվում են նաև մասնագիտական առարկաներ ինչպիսիք են ավտոմեխանիկություն, ատաղձագործություն, տնային տնտեսություն, գյուղատնտեսություն, գրասենյակային աշխատանք կամ քարտուղարություն: Այն աշակերտները որոնք որոշում են միջնակարգը ավարտելուց հետո անմիջապես աշխատանքի անցնել, սովորաբար վերցնում են վերոհիշյալ մասնագիտական առարկաները: Այս առարկաները պարտադիր չեն և յուրաքանչյուր աշակերտ կարող է ընտրել իր ցանկացած մասնագիտությունը:

2. Մասնավոր դպրոցներ - Private Schools - Միացյալ Նահանգներում հանրային դպրոցներից բացի գյուղություն ունեն նաև մասնավոր դպրոցներ: Այս տեսակի դպրոցների մեծ մասը եկեղեցիների կից են և դեկավարվում են կրոնական խմբերի կողմից: Մասնավոր դպրոցները սովորաբար վճարովի են: Դպրոցից կախված ուսման վարձերը կարող են խիստ տարբերվել իրարից: Այս վարձերը ուղղակի վճարվում են դպրոցին և ոչ մի կապ չունեն հարկերի հետ: Եթե նույնիսկ ձեր երեխաները հաճախում են մասնավոր դպրոցներ, դուք պարտավոր եք վճարել հանրային դպրոցների համար նախատեսված պետական հարկերը:

3. Նախնական դպրոցներ - Pre-schools - Հատ շրջաններում վեց տարեկանից փոքր երեխաների համար գոյություն ունեն դպրոցներ: Այս դպրոցները երբեմն անվանում են մանկապարտեզներ, կամ փոքրերին խնամք տանելու դպրոցներ կամ նախնական դպրոցներ, որոնց նպատակն է դաստիարակչական աշխատանք և խնամք տանել երեխաների հետ առաջին դասարան ընդունվելուց առաջ: Այս դպրոցները սովորաբար մասնավոր են և վճարումով: Դրոշ համայնքներում մանկապարտեզները կարող են հանրային դպրոցների մասը կազմել: Այսպիսի մանկապարտեզները սովորաբար լինում են անվճար, իսկ հաճախելը ոչ պարտադիր: Մեծամասամբ նախնական դպրոցներ հաճախելու թույլատրում են 2 տարեկանից մինչև 5 տարեկան երեխաներին:

բ. Դպրոցների վերաբերյալ գիտելիքներ

1. Դպրոցի կազմը - School Staff - Էլեմենտար կամ տարրական դպրոցներում, սովորաբար մեկ ուսուցիչը պատասխանատու է մեկ դասարանին և դասավանդում է այդ դասարանի բոլոր առարկաները: Միջնակարգ դպրոցներում տարբեր ուսուցիչներ դասավանդում են տարբեր առարկաներ: Մշտական միևնույն դասարանում դաս անցկացնելու փոխարեն, յուրաքանչյուր առարկայի աշակերտները տեղափոխվում են

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ IV

տարբեր լսարաններ: Ուսուցիչներից բացի միջնակարգ դպրոցներում կան նաև խորհրդատու դաստիարակներ, որոնք սովորաբար օգնում են աշակերտներին գոյություն ունեցող դժվարությունները հարթելու, ինչպես նաև դաստիարակչական աշխատանք տանելու և մասնագիտություն ընտրելու կապակցությամբ ուղղություններ տալու համար:

2. Երթևեկություն - Երբեմն, երբ դպրոցը մոտ է գտնվում տանը, երեխաները կարող են քայլելով գնալ դպրոց: Իսկ դպրոցից հեռու ապրող երեխաների համար գոյություն ունի ձրի երթևեկություն, տնից դպրոց իսկ դասերից հետո դպրոցից տուն:

3. Հաճախումը - Աշակերտները մեծամասամբ դպրոցում են լինում օրեկան 6 ժամ, երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը ներառյալ: Ուսումնական տարին սովորաբար սկսվում է Սեպտեմբերին և շարունակվում մինչև Հունիս: Հունիս, Հուլիս և Օգոստոս ամիսները ամառային արձակուրդներն են: Արձակուրդային այս ամիսները երբեմն՝ դպրոցի կողմից օգտագործվում է տարբեր պատճառներով ուսումնական տարվա ընթացքում բաց թողնված դասերը յուրացնելու, կամ ամառային հատուկ կուրսերի համար, որոնց մասնակցելը նույնպես կամովի է: Կան նաև այլ կարծ արձակուրդներ և տոնական օրեր ուսումնական տարվա ընթացքում, որոնց ժամանակ դպրոցները փակ են: Մի քանի փոքրամասային կամ կրոնական խմբեր ունեն այլ տոնական օրեր ևս: Այս տոնական կամ հատուկ օրերը սովորական տոնական օրեր չեն, սակայն երեխաների դպրոցից բացակայելը այդպիսի օրերին հարգելի է: Այդպիսի դեպքերում ծնողներից հաճախ նախօրոք գրված թույլտվություն է պահանջվում:

Երեխաների դպրոց հաճախելը ծնողների պատասխանատվությունն է: Եթե երեխան բացակայում է դպրոցից, անհրաժեշտ է, որ ծնողները բացատրագիր ուղարկեն բացակայության համար: Որոշ դպրոցներ նույնիսկ կարող են պահանջել, որ երեխայի բացակայության օրը ծնողները զանգահարեն դպրոցի ղեկավարությանը ու հայտնեն որ իրենց երեխան բացակայելու է, ինչպես նաև գրավոր բացատրագիր ուղարկեն երեխայի հետ երբ նաև սկսի հաճախել դպրոց: Անհարգելի բացակայությունները, հատկապես եթե այդպիսիք տեղի են ունենալու հարաբերական դպրոցից հեռացնելուն պատճառ դառնան իսկ հետո ծնողներից պահանջվում է գնալ դպրոց և պարզաբանել իրենց երեխայի անհարգելի քացակայությունը և դպրոցի ղեկավարության հետ միասին միջոցներ ձեռնարկել երեխային ծիշտ ուղղությունը վրա բերելու համար:

4. Ընդմիջում - Աշակերտները սովորաբար իրենց կեսօրյա ընդմիջման ժամանակ սնվում են դպրոցում: Հատ դպրոցներ աշակերտներին չեն թույլատրում դուրս գալ դպրոցական շրջապատից: Աշակերտները ընդհանուրապես իրենց նախարար բերում են տնից կամ գնում են դպրոցին կից ծաշարանից: Ուտեստեղենը դպրոցի կից ծաշարաններում սովորաբար էժան է և լավորակ:

5. Գրքեր - Հանրային շատ դպրոցներ աշակերտներին մատակարարում են այն դասագրքերով, որ անհրաժեշտ է լինելու տվյալ տարվա ընթացքում: Ուսումնական տարվա վերջին գրքերը պետք է վերադարձվեն դպրոց: Գիրքը կորցնելու կամ գրքին վնաս հասցնելու դեպքում, ծնողները պարտավոր են վճարել այդ գրքի արժեքը:

6. Անգլերեն լեզվի դասեր - Դպրոցները մի քանի տեսակի հնարավորություններ ունեն ոչ անգլերեն խոսող երեխաներին անգլերեն լեզուն սովորեցնելու համար: Այն աշակերտների թիվը, որոնք քիչ գիտեն կամ երբեք չգիտեն անգլերեն շատ է տվյալ դպրոցում, անգլերեն լեզվի դասերը կարող է առաջարկվել որպես այսպես կոչված «Անգլերենը Որպես Երկրորդ լեզու» (ԱԵԼ - ESL): Երբեմն նույնիսկ երկ-լեզու ուսումնական դասեր գոյություն ունեն, որտեղ որոշ ժամանակ դասերը անց են կացվում երեխայի մայրենի լեզվով: Եթե քիչ է այդպիսի աշակերտների թիվը, ապա այդ դեպքում դպրոցները հատուկ դասատուներ են նշանակում այդ երեխաների հետ պարապմունքներ անցկացնելու համար: Ծնողները պետք է աշալուրջ հետևեն վստահ լինելու համար, որ իրենց երեխաները հաջողությամբ են յուրացնում անգլերեն լեզուն:

7. Գնահատական - Դպրոցներում աշակերտների գիտելիքներն ու վարքը գնահատելու տարբեր եղանակներ գոյություն ունեն: Աշակերտները իրենց գնահատականները ստանում են նախ ակադեմական առաջադի-մության, այսինքն առաջադրանքները կատարելու, ստուգարքների արդյունքների համար, ինչպես նաև դպրոց հաճախելու և դպրոցում ցուցադրած իրենց վարքի համար: Աշակերտների գիտելիքների մակարդակը գնահատելու համար գոյություն ունեն գնահատման տարբեր եղանակներ: Սովորաբար գնահատման համար դպրոցները օգտագործում են «Ճ»ից մինչև «Ե» տառերը, որտեղ Զ նշանակում է գերազանց իսկ Ե-Ը՝ վատ: Դպրոցներ կան որ օգտագործում են Վ-Ը բավարար իսկ Ի՝ անբավարար, կամ հանձնված, չհանձնված: Նաև կան դպրոցներ, որ երբեք գնահատական չեն նշանակում, այլ իենվում են ուսուցչի գրավոր գնահատականի վրա, թե տվյալ աշակերտը ինչպիսի կարողություններ ունի տվյալ առաջարկից:

Հատ դպրոցներ աշակերտներին տեղափոխում են մի դասարանից մյուսը, կամ էլեմենտար դպրոցից միջնակարգ դպրոց առանց ստուգարքների կամ քննությունների: Եթե աշակերտի դպրոցում կատարած աշխատանքը բավարար է տարվա ընթացքում, ապա հաջորդ տարվա սկզբին նրան տեղափոխում են հաջորդ դասարան: Մի քանի նահանգներում միջնակարգ դպրոցը ավարտելու համար աշակերտներից պահանջվում է հանձնել որոշ ստուգարքներ կամ քննություններ: Այս քննությունները բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար չեն: Հաճախ երկրի բոլոր հանրային դպրոցների աշակերտներին տալիս են միևնույն քննական հարցերը: Այդ քննությունների արդյունքներով չի որոշվում աշակերտի՝ դպրոցը լավ կամ վատ ավարտելը. այդ արդյունքները պարզապես ամբողջ երկրով մեկ աշակերտների հաջողությունների արդյունքների համեմատման համար է:

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ IV

Սովորաբար երեխաներին համապատասխան դասարաններն են տեղավորում կախված նրանց տարիքից: Որոշ դպրոցներ վեց տարեկանից մեծ երեխաներին դպրոց ընդունելու ժամանակ ստուգարք են սանցկացնում: Այս ստուգարքների արդյունքները օգտագործում են աշակերտներին համապատասխան դասարան տեղավորելու համար և ոչ թե ընդհանուրապես դպրոց ընդունելու կամ չընդունելու: Այդ ստուգարքներով չի որոշվում երեխային դպրոց հաճախել թույլատրելու ենթեու:

8. Արտառևսումնական գործունեություններ - Դասերի և սովորական դպրոցական ծրագրերի հետ գուգահեռ որոշ դպրոցներում գոյություն ունեն նաև սպորտային և խմբակային պարապմունքներ ինչպես դասերի ժամերին, այնպես էլ դասերից հետո: Այդ տեսակի պարապմունքներից են բասկետբոլ, ամերիկյան ֆուտբոլ, բեյսբոլ, թեթև ատլետիկա, վոլեյբոլ, արվեստ, խմբային մրցակցություններ, գրական խմբակներ, դպրոցական թերթերին և ամսաթերթերին մասնակցելը ևայլն: Գոյություն ունեն նաև արհեստ սովորեցնող խմբակներ:

Որոշ դպրոցներ այս տեսակի դպրոցական պարտադիր ծրագրերից դուրս կատարվող աշխատանքները դիտում են ուղղակի հավելյալ, և ոչ թե երեխայի հիմնական ուսուցման ծրագրի մի մաս: Այդ պատճառով էլ դպրոցները սովորաբար պահանջում են, որ աշակերտները բաւարար գնահա- տականներ ունենան հիմնական առարկաներից այս տեսակի միջոցառումներին մասնակցելու իրավունք ձեռք բերելու համար:

9. Վարքն ու կարգապահությունը դպրոցում - Դասարանում աշխատելուց բացի աշակերտներից պահանջվում է նաև ամբողջությամբ և ժամանակին կատարել տնային աշխատանքները: Այն աշակերտները, որոնք ուշանում են դասերից առանց հարգելի պատճառի, կամ որոնք ուշացումով են կատարում հանձնարարված պարտաճանությունները կարող են պատասխանատվության ենթարկվել: Պատիժները կարող են տարբեր լինել. դասերից հետո մնալով կատարել լրացուցիչ տնային աշխատանք, չթույլատրել այդպիսիներին մասնակցելու որոշակի միջոցառումներին կամ կարող են կարգի իրավիրվել դպրոցի ուսումասվարի կամ այլ պաշտոնյայի կողմից: Ընդհանուրապես, Միացյալ Նահանգների հանրային դպրոցներում ֆիզիկական պատիժը արգելված է, սակայն երբեմն բացառություններ թույլ են տալիս:

գ. Սովորական կամ հասարակ խնդիրներ

Հատ նորեկ երեխաներ դպրոցական կյանքին հարմարվելու ընթացքում դեմ են առնում որոշ արգելքների. այսպես, եթե նրանք որոշ չափով անգլերեն խոսել չգիտեն, դասընկերները կարող են երես դարձնել իրենցից: Նոր երկրում գտնվող երեխայի համար, դաշտ վատ զգացողություն է: Այս արգելքը անշուշտ ժամանակի ընթացքում կվերանա, երբ երեխան սկսի խոսել անգլերեն:

Անգլերեն լեզուն չիմացող կամ հատուկ ուշադրություն պահանջող երեխաներին ուսանողական հիմնական դասարաններում ընդրկելը, նույնպես պոտենցիալ դժվարությունների առիթ է հանդիսանում: Այդպիսի երեխաներին հիմնական աշակերտների հետ տեղավորելը առավել սովորական է փոքր քաղաքներում և բնակավայրերում, որտեղ դպրոց հաճախող նորեկ երեխաների թիվը քիչ է, իսկ այդպիսի դպրոցների հնարավորությունները սահմանափակ: Եթե դպրոցում համապատասխան թարգմանիչներ չկան, խոսակցական կապ հաստատելը նրանց հետ անշափ դժվար է: Սակայն, չնայած այդպիսի դժվար կացություններին, աշակերտները ինքնազարգացմամբ աստիճանաբար սկսում են դպրոցական կյանքի լիիրավ մասնակիցը դառնալ: Սա այնքան էլ զարմանալի երևույթ չէ, քանի որ երեխաները նոր լեզու սովորելու և շրջապատին հարմարվելու մեծ կարողություններ ունեն:

Գլխավորապես մեծ քաղաքների դպրոցներում, նորեկ երեխաների առաջ կանգնած ամենակարևոր խնդիրներից մեկն էլ այդ դպրոցներում գոյություն ունեցող փոքրամասնություն կազմող ազգությունների երեխաների, ինչպես նաև տարբեր ցեղի պատկանող երեխաների միջև գոյություն ունեցող լարված վիճակն է: Տարբեր ազգությունների երեխաների միջև եղող հակասություններին նպաստող որոշ պատճառներ գոյություն ունեն: Բախումներն ու հակասությունները աշակերտների տարբեր խմբերի միջև շատ հաճախ կարող են տեղի ունենալ, պարզապես յուրաքանչյուրի ազգային սովորութներին տեղյակ չլինելու պատճառով: Դպրոցների դեկանարությունը շատ լուրջ ուշադրություն է դարձնում փոքրամասնություն կազմող ազգությունների խմբակցությունների միջև տեղի ունեցող բախումներին: Այդպիսի բախումների տեղի ունենալու դեպքում դուք կամ ձեր երեխան պետք է տեղյակ պահեք դպրոցի դեկանարությանը: Սակայն պետք է շնչտել, որ յուրաքանչյուր երեխայական կոհիվներին այդպիսի պիտակ տալ պետք չէ:

Դ. Ուսման հետ գուգահեռ աշխատանք

Դպրոց հաճախելու հետ մեկտեղ չափահաս աշակերտներին թույլ է տրվում նաև աշխատել. շատ աշակերտներ այդպես էլ անում են: Աշակերտների համար հարմար աշխատանքներից են առավոտյան օրաթերթերի բաժանումը, տներին կից հողամասերում աշխատելը, փոքրահասակ երեխաներին խնամք տանելը, խոշոր պարենային խանութներում աշխատելը կամ այսպես կոչված «շտապ ուտեստեղենի» ծաշարաններում աշխատելը: Աշակերտներն ընդհանուրապես աշխատում են սովորական դպրոցական ժամերից առաջ կամ հետո և շաբաթավերջերին (շաբաթ և կիրակի): Ամառային արձակուրդների ամիսներին շատ աշակերտներ աշխատում են լրիվ դրույք:

Ե. Ծնողական պարտականություններ

Ծնողների անմիջական պարտականությունն է հետևել, որ իրենց երեխան հնարավորին չափ շուտ դպրոց ընդրկվելի: Հովանավորողներն են սովորաբար

օգնում գաղթականների երեխաներին դպրոց ընդունվելու համար: Նույնիսկ եթե դուք ԱՄՆ եք եկել ուսումնական տարվա ընթացքում, պետք է աշխատեք հնարավորին չափ շուտ ձեր երեխային դպրոց տեղավորել և ոչ թե սպասեք մինչև հաջորդ տարվա սկզբին: Երեխայի ուսման համար հանրային դպրոցի ընտրությունը սովորաբար կախում ունի երեխայի տարիքից և ձեր ապրած շրջանից:

Երբ ծնողները իրենց երեխաներին առաջին անգամ են դպրոց տանում, անհրաժեշտ է, որ իրենց հետ ունենան մի քանի փաստաթղթեր: Երեխայի Կ-րշ կարտը ամենակարևորներից մեկն է: Ուրիշ օգտակար հանդիսացող փաստաթղթերից են երեխայի ծննդյան կամ մկրտության վկայականը, պատվաստման կամ բժշկական թղթերը, կամ ասենք տեղական կամավոր գործակալությունից ստացած փաստաթուղթը, որտեղ գրված կլինի երեխայի հասցեն: Դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ են հետևյալ տեղեկությունները:

1. Երեխայի լրիվ անունը
2. Ծննդյան թիվը, տարիքը
3. Տան հասցեն և հեռախոսի համարը
4. Բժշկական տեղեկանք, պատվաստման մասին
5. Ծնողների անունները
6. Ծնողների աշխատավայրի հասցեն և հեռախոսի համարը:

Հատ դպրոցներ պահանջում են, որ մինչև դպրոց ընդունվելը երեխաները ունենան բժշկական քննության փաստաթուղթ: Գոյություն ունեն որոշակի պատվաստումներ, որոնք նահանգի օրենքի պահանջով պարտադիր են: Կարևոր է, որ մինչև երեխային դպրոց տանելը ծնողները տեղյակ լինեն դպրոցի պահանջներին:

Հանրային կրթությունը «Ճրի» լինելով հանդերձ գոյություն ունեն ողորոշ ծախսեր, որ պահանջվում են ծնողներից: Այդպիսի ծախսերից են՝ գրքերի վարձերը, դպրոցական տարրեր պիտույքների արժեքները, կամ ֆիզիքական պատրաստականություն և այլ խմբակային գործունեություն- ների համար նախատեսվող անդամավճարները:

Ծնողները պետք է մեծ դեր խաղան իրենց երեխաների դաստիարակման գործում: Ծնողներից պահանջում են, որ նրանք հետևեն իրենց երեխաների ուսմանը, հաճախ լինեն դպրոցում և զրույց ուսենան ուսուցիչների հետ, նույնիսկ եթե այնքան էլ լավ անգլերեն չեն խոսում:

Հատ դպրոցներ տարվա մեջ մի քանի անգամ ժնողական ժողովներ են կազմակերպում դասատուների հետ հանդիպելու և իրենց երեխաների առաջադիմության և վարքի մասին տեղեկությունների ստանալու ու անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռք առնելու նպատակով: Հատ դպրոցներում գոյություն ունի նաև այսպես կոչված ժնողական -ուսուցչական միություն (ԾՈՒՄ): Կանոնավոր

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ IV

Ճեղք կազմակերպված հանդիպումներում ծնողներն ու դաստիարակությունները քննարկում են դպրոցական ծրագրերը, ինչպես նաև քննությունները ուսումնական բարելավելու ուղղիները:

Ամերիկացի ուսուցիչները գնահատում են ծնողների կողմից արված մեկնաբանությունները և ուշադիր են նրանց կողմից տրված հարցումների նկատմամբ: Ուսուցիչների և ծնողների այդպիսի համագործակցությունը թույլ է տալիս ուսուցիչներին գնահատելու իրենց կողմից կատարած աշխատանքը, իսկ ծնողներին հնարավորություն է տալիս իմանալու թե ինչպես է սովորում իրենց երեխան դպրոցում: Սա ծնողներին օգնում է նաև ակտիվ ճեղք մասնակցելու իրենց նոր համայնքի աշխատանքներին:

գ. Միջնակարգ դպրոցից բարձր

Միջնակարգ դպրոցի աշակերտները դպրոցի խորհրդատու ղեկավար-ներից կարող են տեղեկություններ ստանալ ավարտելուց հետո գոյություն ունեցող հնարավորությունների մասին, որոնցից են..-

1. Աշխատանքը միջնակարգը ավարտելուց: Հետո աշխատելու համար գուցե և անհրաժեշտ կլինի լրացուցիչ պատրաստվածություն:
2. Տեխնիկա - արիեստագործական ուսումնարաններ, նախընտրած մասնագիտությունը ձեռք բերելու համար:
3. Երկու տարի տևողությամբ բարձրագույն հաստատություններ (կոլեջ):
4. Չորս տարի տևողությամբ բարձրագույն ուսումնական հաստատություններ (կոլեջ և համալսարան):

Նրանք ովքեր ցանկանում են շարունակել իրենց ուսումնական երկու կամ չորս տարի տևող կոլեջ կամ հայաստանական համալսարանում, անհրաժեշտ է, որ բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար ընդհանուր հանդիսացող քննություններ հանձնեն: Այս ստուգարքների գնահատականները կոլեջ կամ համալսարան ընդունվելու պայմաններից մեկն են: Շատ կոլեջներ և համալսարաններ անգլերեն լեզվի ստուգարքներ են անցկացնում օտար ազգի ուսանողների համար: Միայն բավարար չափով անգլերեն լեզվին տիրապետող աշակերտներին են ընդունում բարձրագույն ուսումնական հաստատություն: Ուրիշ պայմաններից են նաև միջնակարգ դպրոցում ստացած գնահատականներն ու միջնակարգում սովորելու ընթացքում նրանց ունեցած հետաքրքրությունների ցանկը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը ոչ միայն ձրի չէ այլև որոշ տեղերում նույնիսկ շատ թանգ: Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսման վարձը անհամեմատ ավելի թանգ է քան պետական կամ նահանգային կողեզների և համալսարանների ուսման վարձը: Սակայն, ուսման որակը կախված չէ նրանից, թե ովայլ հաստատությունը մասնատիրական է, թե հանրային, այսինքն նահանգային կամ շրջանին պատկանող: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու հնարավորություն ձեռք բերելու համար նախ անհատը կարող է աշխատել, ապա սովորել և կամ էլ միաժամանակ և սովորել և աշխատել: Փաստորեն շատ ամերիկացիներ պետք է երկուսն էլ կատարեն, իրենց ուսման վճարը ապահովելու համար:

2. ՈՒՍՈՒՄԸ ԶԱՓԱՀԱՍՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուսանելը մի պրոցես է, որը կյանքի տևողության հետ մեկտեղ շարունակում է: Ամերիկացիները ապացուցում են դա շարունակաբար տարբեր մասնագիտական դպրոցներ հաճախելով կամ որևէ արիեստանոցում նոր արիեստ սովորելով: Միջնակարգից բարձր ուսում ստանալու համար, ուսման վարձը վճարելը ընկնում է անհատի ուսերի վրա, ուստի այդ պատճառով չափահաս անձիք լրիվ դրույք աշխատելով միաժամանակ սովորում են որևէ բարձրագույն ուսումնական հաստատությունում: Աշխատող անձնավորություններին սովորելու հնարավորություն տալու համար գոյություն ունեն գիշերային ինչպես նաև շաբաթվավերջի դասընթացներ: Սովորական երևույթ է նաև այն, որ շատ շատեր որոշ ժամանակ լրիվ դրույք աշխատելուց հետո (երբ բավարար չափով դրամ են ունենում ուսանելու համար) թողնում են կամ անցնում են կես դրույք աշխատանքի և դառնում ուսանող, հետագայում լավ պայմաններով աշխատելու և իրենց ապագա կյանքը բարելավելու նպատակով:

Չափահասները դպրոց են հաճախում գլխավորապես իրենց ապրուստը բարելավելու նպատակով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ որևէ անձնավորության պոտենցիալ շահույթը միշտ չէ որ ուղիղ համեմատական է նրա ուսման տարիների քանակի նկատմամբ, օրինակ, որոշ լավ արիեստավորներ իրարահավասար կամ նույնիսկ ավելի բարձր եկամուտ ունեն քան պրոֆեսիոնալ պաշտոններ գրավող անձիք, որոնք անհամեմատ ավելի բարձր ուսում ունեն: Որոշելու համար, թե ուսումնական որ ծրագրերն են ավելի հարմար ովայլ անհատի համար, անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել ովայլ մասնագիտության պահանջարկը այն աշխարհագրական շրջանում, որտեղ մտադրվել է տեղավորվել անհատը: Հավասարապես կարևոր է հաշվի առնել նաև հիմնական աշխատանքի առաջարկած հնարավորությունների տեսակները (ներառյալ աշխատանքի ընթացքում սովորելը, մեծահասակների իրավունքները, նպաստներ և այլն), որոնք կարող են պաշտոնական ուսումնառությունը դարձնել ապագայի նկատմամբ ավելի նպատակասլաց:

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ IV

Այս բաժնում մենք նկարագրեցինք այն բոլոր հաստատություններն ու ծրագրերը, որոնք գոյություն ունեն բացարձակապես չափահաս ուսանողների համար:

ա. Անգլերենը որպես երկրորդ լեզու

Միացյալ Նահանգների շատ շրջաններում գոյություն ունեն այնպիսի հաստատություններ որտեղ ոչ-անգլիախոս մեծահասակներին սովորեցնում են անգլերեն լեզու: Այն մի քանի տեղերն ու գործակալությունները հետևյալ ներն են:-

1. **Մեծահասակների հիմնական ուսումնական (ԱՀՈՒ) Ծրագրերը - Adult Basic Education (ABE) Programs** - Այս ծրագրերը սովորաբար դեկավարվում են տեղի դպրոցների ուսումնական բաժինների կողմից: Նրանք նախապատրաստում և անց են կացնում ուսումնական շատ միջոցառումներ որոնցից է նաև անգլերենը որպես երկրորդ լեզու դասերը: Այդ միջոցառումները նպաստում են նաև տարբեր երկիրներից եկած չափահաս ուսանողներին հանդիպելու իրար հետ:

2. **Կամավորական գործակալություններ - Voluntary Agencies (Volags)** - Գոյություն ունեցող կամավորական շատ գործակալություններ հաճախակի հատուկ դասընթացներ են կազմակերպում գաղթականներին անգլերեն լեզուն սովորեցնելու և ամերիկյան մշակույթը նրանց ծանոթացնելու նպատակով: Այդպիսի դասերի և միջոցառումների գոյության և ժամկետների մասին տեղեկություն ունենալու համար նոր եկածներ պետք է դիմեն իրենց շրջանում գործող կամավոր գործակալություններին կամ իրենց հովանավորողներին:

3. **Եկեղեցիներ - Churches** - Եկեղեցիները, ինչպես նաև կրոնական այլ խմբեր նույնպես նորեկների համար կազմակերպում են հատուկ դասընթացներ, ինչպես անգլերեն լեզուն սովորեցնելու, այնպես էլ նրանց ամերիկյան մշակույթին և ապրելակերպին ծանոթացնելու համար:

4. **Լեզվի մասնավոր դպրոցներ - Commercial Language Schools** - Այս դպրոցները նույնպես ունեն Անգլերենը որպես երկրորդ լեզու ծրագրերը, բայց սովորելու արժեքը կարող է լինել բավականին թանգ:

5. **Մասնավոր ուսուցիչներ - Tutors** - Ամերիկայի Միացյալ Նահանգներ նոր ժամանած գաղթականները անգլերեն լեզուն կարող են սովորել նաև մասնավոր ուսուցիչների միջոցով: Մասնավոր ուսուցիչ կարող է լինել հովանավորներից որևէ մեկը, հարևանը, համայնական կազմակերպությունում կամ եկեղեցում հանդիպած մի նոր ծանոթ անձնավորություն: Որոշ մասնավոր կամ տնային ուսուցիչներ կարող են կամավոր հիմունքներով հանձն առնել անգլերեն սովորեցնելը, իսկ ուրիշներ (մասնավորապես պրոֆեսիոնալ դասատուները) վճարումով: Փաստորեն մասնավոր դասատուները անգլերեն սովորելու ելքերից մեկն են, եթե անգլերենը որպես երկրորդ լեզու դասընթացներ գոյություն չունեն ձեր ապրած շրջանում:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ IV

6. Այնտեղ, որտեղ ծրագրեր գոյություն չունեն - Երբեմն որոշ բնակավայրերում անգլերենը երկրորդ լեզու (ESL) ծրագրեր գոյություն չունեն: Եթե դուք այդպիսի իրավիճակի մեջ գտնվեք, ապա դեռևս գոյություն ունեն այլ ծանապարհներ անգլերեն սովորելու համար. օրինակ՝

• Երբեք առիթը բաց մի թողեք ամերիկացիների հետ անգլերեն խօսելու համար լինի խանութներում, բանկերում ինչպես նաև ձեր հարևանների հետ: Նույնիսկ օրեկան մեկ կամ երկու բառ սովորելը կօգնի զարգացնելու ձեր անգլերեն լեզուն:

• Իեռուստացույց դիտելով և հանգամանորեն լսելով ու ուշադրություն դարձնելով հատուկ բառերի կամ նախադասությունների վրա:

• օգտագործելով տարալեզու բառարան նոր բառեր սովորելու համար: Խնդրիր որևէ ամերիկացի ընկերոջդ արտասանել բառեր քեզ համար և օգտագործիր դրանք նախադասությունների մեջ: Անընդհատ փորձիր օգտագործել:

• սկսիր օգտագործել քո երեխայի անգլերեն լեզվի դպրոցական գրքերը:

• ինքնուսուցողական, անգլերենը երկրորդ լեզու գրականություն գոյություն ունի, սակայն կարող է թանկ լինել:

բ. Զափահասների հիմնական կրթական ծրագրերն ու դասերը - Adult Basic Education (ABE) Programs and Classes

Անգլերենը որպես երկրորդ լեզու (ԱԵԼ) դասերին զուգընթաց, գոյություն ունեն կրթական այլ ծրագրեր չափահասներին օգնելու, միջնակարգ դպրոցի վկայական ձեռք բերելու, ինչպես նաև ընդիանուր հետաքրքրություն ներկայացնող դասերի համար: Այդ դասերից մի մասը ստեղծված են ուրիշների հետ գիտելիքների փոխանակում կատարելու համար: Ուրիշ առարկաների դասեր կարող են լինել, նկարչությունը, կավագործությունը, կարուծելը, խոհարարությունը և ավտոմեխանիկությունը: Այս դասերը շատ հաճախ անց են կացվում տեղի էլեմենտար կամ երկրորդական դպրոցներում, երեկոյան ժամերին և պահանջում են միայն փոքր վարձ:

գ. Արիեստագործական և տեխնիկական դպրոցներ - Vocational and Technical Schools

Արիեստագործական և տեխնիկական դպրոցները մարդկանց որոշակի մասնագիտություն տալու համար են: Այս տեսակի ծրագրեր կարելի է գտնել մասնավոր արիեստագործական կամ տեխնիկական դպրոցներում, ինչպես նաև տեղական կոլեջներին կից, սակայն որպես բոլորովին անկախ ծրագրեր: Այս դպրոցները վճարովի են և վարձը կարող է տարբեր տեղերում տարբեր չափի լինել: Այդպիսի մասնագիտությունների օրինակ կարող են լինել բժշկի կամ ատամնաբույժի:

օգնական, էլեկտրոնիկայի հավաքման արիեստանոցների աշխատող, հաշվիչ մեքենաների ծրագրավորողներ, ավտոմեքենա վերանորոգողներ և տարբեր քարտուղարական աշխատանքներ:

Դ. Կոլեջներ և համալսարաններ - Colleges and Universities

Միացյալ Նահանգներում գոյություն ունեն երկու գլխավոր տեսակի կոլեջներ և համալսարաններ. - Երկու տարվա ուսումնական հաստատություններ և չորս տարվա տևողությամբ հաստատություններ: Այս ուսումնական հաստատությունները կարող են լինել հանրային կամ մասնավոր: Երկու տարի տևողություն ունեցող հաստատությունները կոչվում են «կրտսեր» կամ համայնական կոլեջներ, մինչդեռ չորս տարվա տևողություն ունեցող հաստատությունները անվանվում են ուղղակի կոլեջներ կամ համալսարաններ: Կոլեջները սովորաբար ավելի փոքր են և ունեն քիչ բաժիններ քան համալսարանները: Զորս տարի տևող կոլեջներ ու համալսարանները հիմնականում ավարտական դիպումներ են տալիս ավարտողներին (բակալավր) տեսական գիտություններից, հասարակական գիտություններից, արվեստից, և այլն: Ուսումնական առաջին երկու տարիների ընթացքում ուսանողներից պահանջում են վերցնել ընդհանուր հասարակագիտական կուրսեր, նախքան իրենց ամբողջ ուժերը ներդնելու իրենց ընտրած մասնագիտության վրա (ֆիզիկա, մաթեմատիկա, մանկավարժություն, արվեստ, պատմություն, և այլն):

Ընդհանրապես, որոշ համալսարաններ բացի սովորական վկայականից, կարող են առաջարկել նաև ավելի բարձր ուսում գիտական աստիճանով (ասպիրանտուրա կամ դոկտորական):

Երկու տարի տևող կրտսեր կամ համայնական կոլեջները հիմնականում դասավանդում են մասնագիտական արիեստներ, ինչպես նաև ընդհանուր առարկաներ, որպեսզի ցանկացողները հետագայում հնարավորություն ունենան հիմնական կոլեջներ և համալսարաններ տեղափոխվել իրենց ուսումը շարունակելու նպատակով:

Կոլեջներում և համալսարաններում սովորելու ուսման վարձերը տարբեր տեղերում կարող է խիստ տարբեր լինել: Հանրային հաստատություններում (որոնք հովանավորվում են նահանգի կամ երկրամասի պետական մարմինների կողմից) ուսման վարձը անհամեմատ ավելի փոքր է քան մասնավոր կոլեջներում կամ համալսարաններում, որոնք իրենց ունեցած ծախսերը պետք է հոգան համարյա միայն ուսանողներից գանձած ուսման վարձի վրա: Ներքեսում համեմատություն է արված վաշինգտոնի (Կոլումբիա Շրջան) երեք ուսումնական հաստատությունների 1985-1986 ուսումնական տարվա ուսման ծախսերը: (Գրքերն ու անձնական ծախսերը ընդգրկված չեն):

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ IV

Չորս տարի տևողությամբ մասնավոր համալսարան

Մեկ տարվա ուսման վարձը	\$9,300
Մեկ տարվա բնակավարձը	<u>\$3,600</u>
Ընդհանուր	\$12,900

Չորս տարի տևողությամբ համբային համալսարան

Մեկ տարվա ուսման վարձը	\$1,500 (տեղի ապրողի համար)
Մեկ տարվա բնակավարձը	<u>\$3,420</u>
Ընդհանուր	\$4,920
Մեկ տարվա ուսման վարձը	\$4,200 (ոչ տեղի ապրողի համար)
Մեկ տարվա բնակավարձը	<u>\$3,420</u>
Ընդհանուր	\$7,620

Երկու տարի տևողությամբ համբային կոլեջ

Մեկ տարվա ուսման վարձը	\$800 (տեղի ապրողի համար)
Մեկ տարվա բնակավարձը	հնարավոր չէ
Մեկ տարվա ուսման վարձը	\$3,465 (ոչ տեղի ապրողի համար)
Մեկ տարվա բնակավարձը	հնարավոր չէ

Վերոհիշյալ ուսման վարձերը վճարելու համար ֆեդերալ կառավարությունը ինչպես նաև որոշ ուսումնական հաստատություններ և այլ բարեգործական հաստատություններ ցածր տոկոսով՝ պատճենական դրամ են առաջարկում ուսանողներին։ Չնայած ուսանելու համար ամենամեծ հնարավորությունները տալիս է ֆեդերալ կառավարությունը, սակայն գոյություն ունեն նաև տարբեր տեսակի ծրի սովորելու միջոցներ (ուսման թոշակներ), որոնք տրվում են այն լավագույն ուսանողներին, որոնք նյութականի պատճառով հնարավորություն չունեն սովորելու, ինչպես նաև այսպես կոչված աշխատանք-ուսում ծրագրեր, որի դեպքում ուսանողները կես դրույք աշխատում են և միաժամանակ սովորում։ Այս տեսակ ծրագրերի վերաբերյալ օգնություն գրասենյակներից։ Քանի որ այս տեսակի ծրագրերի համար բաց թողնվող ֆոնդերը վերջերս նվազել են, այդ պատճառով էլ մրցակցությունը այդ ֆոնդերից օգտվելու համար բավականին դժվար է։

Ե. Զինվորական ծառայություն

Վերապատրաստման և ուսման մի աղբյուր, որը հաճախ աչքաթող է արվում, դա Միացյալ Նահանգների զինված ակտիվ ուժերում, պահեստային և սահմանապահ ուժերի ծառայություններում ձեռք բերվող մասնագիտություններն են: Այն ժամանակ, երբ ակտիվ զինված ուժերում ծառայելը այսպես կոչված «լրիվ դրույք» ծառայություն է, պահեստային ուժերում և սահմանապահ ուժերում ծառայելը «կես-դրույք»: «Կես դրույք ծառայությունից օգտվում են այնպիսի անձինք, որոնք սովորական քաղաքացիական աշխատանք ունեն: Այդպիսիների համար հավաքները տեղի են ունենում հատուկ նշանակված շաբաթավերջերին և սովորաբար տարին մեկ անգամ այսպես կոչված «Տարեկան Պարտականությունների Շրջան» հավաքում, որը տևում է մոտ երկու շաբաթ: Այդ հավաքների մասնակիցները բացի իրենց ձեռք բերած մասնագիտությունից, կես-դրույք աշխատանքի աշխատավարձ են ստանում:

Միացյալ Նահանգների ակտիվ զինված ուժերում, պահեստային կամ սահմանապահ ուժերում ընդունվելու պայմանները նույնն են.

• յուրաքանչյուր անձնավորություն պետք է լինի ՄՆ-ի քաղաքացի կամ ունենալ մշտական Ապրելու Իրավունքի կարտ (I-551): Գաղթականները իրավունք են ձեռք բերում դիմել այդ կարտի համար Միացյալ Նահանգներում 1 տարի ապրելուց հետո:

• յուրաքանչյուր անձնավորություն պետք է անցնի բժշկական քննություն:

• յուրաքանչյուր անձնավորություն պետք է անցնի գրավոր ստուգարք անգլերեն լեզվից:

• յուրաքանչյուր անձնավորություն պետք է ունենալ վստահելիության անցաթուղթ:

Զորակոչվելու առթիվ վստահելիության անցաթուղթի համար ստուգումը կոչվում է նաև Ազգային Գործակալության Ստուգում, որի համար պահանջվում է անձնական փաստաթղթեր, երդվյալ ցուցմունքներ և երաշխավորագրեր նախկին աշխատավայրերից, կամ զինվորական ծառայությունից: Մինչև Ազգային Գործակալական Ստուգման արդյունքների պատրաստ լինելը, դուք փաստորեն դառնում եք պահեստային ուժերի պայմանական անդամ:

Բ. ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՄՆ եկող գաղթականների համար ամենաաջնային խնդիրը թերևս նոր միջավայրին ու կուլտուրային վարժվելն է և անգլերեն լեզուն սովորելը: Համարձակ լինելը նշանակում է օգտվել բոլոր տեսակի առիթներից անգլերեն

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ IV

լեզուն յուրացնելու և ամերիկյան կուլտուրային ծանոթանալու համար: Օրվա ընթացքում գաղթականները այդպիսի շատ հնարավորություններ ունեն: Աշխատակիցների հետ, հարևանների հետ կամ խանութների աշխատողների հետ անգլերեն խոսելը, միայն մի քանի այդպիսի օրինակներ են: Շրջակայքը ուսումնասիրելու համար տնից դուրս գալով, լինելով հանրային վայրերում և շփման մեջ մտնելով այլ մարդկանց հետ նույնպես շատ օգտակար միջոցներ են ամերիկյան մշակույթին ավելի մոտիկից ծանոթանալու համար: Համարձակ լինել նաև նշանակում է, գուցե և ձախողանք առաջին փորձերի ժամանակ, սակայն այս անհաջողությունը կարող է հետագայի համար շատ կարևոր դաս հանդիսանալ: Սովորաբար այն նորեկները ովքեր հետևողական են անգլերեն լեզուն սովորելու և ամերիկյան կուլտուրային համակերպվելու, առաջիններից են, որ հասնում են հաջողության իրենց նոր ընտրած կյանքում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՍՏԵՄՆԵՐ

Ա. ՆԱԽԱԲԱՆ

Այս գլուխը նկարագրում է գաղթականների փոխհարաբերությունները հասարակական և քաղաքական կազմակերպությունների հետ, ինչպես նաև դրանցից կրած իրենց ազդեցությունը: Այդպիսի շատ կազմակերպություններ կան՝ դպրոցներ, առողջապահական գործակալություններ, հասարակական ծառայության գործակալություններ, ինչպես նաև քաղաքական մարմիններ ՄՆ-ի կոնֆրենց սկսած մինչև տեղական կրթության կոմիտեն: Քանի որ տեղական գործակալությունները համայնքից համայնք տարբերվում են, գաղթականները պետք է հովանավորողի, կամավոր գործակալության ներկայացուցչի օժանդակությանը դիմեն իմանալու համար իրենց նոր համայնքում գոյություն ունեցող ծառայությունների և դրանցից օգտվելու կերպերի մասին:

Այս գլուխը չորս նյութերի է բաժանված--

- *հասարակական ծառայություններ* - Social Services - Առաջին մասը նկարագրում է ցածր եկամուտ կամ հատուկ կարիքներ ունեցողներին օգնող տարբեր տեսակի ծառայությունները: Քանի որ այդ ծառայությունները ղեկավարվում են տեղական մարմինների կողմից, այդ պատճառով դրանք մակերեսորեն են շոշափված այստեղ: Ավելի մանրամասն տեղեկություն-ներ կարելի է ստանալ հովանավորից կամ այլ անձնավորություններից:

- *Ամերիկյան բժշկական ինամքը* - American Health Care - Ամերիկացինները օգտվում են բազմատեսակ առողջապահական ինամքի ծառայություններից, այս ծառայություններից շատերը կարող են լինել շատ թանկ: Այս գլուխը նկարագրում է այդ բոլոր ծառայությունները, նրանցից օգտվելու պայմանները և քննարկում է այն միջոցառումները որոնց դիմում են ամերիկացինները այդ ծառայությունների վարձը վճարելու համար:

BEST COPY AVAILABLE

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու Մի Ժեռնարկ/Գլուխ 7

- Կառավարություն և օրենք - *Government and Law* - Ամերիկյան քաղաքական սիստեմը լուսաբանող այս կարծ ներածականը նկարագրում է ֆեդերալ կառավարության կազմը, տիպիկ նահանգի և տեղական իշխանությունների կառուցվածքը, ինչպես նաև Միացյալ Նահանգներում գործող օրենքներն ու մարդկանց տրված իրավունքներն ու ազատությունները:
- Կրոնը Ամերիկայում - Այս մասը հակիրծ նկարագրում է ամերիկյան կյանքում կրոնի ռւնեցած դերի մասին:

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԾԱՌԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասարակական ծառայությունների մեջ ընտրություն գոյություն ունի շատ համայնքներում: Դրանցից ոմանք ֆինանսավորվում են ֆեդերալ, նահանգային կամ տեղական համապատասխան գործակալությունների կողմից, իսկ ուրիշները անձնական (մասնավոր) անշահախնդիր գործակալությունների կողմից: Այդ գործակալությունների անունները կարող են լինել բազմատեսակ և հաճախ նույնիսկ չհամապատասխանել իրենց կատարած ծառայությունների բովանդակության հետ: Դուք պետք է սովորեք ձեր համայնքում գտնվող այդպիսի գործակալությունների անուններն ու նրանց հասցեները: Ձեր հովանավորողը կամ վերաբնակման գործակալության աշխատողը կարող են օգնել ձեզ ծանոթանալու դրանց հետ: Կարող եք նաև հեռախոսագրքում նայել «ընկերություններ», «բարեգործական կազմակեր-պություններ» կամ «կառավարական գործակալություններ» վերնագրի տակ, այդպիսի գործակալությունների ցանկն ու անունները գտնելու համար:

Հետևաբար, հետևյալը յուրաքանչյուր համայնքում գործող հասարակական գործակալությունների կատարած ծառայությունների լրիվ նկարագրությունը չէ: Պարզապես գաղափար է տալիս այն ծրագրերի և ծառայությունների մասին, որոնցից գաղթականները կարող են ընդհանրապես օգտվել:

ԱՄՆ-ում բոլոր աշխատունակ մարդիկ պարտավոր են աշխատել իրենց և իրենց ընտանիքի կարիքները բավարարելու համար:

Երկու տեսակի ծրագրեր գոյություն ունեն այնպիսի մարդկանց համար, որոնք հաշմանդամ են, մշտական կամ ժամանակավոր անաշխատունակ և կամ նրանց համար որոնք աշխատանք գտնել չեն կարող:

ա. Եկամուտ ապահովող ծրագրեր

1. Սոցիալ ապահովություն - *Social Security* - Այս ֆեդերալ կառավարության թոշակի անցնելու ապահովագրության ծրագիր է սահմանված այն բոլոր ամերիկացիների համար, որոնք աշխատում են: Եվ աշխատատերը և աշխատավորը հատուկ հարկ են վճարում ազգային կառավարությանը: Հազվադեպ բացառություններով,

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ v

բոլոր աշխատողները պետք է հարկ վճարեն սոցիալ ապահովության ֆոնդի համար: Բոլոր այն մարդիկ որոնք ապահովված են այդ սիստեմով կարող են պաշտոնաթող լինել 65 տարեկան հասակում և թոշակ ստանալ սոցիալ ապահովությունից: Կարելի է: նաև պաշտոնաթող լինել 62 տարեկան հասակում, բայց այս դեպքում թոշակի գումարը փոքր կլինի: Թոշակի գումարի չափը կախված է աշխատավարձից և աշխատանքային ստաժից: Սոցիալ ապահովությունից բացի գոյություն ունեն նաև այլ թոշակային ծրագրեր: Հատ կազմակերպություններ իրենց սեփական թոշակային ծրագրերն ունեն, երկար ստաժ ունեցող իրենց ծառայողների համար:

2. հատուցում գործազրկության դեպքում - Unemployment Compensation - Հատ աշխատանքներ ապահովված են գործազրկության հատուցման ծրագրով, որոնք գոյություն ունեն բոլոր նահանգներում և ֆինանսավորվում են աշխատատիրոջ կողմից վճարված հարկերով: Երբ աշխատավորը որոշակի ժամանակամիջոց աշխատել է միևնույն իիմնարկում (սովորաբար վեց ամիս) և հետո աշխատանքը կորցրել է իրենից անկախ պատճառներով, նա իրավունք ունի կանխորոշված ժամանակամիջոցի համար գործազրկության հատուցում ստանալ: Գործազրկության հատուցում ստացող անձինք պետք է գրանցվ են աշխատանք փնտրելու համար, պետք է աշխատեն հարմար աշխատանք առաջարկվելու դեպքում և պետք է ամեն օր տեղյակ պահեն հասարակական ծառայության գրասենյակին իրենց վիճակի մասին:

3. Աշխատավորների հատուցում - Worker's Compensation - Գոյություն ունեն նաև աշխատավորներին հատուցման համար նախատեսված ֆոնդեր: Այս ֆոնդերը նույնպես առաջանում են աշխատավորներից գանձված հարկերից և օգտագործվում է վճարելու այն աշխատավորների կարիքները, այդ թվում նաև բժշկական ծախսերը, որոնք աշխատանքի ընթացքում վնասվածք ստանալու պատճառով չեն կարող աշխատել:

4. Հատուկ դրամական օժանդակության ծրագրեր ցածր եկամուտ կամ ոչ մի եկամուտ չունեցող մարդկանց համար -ԱՄՆ-ում ապրող մարդկանց մեծ մասը աշխատում են եկամուտ ստանալ աշխատավարձի կամ սեփական աշխատանքի միջոցով: Նրանք կարող են նպաստներ ստանալ ինչպես Սոցիալ Ապահովությունից տարիքի պատճառով պաշտոնաթող լինելու դեպքում կամ աշխատավորի հատուցում ստանալ երբ վնասվածքի պատճառում էն կարող աշխատել, կամ երբ ժամանակավորապես գործազրուրկ են կարող են գործազրկության հատուցում ստանալ:

Այն մարդկանց համար որոնք անաշխատունակ են կամ գործազրկության նպաստները դադարեցված են, գոյություն ունեն օգնության այլ միջոցներ: Այս ծրագրերը՝ որոնք դեկավարվում են նահանգային և տեղական իշխանությունների կողմից շատ են տարբերվում իրենց հնարավորությունների, ինչպես նաև յուրաքանչյուր անձին կամ ընտանիքին հատկացված դրամական օգնությունների ունեակետից:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ 7

Մինչդեռ հասարակական դրամական օժանդակություն տրվում են մեծահասակներին (ծերերին), ֆիզիկապես աշխատանքի անընդունակ մարդկանց, փոքր երեխաներ ունեցող միայնակ մայրերին, սակայն պետք է նշել, որ նրանց համար, ովքեր ժամանակավորապես աղքատ են և գործադրություն կայուն ապրուստի միջոցներ չեն: Բոլոր նրանք, ովքեր աշխատունակ են, պետք է ձգտեն աշխատանք գտնել իրենց ապրուստը հոգալու համար:

5. Օժանդակ Ապահովության ծրագրեր - *Supplementary Security Income - (SSI)* - Սա ֆեդերալ դրամական օգնության ծրագիր է, որը նախատեսված է 65-ից ավելի բարձր տարիք ունեցողներին (ծերերին) կամ անբուժելի հաշմանդամներին, որոնք աշխատել չեն կարող, օժանդակ միջոցներով ապահովելու համար: Այս ֆեդերալ օգնությունները գոյություն ունեն բոլոր նահանգներում: Այս ծրագրերից օգտվելու իրավունք ունեցողները, անկախ այդ ծրագրի նկատմամբ իրենց ապրած նահանգի օժանդակության աստիճանից, ստանում են նույն չափի նպաստ:

Այս ծրագրից օգտվելու համար տրվող դիմումները պետք է ներկայացվեն ֆեդերալ Սոցիալ Ապահովության տեղական գրասենյակին, որը փաստորեն նույն գրասենյակն է, որտեղ պետք է գնաք ձեր Սոցիալ Ապահովության կարտը ստանալու համար:

բ. Այլ ծրագրեր շատ ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար

Օգնության այլազան ծրագրեր ինչպիսիք են ուտեստեղենի դրոշմանիշներ, ջերմության կամ՝ էներգիայի համար տրվող նպաստներ, գոյություն ունեն երկրի համարյա բոլոր մասերում: Տրվող նպաստների քանակները բոլոր տեղերում նույնն են: Այս ծրագրերը հատկապես շատ օգտակար են նորեկներին ռեկամուտով ապահովելու համար, հատկապես նրանց ԱՄՆ-ում գտնվելու առաջին տարվա ընթացքում, երբ նրանցից շատ-շատեր սկսնակ մակարդակի աշխատանքներու մեջ են աշխատում, և նրանց ստացած աշխատավարձը անհամեմատ փոքր չափի է:

1. Ուտեստեղենի դրոշմանիշներ - *Food Stamps* - Սա ֆեդերալ ծրագիր է, որի նպատակն է օգնել ցածր եկամուտ ստացողներին բավարար սննդով ապահովելու համար: Դիմողները ցածր եկամուտ պետք է ունենան և պարբերաբար տեղեկանք ներկայացնեն իրենց եկամուտի մասին, որպեսզի հնարավորություն ունենան շարունակել օգնություն ստանալ: Կախված ընտանիքի եկամուտից և անդամների քանակից դիմողները սահմանված չափի դրոշմանիշ են ստանում միայն ուտելիք գնելու համար: Այսպիսի իրեր ինչպիսիք են ծխախոտ, ալգոհոլային խմիչքներ, դրոշմանիշով գնել հնարավոր չեն: Ուտեստեղենի դրոշմանիշները ընդունվում են բոլոր խոշոր ինքնասպասարկման խանութներում:

2. Օգնություն էներգիայի համար - *Energy Assistance (HEAP)* - Սա նույնպես ֆեդերալ ծրագիր է որը դեկավարվում է նահանգային և տեղական իշխանությունների կողմից, որի նպատակն է օգնել ցածր եկամուտ ունեցող մարդկանց, նույնական կայուն ապահովություն համարելու համար:

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ Վ

բնական գազի և էլեկտրուսիական էներգիայի համար ծախսերը վճարելու համար:

2. ԱՄԵՐԻԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ

Առողջապահության ծառայություններ ապահովող սիստեմը Միացյալ Նահանգներում շատ բարդ է և արտակարգ մասնագիտացված: Այն նաև մասնավոր է ավելի, քան հասարակական և ընդհանուրապես շատ թանկ: Զեր հովանավորողը կամ ազգականը կարող են օգնել ձեզ ավելի լավ հասկանալու այդ սիստեմը: Այս բաժինը նկարագրում է ԱՄՆ-ում առողջապահության կամ բժշկական խնամքի մի քանի ձևերը:

ա. Հասարակական առողջապահություն

Որոշ առողջապահական կարիքների համար պատասխանատու են տեղական կամ երկրամասային առողջապահական կազմակերպությունները: Տեղական կառավարության առաջնահերթ ֆունկցիաներից մեկը համայնքի առողջապահությունը պաշտպանելն է: Սովորաբար յուրաքանչյուր երկրամասում այդ նպատակի համար գոյություն ունի Հասարակական Առողջապահության Գրասենյակ: Այդ անելու ձևերից մեկը վարակիչ հիվանդությունները հսկողության տակ պահելն է: Այդ գրասենյակները պատվաստներ են կատարում այդ ձևով կանխվող հիվանդությունների համար: Նրանք նաև ստուգումներ են կատարում թոքախտի և վեներական հիվանդությունների նշաններ հայտնաբերելու և բուժումով պահովելու համար: Վարակիչ հիվանդությունների քննությունն ու բուժումը սովորաբար ձրի են հասարակության բոլոր անդամներին անխտիր մատչելի դարձնելու նպատակով:

Հասարակական Առողջապահության Գրասենյակները նաև կանոնա- վորում և ստուգում են ջրի մատակարարումը: Կարգավորում և հսկում են ծաշարաններում և ուստորաններում ուտեսատեղ ենի պատրաստումն ու մատուցումը: Հսկողության տակ են պահում անասունների միջոցով տարածվող հիվանդությունները և ընդհանուրապես պատասխանատու են համայնքը վարակիչ հիվանդությունների և էպիդեմիաների դեմ պաշտպանելու համար:

բ. Մասնավոր բժիշկներ

Հիվանդ, կամ պարզապես բժշկական քննության կարիք ունեցող մարդիկ կարող են ժամադրություն նշանակել իրենց ուզած մասնավոր բժշկի հետ: Յուրաքանչյուր մասնավոր բժիշկ սովորաբար մասնագիտաց- ված է լինում առողջապահության մի որոշակի ծյուղի մեջ: Այդ պատճառով էլ, ընդհանուր բժշկական քննություն կատարում են միայն ընդհանուր պրակտիկայով գբաղվող բժիշկները կամ ներքին հիվանդությունների մասնագետները: Իսկ եթե որևէ հիվանդ ուսկորի ջարդվածք ունի, դրանով կզբաղվի օրտոպեդիկ բժիշկը: Սակայն, սովորաբար յուրաքանչյուր

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ Վ

անձնական բժշկական ընդհանուր կարիքների և քննության համար, իսկ բժիշկը ուղղություն ցույց կտա նրան ինչ անել: Անձնական պրակտիկայով գբաղվող բժիշկների մոտ բուժվելը անհամեմատ ավելի թանկ արժի քան հասարակական առողջապահական կլինիկաների բժիշկների մոտ: Սովորաբար վճարումը կատարվում է յուրաքանչյուր այցելության համար: Մասնավոր բժշկի մոտ այցելության գնալու համար անհրաժեշտ է նախօրոք ժամադրություն նշանակել: Եթե ժամադրության գնալ չեք կարող, ապա անհրաժեշտ է հեռախոսով հայտնել և հետաձգել այն: Եթե դա չափանիք, ապա հնարավոր է, որ ժամադրության համար ստիպված լինեք վճարել, չնայած որ չեք գնացել:

գ. Կլինիկաներ

Կլինիկան մի բժշկական հաստատություն է, որտեղ գոյություն ունեն բազմապիսի բժշկական ծառայություններ: Որոշ կլինիկաներ մասնավոր են, բազմապիսի բժշկական ծառայություններ: Որոշ կլինիկաներ մասնավոր են, ուրիշները տեղական կառավարությունից են աջակցություն ստանում: Ստորև տրվում է տարբեր տեսակի կլինիկաների նկարագրությունը: Քանիոր յուրաքանչյուր համայնք ուրույն է իր առողջապահական սիստեմով, դուք հավանաբար տարբեր եսակների մեկ կամ մի քանի կլինիկաների հանդիպեք ձեր համայնքում:

1. **Մասնավոր կլինիկաներ - Private Clinics** - Մասնավոր կլինիկաների կազմի մեջ են մտնում մեկ կամ մի քանի տարբեր մասնագիտություններ ու նեցող բժիշկներ: Մասնավոր կլինիկաները նման են մասնավոր բժիշկներին նրանով, որ բուժման վարձը համեմատաբար նույնն է և այցելության համար անհրաժեշտ է ժամադրություն վերցնել: Առավելություններից մեկն այն է, որ միշտ փոխարինող բժիշկ կգտնվի, եթե մեկի անձնական բժիշկը ինչ որ պատճառով բացակայում է:

2. **Համայնական կլինիկաներ - Community Clinics** - Որոշ համայնքներում կլինիկաներ կան որոնք մասամբ կամ ամբողջությամբ ֆինանսավորվում են կառավարության կամ որևէ բարեգործական ընկերության կողմից: Այս կլինիկաների ծառայությունների վարձի քանակը որոշվում է հիվանդի վճարելու կարողության համաձայն: Այդ կլինիկաները կազմված են մի քանի խումբ բժիշկներից, և հիվանդը յուրաքանչյուր այցելության ժամանակ կարող է տարբեր բժիշկի մոտ գնալ: Համայնքի կարիքներից կախված, այս տեսակի կլինիկաների ծառայությունների տեսակներն ու ձևերը կարող են խիստ տարբերվել իրարից: Ոմանք կարող է պահանջեն նախօրոք ժամադրություն նշանակել ինչպես մասնավոր կլինիկաներն են, իսկ ուրիշներ հիվանդներին կարող են ընդունել հերթականությամբ, «առաջին եկող, առաջին սպասարկվող» սկզբունքով: Այս տեսակի կլինիկաները սովորաբար խորված են լինում և հաճախ կպահանջվի երկար սպասել:

3. **Հիվանդանոցների կից կլինիկաներ - Hospital Outpatient Clinics** - Այս կլինիկաները առնչված են լինում մի հիվանդանոցին և կարող են լինել մասնավոր ինչպես նաև համայնական: Միաժամանակ հիվանդանոց և բժշկական ուսումնարան

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ v

հանդիսացող հաստատությունների կից գոյություն ունեցող կլինիկաների բժիշկների անձնակազմը սովորաբար բաղկացած են լինում ուսանողներից և դասախոսներից:

4. Առողջապահական կազմակերպություններ - Health Maintenance Organizations - Այս տեսակի կազմակերպությունները գործում են խոշոր կլինիկաների նման բազմաթիվ բժիշկներով և երբեմն նույնիսկ հիվանդանոցային հարմարություններով: Մարդիկ կազմակերպության անդամ են դառնում համաձայնագիր ստորագրելով և սահմանված գումարը ամեն ամիս վճարելով: Համաձայնագրի մեջ բոլոր տեսակի ծառայությունները մանրամասնորեն նկարագրվում են: Կազմակերպության կատարելիք պարտականությունների մեջ մտնում են բոլոր սովորական բուժումներից բացի, նաև հիվանդանոցային և վիրաբուժական ծառայությունները: Անդամների վճարած ամսեկան վարձը միայն տվյալ կազմակերպության ներսում կատարվող ծառայությունների համար է: Քանի որ ՄՆ-ում շատ մեծ նշանակություն է տրվում կանխիչ բուժական միջոցառումներին, այդ պատճառով էլ յուրաքանչյուր անդամի տարեկան ընդհանուր քննությունները ոչ միայն քաջալերվում են այլև ամսեկան վարձի մաս են կազմում:

Դ. Հիվանդանոցներ

Ամերիկան համայնքներից մեծ մասը, նույնիսկ գյուղերը հիվանդանոց ունեն: Արտակարգ դեպքերից բացի մարդկանց մեծ մասը հիվանդանոց են գնում, երբ բժիշկը կամ կլինիկան են խորհուրդ տալիս: Հիվանդանոցում տրված խնամքը միայն ախտորոշված հիվանդության համար է և ոչ թե ընդհանուր: Փաստորեն բժիշկները հիվանդանոց են ուղարկում այնպիսի հիվանդներին, որոնց հիվանդությունները ախտորոշված են և հնարավոր չեն բուժումը կատարել տան պայմաններում և այնպիսի հիվանդներին, որոնք կարիք ունեն բժշկի անընդհատ խնամքին: Հիվանդանոցային խնամքը թանկ է, այդ պատճառով էլ հիվանդանոցները նախքան հիվանդին ընդունելը պացույց են պահանջում որ նա կարող ություն ունի վճարել (բժշկական ապահովագրություն, պետական նպաստ, և այլն): Սակայն յուրաքանչյուր համայնքում բարեկարգ ուժություն ունի գոնե մեկ հիվանդանոց, որը կընդունի նաև այն հիվանդներին, որոնք հնարավորություն չունեն շատ վճարել կամ մաս առ մաս կուզենան վճարել:

Ե. Արտակարգ դեպքերի բժշկական սպասարկում

Եթե որևէ արտակարգ դեպք է պատահել, յուրաքանչյուր համայնքում հարմարություններ կան անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Օրինակ, խանութ գնալիս վայր եք ընկել և նաև ձեր ոտքը, բատիկանությունը հավանաբար ձեզ կտանի հիվանդանոցի շտապ օգնության սենյակը:

Բժշկական շտապ օգնության սպասարկումը համայնքից-համայնք փոքր ինչ կարող է տարբեր լինել: Երբ հասնեք ձեր նոր ապրելատեղին, լավ կլինի հարցնել ձեր հովանավորողին կամ վերաբնակեցման գործակալության աշխատողին բացատրել

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ 5

Ճեզ այդ սպասարկումը, ինչպես նաև նրանից օգտվելու կանոնները: Այդպիսի ամենատարածված ծառայությունները հետևյալ ներն են:-

1. Հիվանդանոցի շտապ օգնության սենյակ - Hospital emergency rooms - Այս սենյակները սովորաբար բաց են 24 ժամ: Եթե հիվանդը կամ վիրավորը քայլել կարող է կամ փոխադրելու ավտոմեքենա ունի և հիվանդանոցը շատ հեռու չէ, ամենալավն է տուժվածին ուղիղ հիվանդանոցի շտապ օգնության սենյակը տանել: Ոչ բոլոր հիվանդանոցները շտապ օգնության սենյակ ունեն, դրա համար լավ է ստուգել նախքան անհրաժեշտության ծագելը:

2. Պարամեդիկներ (Բժշկի ասիստենտ) - Paramedics - Որոշ համայնքներ փորձված պարամեդիկների միավորումներ ունեն, որոնք հատուկ դեպքերի ժամանակ տներն են այցելում, առաջին բժշկական օգնություն ցույց տալու համար, իսկ անհրաժեշտության դեպքում հիվանդին կտեղափոխեն հիվանդանոց: Պարամեդիկները բժիշկներ չեն, նրանք պատրաստված են հատուկ դեպքերի ժամանակ հիվանդին կամ վիրավորին օգնություն ցույց տալու համար: Ձանի որ տվյալ տունը կամ վթարի վայրը շուտ հասնելու հնարավորություն ունեն, նրանք կարողացել են փրկել շատ կյանքեր, որոնք այլապես կմահանային: Շտապ օգնության հեռախոսի համարը ոստիկանություն կամ պարամեդիկ կանչելու համար (սովորաբար 911 կամ 0), կետ.. է պահվի հեռախոսի մոտ: Նրանց կարելի է զանգահարել գիշեր ցերեկ: Զանգահարել ու կիարցնեն անուն, հասցե, հիվանդի կամ վիրավորի վիճակի հակիրծ բացատրությունը (օրինակ, չի կարող շնչել): Որոշ համայնքներում վարձ է գանձվում այդ ծառայության համար:

3. Շտապ-օգնության ավտոմեքենա - Ambulance - Շատ համայնքներ հատուկ շտապ-օգնության մեքենաներ ունեն: Շտապ-օգնության ավտոմեքենաները սովորաբար սեփական են և վճարովի: Հիվանդից փողը գանձվում է սպասարկումից հետո: Հատուկ հեռախոսային համարներ կան շտապ-օգնության մեքենա կանչելու համար, որոնցմով կարելի է զանգահարել գիշեր և ցերեկ: Զանգահարելիս ճեզնից կպահանջեն նույն տեղե-կությունները, ինչ սպարամեդիկն էր պահանջում:

4. Թույնի վերահսկողության կենտրոն - Poison Control Center - Շատ բնակավայրերում գոյություն ունի հատուկ հեռախոսային համար, որով կարելի է զանգահարել, եթե մեկը թունավոր նյութ է կուլ տվել: Եթե նյութը կամ կուլ տված իրի պարունակությունը հնարավոր է նկարագրել, կենտրոնը կկարողանա ուղղություններ տալ հիվանդին օգնելու համար:

գ. Ատամնաբույժներ

Գոյություն ունեն և մասնավոր ատամնաբույժներ և ատամնա-բուժական կլինիկաներ, որոնք գործում են բժշկական կլինիկաների նման: Հասարակական կամ համայնական ատամնաբուժության կենտրոններ հազվադեպ են: Ժամադրությունները անհրաժեշտ են: Ավելի էժան բուժում կարելի է ստանալ

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ v

ատամնաբուժական դպրոցների կից «դրսի հիվանդ» կլինիկաներում:

է. Բժշկական և ատամնաբուժության ծառայությունների հատուցումը

Բժշկական և ատամնաբուժության ծառայությունների արժեքները երկրի տարբեր մասերում տարբեր են: Նույնիսկ եթե բժշկական ծառայություններ ամեն ամիս անհրաժեշտ չեն, շատ կարևոր է յուրաքանչյուր աշխատավարձից մի մաս խնայել այդ նպատակի համար: Բժշկական ծառայությունները Միացյալ Նահանգներում կատարվում են կազմակերպությունների կամ անհատների կողմից, որոնք իրենց ծառայությունների համար վարձ են պահանջում: Այդ գումարներով նրանք ծածկում են բժշկի և բուժքրոջ աշխատավարձը, դեղորայքի և բժշկական սարքերի արժեքները, ինչպես նաև աշխատավայրի վարձը: Կառավարությունը նրանց ոչ մի օգնություն չի տալիս, այնպես որ նրանք բացի վերոհիշյալ ծախսերը փակելուց, պետք է նաև շահույթ ունենան:

Բժշկական և ատամնաբուժական ծառայությունների ծախսերը ծածկելու նպատակով շատ մարդիկ ունեն այսպես կոչված բժշկական ապահովագրություն: Ապահովագրությունը մի սիստեմ է, որի համաձայն անձը ամսեկան վճարումներ է կատարում ապահովագրության ընկերությանը: Եվ երբ այդ անձը հիվանդանում է, ընկերությունը լրիվ կամ մասամբ վճարում է բուժման ծախսերը:

Աշխատատերը կարող է ապահովագրություն գնել իր ծառայողների կամ աշխատավորների: Այսպիսի կամ անհատը կարող է իր սեփական ապահովագրությունը գնել իր համար: Ապահովագրությունը սովորաբար ծածկում է նաև աշխատավորի ընտանիքի բժշկական ծախսերը:

Շատ էական է, որ ապահովագրության համաձայնագիրը ծիշդ հասկացվի: Սովորաբար, բժշկական ծախսերի մի մասը սկզբում վճարվում է հիվանդի կողմից: Ապահովագրական ընկերությունը հետո կվճարի մնացածը: Ապահովագրությունը ոչ բոլոր տեսակի բժշկական ծախսերն է ծածկում: Եթե դուք ցանկանում եք ապահովագրություն գնել ձեզ համար, խորհրդի համար դիմեցեք ձեր աշխատատիրոջը կամ հովանավորողին:

Բժշկական ծառայության համար կարելի է նաև վճարել առձեռն թղթադրամով: Բայց մարդու երկարատև հիվանդության դեպքում, խնայած դրամը շատ շուտ կսպառվի: Որոշ բժիշկներ և կլինիկաներ վճարումը պահանջում են առձեռն, նույնիսկ եթե հիվանդը ապահովագրություն ունի: Ապա անհատը «պահանջ» կամ հաշիվ է ներկայացնում ապահովագրության ընկերությանը: Ընկերությունը իր հերթին անհատին է վճարում իր բժշկական ծախսերի բոլորը կամ մի մասը:

Զնայած առողջապահական և ատամնաբուժական ծառայությունները թանկ են

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ճեռնարկ/Գլուխ 9

առավել, հնարավոր են ձրի բարեգործական ծառայություններ: Փորձված մարդիկ կան, որոնք կարող են օգնել որևէ պատահարի դեպքում, ասենք երբ ձեր երեխան հանկարծակի հիվանդանա գիշերը: Հիշեցեք, որ այդպիսի դեպքերում ոստիկանությունը ևս կարող է ձեզ օգտակար լինել: Եվ վերջապես յուրաքանչյուր քաղաք իր հատուկ հեռախոսի համարը ունի այդպիսի դեպքերի համար, որ դուք պետք է անգիր հիշեք:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕՐԵՆՔԸ

Միացյալ Նահանգները մեծ հակադրությունների երկիր է: Ֆիզիկապես աշխարհագրական մեծ տարածություն է գրավում և բնակիչները կուլտուրապես և ցեղային տեսակետից խայդաբղետ են: Իրենց կազմվելուց իվեր Միացյալ Նահանգները եղել են տարբեր ազգերի և կուլտուրաների երկիր: Վերջին տասնամյակների ընթացքում, աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական խլրտումները մարդկանց մի նոր ալիք են բերել այս երկիրը ապաստան գտնելու հույսով, այսպիսով էլ ավելի մեծացնելով ազգային և կուլտուրական խառնուրդը: Նա ով պլանավորում է ապրել այս երկրում, պետք է համակերպվի բազմազգային, բազմակուլտուրական միջավայրում ապրելու և գործելու հետ: Մն-ի աշխարհագրական մեծությունն ու կուլտուրական բազմազանությունը ուղղակի կերպով ազդում է երկրի հասարակական, քաղաքական և սնտեսական կառուցվածքի վրա:

Ամերիկայի Միացյալ Նահանգները բաղկացած են 50 նահանգներից և Կոլումբիայի Օգրուկից, որը սովորաբար կոչվում է Կաշինկոտոն Դ.Ա.: Մի ափից մյուս ափ հեռավորությունը 3,000 մայլից ավելի է (1 մայլը 1.6 կիլոմետր է), իսկ հյուսիսից հարավ 1,600 մայլ: Միացյալ Նահանգների լայնարձակ տարածության վրա կարելի է իրապես գտնել ամեն տեսակի բնապատկեր, կլիմա և ժողովուրդ:

Կյանքը ամերիկյան քաղաքներում իրենից ներկայացնում է ապրելակեռպերի և կուլտուրաների մի ծոխ միակցություն, և ահա այդ պատճառով էլ այն պահանջում է խստիվ հավատարիմ մնալ օրենքին և լայն չափի հանդուրժողականություն ցուցաբերել գնահատելու և հասկանալու այդ բազմապիսի ազգերին և էթնիկ խմբերին:

ա. Մն-ի քաղաքական կառուցվածքը

Այս բաժինը Միայն մի ընդհանուր տեղեկություն կտա ձեզ, Միացյալ Նահանգների կառավարական կառուցվածքի և գործունեության մասին: Շատ դժվար կլինի այդ մասին մանրամասն բացատրություններ տալ այստեղ: Հետագայում դուք ինքներդ կսովորեք և կընտելանաք Ամերիկյան քաղաքական սիստեմին:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Ճեղնարկ/Գլուխ ն

ԱՄՆ-ը մի ֆեդերալ Ռեսպուբլիկա է, որը հիմնված է 1789 թ. գրված Սահմանադրության վրա, որը երկրի գերագույն օրենքն է: Սահմանա- դրությունը երկրի քաղաքական ուժը բաժանում է կառավարական երեք ճյուղ երի միջև.- կատարողական, օրենսդրական և դատական: Կառավարա- կան երեք մակարդակներն ել ինչպես ֆեդերալը, նահանգայինը և տեղականը, ունեն միևնույն կառուցվածքը:

Ֆեդերալ կառավարությունում - on the federal level - պրեզիդենտը և իր կաբինետը երկրի կատարողական ճյուղն են կազմում. կոնգրեսը, որը բաղկացած է երկու տներից, որոնք կոչվում են Սենատը և Ներկայացուցիչների Տունը, կազմում են Օրենսդրական Մարմինը և Գերագույն Դատարանը իր ավելի ցածր ֆեդերալ դատարանների հետ միասին կազմում է դատական ճյուղը: Ֆեդերալ կառավարությունն է որոշում և իրագործում երկրի արտաքին քաղաքականությունը, ազգային պաշտպանությունը, բոլոր տեսակի հար- կերը, ընդհանուր ազգային քաղաքականությունը, գյուղատնտեսության բոլոր ճյուղերը, գործարարության, աշխատանքային և առևտրական բոլոր ճյուղերը:

Նահանգային կառավարությունում - on the state level - կառավարիչը ներկայացնում է կատարողական ճյուղը, իսկ նահանգի օրենսդիր մարմինը և նահանգի գերագույն ատյանը և ավելի ցածր դատարանները ներկայացնում են հաջորդ երկու ճյուղերը: Նահանգի մակարդակում լուծվող խնդիրներից են կրթությունը, ազգությունը օգտագործելու օրենքները և նահանգային հարկերը:

Տեղական կառավարությունում (քաղաքային և երկրամասային) - on the local level - կատարողական ճյուղը սովորաբար ներկայացնում են համապատասխանաբար քաղաքագլուխը կամ երկրամասի վարիչը. քաղաքի (կամ երկրի) ժողովը օրենսդիր մարմինն է, իսկ քաղաքային (կամ երկրամասային) դատարանը, դատական մարմինն են կազմում: Տեղական կառավարության միջոցով լուծվող հարցերից են, ներքին (բարիկանական) պաշտպանությունը, հրդե- հային պաշտպանությունը և սանհիտարական մաքրության հարցը:

Կառավարական այս երեք մակարդակների միջև ուժը բաշխված է հավասարապես: Քաղաքական ուժի այս տեսակ բաշխումը շատ համար համեմատում են չեքի և բալանսի սիստեմի հետ: Օրինակի համար, պրեզիդենտը իրավունք ունի վետոյի ենթարկել կոնգրեսով անցած որևէ օրենք, բայց կոնգրեսը իր հերթին իր կազմի երկու երրորդի (2/3)-ի ընտրական ձայնով կարող է չեղյալ համարել պրեզիդենտի վետոն:

բ. Քաղաքական կուսակցություններն ու ընտրությունները

Միացյալ Նահանգների քաղաքական սիստեմը բազմա-պարտիական է, մինչդեռ ազգային մաշտաբով գերիշխում են միայն երկուսը: Կառավարական երեք ճյուղ երը ինչպես նաև քաղաքական բոլոր պաշտոնները ընտրովի են բացի գերագույն դատարանի անդամներից ինչպես նաև ավելի կրտսեր դատարանների անդամներից,

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Ճեռնարկ/Գլուխ և

որոնց նշանակում է պրեզիդենտը: Որոշ պաշտոնների վրա պրեզիդենտի նշանակած պաշտոնյաները Սենատի կողմից պետք է հաստատվեն:

գ. Ազատության օրենքի ներքո

Որպես գաղթական ապրելով Միացյալ Նահանգներում դուք հավասարապես եք ձեռք բերում օգտվել օրենքով սահմանված բոլոր հիմնական իրավունքներից, որ ունի ՄՆ-ում ապրող յուրաքանչյուր անձ: Այդպիսի իրավունքներից են օրենքի ներքո արդարացի վերաբերմունք բոլորի համար: ՄՆ-ի սահմանադրության առաջին տասը անփոփոխ կետերը, որոնք հայտնի են որպես իրավունքների օրինագիծ, ուժի մեջ են 1791 թվականից իվ եր: Ուրիշ քաղաքական ազատությունների հետ մեկտեղ նրանք երաշխավորում են.-

- Խոսքի ազատություն
- Մամուլի ազատություն
- Կրոնի ազատություն
- Հավաքույթների ազատություն
- անձնական ունեցվածքի անտեղի խուզարկման և բոնագրավման պաշտպանությունը:

Ֆեդերալ, նահանգային և տեղական մակարդակների կառավարական մարմինների ընդունած բոլոր օրենքները ստեղծվում են վերոհիշյալ իրավունքների հիման վրա:

դ. Օրենքը Միացյալ Նահանգներում

Միացյալ Նահանգների օրենքների նպատակը ձեր իրավունքների պաշտպանությունն է: Յուրաքանչյուր անձ անկախ պաշտոնից, ազդեցիկ դիրքից, հարստությունից, կամ ուժեղությունից ենթակա է դատվելու, եթե օրենքի խախտում է կատարել: Ուստի կարևոր է, որ դուք հիմնական գիտելիքներ ունենաք ձեր օրինական իրավունքների և պատասխանատվությունների, ինչպես նաև Ամերիկյան օրենքի գլխավոր կետերի մասին: Արհամարհելը, կամ պնդելը թե դուք տեղյակ չեք որոշակի օրենքներին ձեզ չի բացառում դատվելու եթե օրենքի խախտում եք կատարել:

1. **Ֆեդերալ օրենքներ - Federal Laws** - Ֆեդերալ օրենքներին ենթարկվում է այս երկրում ապրող յուրաքանչյուր անձնավորություն: Օրինակի համար, աշխատանքի ընդունելու կամ աշխատանքից ազատելու վերաբերյալ ֆեդերալ կառավարության օրենքը կտրականապես արգելում է խորականություն դնել հիմնված աշխատավորի ցեղի, սեռի, ազգության կամ կրոնի վրա:

2. **Նահանգային օրենքներ - State Laws** - Նահանգների օրենքները վերաբերվում են միայն տվյալ նահանգին և նահանգից նահանգ կարող են տարբեր լինել: Օրինակի

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ 7

համար, որոշ նահանգներում օրենքը պահանջում է ավտոմեքենաների ստուգում (պետական) կատարել տարեկան մեկ կամ երկու անգամ, իսկ ուրիշ նահանգներում պահանջում է ստուգումը կատարվի միայն մեքենայի առուժախի ժամանակ: Ավտոմեքենան վարելու օրենքը նույնպես տարբեր է նահանգից նահանգ: Որոշ նահանգներում դուք ավտոմեքենա վարելու իրավունք կարող եք ձեռք բերել 16 տարեկան հասակում, իսկ այլ նահանգներում, 18 տարեկանից: Շատ նահանգներում ալկոհոլ օգտագործել սկսելու տարիքը 18 է, իսկ կամ ուրիշներ, որտեղ 21 է:

3. Տեղական օրենքներ - Local Laws - Տեղական օրենքները վերաբերվում են տվյալ քաղաքին կամ երկրամասին: Օրինակի համար, քաղաքը շրջանների բաժանելու օրենքներով որոշում են, թե քաղաքի կամ երկրամասի որ շրջանները բնակության համար են և որ մասերը կամ շրջանները գործարանների կամ առևտրական նպատակների համար:

ե. Օրինական (լեգալ) օգնություն

Եթե Միացյալ Նահանգներում ձեզ մեղադրում են որևէ ոճրագործության մեջ, դուք համարվում եք անմեղ մինչև ապացուցելը, որ մեղավոր եք: Դուք իրավունք ունեք դատապաշտպանի կամ իրավաբանի, որը ձեզ ներկայացնելու է դատարանում: Եթե ինքներդ ի վիճակի չեք մասնավոր դատապաշտպան վարձել, դատարանը պարտավոր է ձեզ հատկացնել մեկին: Եթե դուք որևէ դատական խնդիր ունեք և վստահ չեք թե ինչպես կարող եք դատապաշտպանի ծառայությունից լավ ագույն ձևով օգտվել, դիմեցեք ձեր ապրած տեղի կամ մոտավորագույն խոշոր քաղաքի այսպես կոչված Օրինական Օգնության Ընկերությանը - Legal Aid Society:

գ. Օրենքի գործադրումը և հանրային ապահովությունը

Օրենքի գործադրման և հանրության անվտանգության ապահովման համար պատասխանատու է ոստիկանությունը: Նրանք օգնում են մարդկանց նաև այլ հարցերում, ինչպես ուղղություն տալով եթե նրանք կորցրել են ծանապարհը կամ միջոցներ ձեռք առնել բժշկական շտապ օգնության կարիքի դեպքում:

Թեև ոճրագործության և բոնության կամ ուժի անտեղի գործադրում գոյություն ունի Միացյալ Նահանգներում, ոճրագործության քանակը երկրի տարբեր մասերում տարբեր է: Անկախ նրանից թե որտեղ եք ապրում, դուք պետք է հիմնական նախագուշական միջոցներ ձեռնարկեք անցանկալի դեպքերից խուսափելու համար, ինչպիսիք են, ձեր տան կամ ավտոմեքենայի դոները բանալիով փակելը, երբեք շատ թղթադրամ հետներդ չտանելը, գիշերները անծանոթ և մութ տեղամասերով չքայլելը:

Ինչ որ պատճառներով ձեր ապրելավայրը փոխելիս, զգույշ պետք է լինեք և պաշտպանեք ձեր թանկարժեք իրերը: Պոտենցիալ գողերը կարող են նկատել շրջապատին ձեր անծանոթ լինելը: Դուք պետք է լինեք զգույշ և աշխատեք ցույց

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ճեռնարկ/Գլուխ V

չտալ ձեր զարդեղեններն ու ունեցած դրամը կամ թողնել ձեր հյուրանոցի սենյակում: Սովորաբար դուք կարող եք համապատասխան ստացական վերցնելով թողնել կամ ի պահ դնել այդպիսի իրերը հյուրանոցի ղեկավարության մոտ մինչև հյուրանոցից դուրս գրվելը: Որևէ տեղ հասնելուց, մեծ արժեք ներկայացնող այդպիսի իրերը կարող եք ի պահ դնել բանկերում գտնվող ապահով արկղներում, որոնք համեմատաբար էժանագին են և գաղտնի պահվող:

Այն դեպքերում, երբ օգնության կարիք ունեք, երբեք մի քաշվեք ոստիկան կանչել: Շտապ օգնության համարը գլխավոր քաղաքներում 911 է: Շատ տեղերում կարիք չունեք վճարել այդ համարով զանգահարելու դեպքում, որևէ հանրային կամ մասնավոր հեռախոսից: Եթե դուք չգիտեք տեղական ոստիկանության համարը, կարող եք զանգահարել «0» և օպերատորը կիայտնի ոստիկանությանը: Եթե դուք չեք խոսում անգլերեն, ուղղակի ասացեք «օգնություն» ("Help") կամ «շտապ օգնություն» և հեռախոսափողը մի կախեք տեղը: Բաց թողնված հեռախոսալարով կարող են որոշել թե որտեղ եք դուք գտնվում:

4. ԿՐՈՆԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Կազմակերպված կրոնը մշտական մեծ դեր է ունեցել Ամերիկայի կյանքում: Հիմնական 13 գաղութներից 8-ը մասնավորապես կազմավորվել են կրոնի պատճառով Եվրոպայից փախած մարդկանց կողմից:

Ամերիկյան հեղափոխությունից առաջ յուրաքանչյուր գաղութ գործադրում էր իր սեփական օրենքը, սոցիալ և կրոնական սիստեմները: Հետևելով Եվրոպական երկրների օրենքներին, որոշ նահանգներ փոխ են առել մեկից ավելի կրոն թույլատրող օրենքներ: Սակայն հեղափոխության հետ մեկտեղ, գաղութները միասին կազմեցին մի նոր ազգ և ընդունեցին ֆեդերալ սահմանադրություն, որը բոլորի կողմից ցանկալի էր: Սահմանադրության առաջին 10 օրենսդիր կետերից առաջինը բոլոր ամերիկացիների համար կրոնի ազատության մասին է, որը փաստորեն թելադրում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում եկեղեցին պետությունից անջատ լինելու երևույթը: Դա պնդում է, որ «Այսուհետև Կոնգրեսը օրենքներ չպետք է ընդունի կրոնը գործադրության մեջ դնելու, կամ կրոնը արգելելու վերաբերյալ:

1947 թվականին, իրենց շրջադարձային որոշումներից մեկում, Եվանսը կրթության Մինիստրության և Գերագոյն Դատարանի հետ միատեղ տվել են Սահմանադրության Առաջին Հոդվածի գործնական նշանակության ամենասպառիչ բացատրությունը:

«Սահմանադրության Առաջին Հոդվածի «կրոնի հիմնադրում» հասկացողությունը առնվազն նշանակում է հետևյալը--Ոչ նահանգը և ոչ էլ ֆեդերալ կառավարությունը կարող են կազմավորել եկեղեցի: Ոչ մեկը չի կարող

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ճեռնարկ/Գլուխ V

օրենք ընդունել մի կրոնին օգնելու կամ բոլոր կրոններին օգնելու վերաբերյալ, կամ նախընտրել մի կրոն մյուսի նկատմամբ: Ոչ մեկը չի կարող պարտադրել և ոչ էլ փորձել ազդել որևէ անձնավորությանը հաճախել կամ հեռու մնալ եկեղեցուց իր կամքին հակառակ կամ ստիպել նրան հավատալ կամ չհավատալ որևէ կրոնին: Ոչ մի անձ չի կարող պատժվել կրոնական հավատքը քարոզելու կամ ի դեմ խոսելու համար, եկեղեցի գնալու կամ զգնալու համար: Որևէ տեսակի հարկ մեծ կամ փոքր քանակով չի կարող գանձվել որևէ կրոնական ճեռնարկությանը կամ հաստատությանը օգնելու համար ինչպիսին էլ որ անվանեն իրենք իրենց, կամ ինչպիսի կրոնի համար էլ որ քարոզելու լինեն: Ոչ նահանգը և ոչ էլ ֆեդերալ կառավարությունը կարող են բացահայտորեն կամ գաղտնորեն մասնակցել որևէ կրոնական կազմակերպությունների կամ խմբերի գործունեություններին և հակառակը: Զեֆերսոնի խոսքերով՝ կրոնի հիմնադրման համար որևէ օրենք ընդունելու դեմ նախադասությունը, փաստորեն նպատակ էր հետապնդում հիմնել “մի պատ որը բաժանում է պետությունը կրոնից”»:

Սա անշուշտ չի նշանակում, որ կառավարությունը թշնամական է եկեղեցու հանդեպ: Մինչդեռ եկեղեցին և նահանգը ունեն առանձին պատասխանատվությունների աշխարհներ, նրանք հաճախ փոխադարձ հետաքրքրությունների գործողություններում միասին են աշխատում, հասարակությանը առավել օգտակար լինելու համար:

ա. Կրոնը ամերիկացիների կյանքում

Կրոնը գլխավոր կարևորություն ունեցող երևույթներից մեկն է ամերիկացիների համար: Ամերիկացիների ծննդող մեծամասնությունը ներգրավված են որևէ կրոնական կազմակերպության մեջ: 1980 թվականին կատարված ՄՆ-ի բնակչության աղանդավորական (որևէ կրոնի պատկանելիություն խմբին անդամակցելու վերաբերյալ մի ուսումնասիրություն ցույց է տվել, որ-

Բողոքականներ՝	55%
(Ակրուչականներ՝ 26%, Մեթոդիստներ՝ 9%, Լուտերականներ՝ 6%, Պրեսբիտերականներ՝ 5%, Եպիսկոպոսականներ՝ 3%, Ուրիշներ՝ 6%)	
Հռոմեական Կաթոլիկներ՝	30%
Հրյաներ՝	3%
Ուրիշ կրոններ՝	5%
Աթեիստներ և կրոն չունեցողներ՝	7%

Միացյալ Նահանգներում վերաբնակվելու մի ժեռնարկ/Գլուխ Ն

Միացյալ Նահանգների բնակչության մեծամասնությունը ինքնորոշվում են քրիստոնեության նրան գլխավոր ծյուղերով՝ Բողոքականություն !: Կաթոլիկություն:

Աշխարհի այլ կրոններց Հուդաիզմը երրորդ մեծն է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Վեց միլիոն մասնակից անդամներով, Ամերիկյան հրեական համայնքը աշխարհում ամենամեծն է: Նրա երեք ծյուղերը, պահպանողականները՝ 42%, Ռեղափառները՝ 28%, և ուժորմիստականները՝ 30%, ամբողջ Ամերիկայում ունեն ավելի քան 4,000 սինագոգներ (հրեական տաճառներ):

19-երրորդ դարի կեսերից, փոքր թվով մահմեդականներ սկսեցին գաղթել Ամերիկա: Ներկա տարիներում ներգաղթողների թիվը ավելացել է և այսօր գոյություն ունեն ավելի քան 400,000 մահմեդականներ: Մինչև ներկա տարիները Կալիֆորնիայում և Հավայան կղզիներում ապրող ծապոնացիները կազմում էին ՄՆ-ի բուդդայական համայնքի հիմնական մասը: Վերջին տասնամյակում հարավարևելյան Ասիայից ներհոսած գաղթականներով ուժեղացել և շատացել են բուդդայական համայնքները երկրի տարբեր մասերում: Հնդկական համայնքներ նույնպես գոյություն ունեն ՄՆ-ի տարբեր մասերում, որոնք կազմվել են Հնդկաստանից գաղթած հնդիկներով:

բ. Եկեղեցու դերը երաշխավորման մեջ

Մի միջավայր որտեղ կառավարությունն ու Եկեղեցին երկար ժամանակ աշխատել են և աշխատում են միասին, դա գաղթականների տեղավորման գործն է: Միացյալ Նահանգների կառավարությունը հաստատում է ներգաղթողների թույլտվությունները, բայց նրանց տեղավորելն ու ֆոնդեր հատկացնելը թողնում է կամավոր գործակալություններին: Տեղավորման կամավոր գործակալություններից շատերը կապված են Եկեղեցիների հետ, որոնց նպատակն է բարձր գալուստ մաղթել և անհրաժեշտության դեպքում տնտեսապես օգտակար լինել նրանց: Կառավարության և կամավոր գործակալությունների միջև գոյություն ունեցող այս համատեղ գործունեության շնորհիվ միլիոնավոր գաղթականներ հնարավորություն են ունեցել տեղավորվել ՄՆ-ում և միջոցներ հատկացնել նրանց նոր կյանք սկսելու համար:

Անկա՞ս նրանից, թե որ կրոնական խմբին պատկանող կամավոր գործակալությունն է ձեզ հովանավորել, լինի որևէ Եկեղեցի, այնագոգ, որևէ խումբ կամ անհատ, դուք պետք է բացարձակապես ազատ զգաք ձեզ ՄՆ-ում հետևելու այն կրոնին որին ցանկանում եք: Եթե դուք խնդրեք ձեզ տեղավորող և օգնող կամավոր գործակալությանը օգնել նևել ձեզ կապ հաստատելու ձեր կրոնի ներկայացուցիչների հետ, նրանք ուրախ կլինեն օգտակար լինել ձեզ նաև այդ հարցում:

Բ. ԱՄՓՈՓՈՒՄ

Այս բաժնում մենք խոսեցինք բազմաթիվ տարբեր հարցերի շուրջ որ ի դեմ են առնում նորեկները կապված ծառայությունների -- ապահովության, պաշտպանության և պատասխանատվությունների հետ։ Գաղթականները օրենքի ներքո ունեն նույն ազատություններն ու իրավունքները ինչ որ որևէ ամերիկյան քարաքացի, բացի նրանից, որ նրանք իրավունք չունեն ընտրություններին մասնակցելու և որոշ սահմանափակումներ ինչպիսիք են երկրից դուրս ճամբորդությունը և զինվորական ծառայությունը։ Փոխարենը, գաղթականներից սպասվում է իրենց անձնական ապրուստի պատասխանատվությունը գլխավորապես աշխատանքի և ուսման հարցերում հնարավորին չափ շուտ վերցնել իրենց վրա։

Միացյալ Նահանգների քաղաքական սիստեմը մանրակրկիտ մշակված սիստեմ է, նույնիսկ շատ ամերիկացիներ լրիվ չեն հասկանում այն։ Որքան գաղթականները դառնում են ավելի ծանրթ այս սիստեմի հետ, մասնավորապես երբ որոշում են դիմել քաղաքացի դառնալու համար, նրանք կսկսեն ավելի լավ հասկանալ թե ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենքն ու քաղաքական իրականությունը կարող են ազդել իրենց ապրելակերպի վրա։

ԱՄԵՆՈՐՅԱ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Ա. ՑԱՆԱՊԱՐՀԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ 0ԴՆՈՒԹՅՈՒՆ.Ն
ԽՆԴՐԵԼՈ

Եթե դուք կորցրել եք ձեր ծանապարհը կամ կարիք ունեք օգնության, երբեք մի խուսափեք մոտենալ մարդկանց և օգնություն խնդրել լինի փողոցում, ավտոմեքենայի վառելանյութի կայաններում, խանութ-ներում։ Մարդիկ ընդհանրապես սիրալիր են և օգնության հասնող։ Իսկ շտապ օգնության կարիքի դեպքու ՚յարող եք կանգնեցնել որևէ ոստիկանի ավտոմեքենա և կամ խնդրեցեք որևէ մեկին հեռաձայնել ոստիկա-նությանը օգնության համար։

Բ. ԱՆՁՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Դուք անպայման ձեզ մոտ պետք է ունենաք ձեր Կ-րշ փաստաթուղթը կամ նրա մի օրինակը։ Դուք նաև անպայման ձեզ մոտ ունեցեք ձեր կամավոր գործակալության անունը, հասցեն և հեռախոսի թիվը։ Եթե դուք անգլերեն չեք խոսում, ձեզ մոտ ունեցեք ձեր սեփական հասցեն, կամ այն անձնավորության հասցեն որին պատրաստվում էիք այցելել։

Գ. ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

Երբ հասնեք ԱՄՆ, դուք իսկույն կնկատեք, որ սպառմեքենան տրանսպորտի ամենամասսայական ձևն է։ Ավտոմեքենա գնելը գլխավոր ծախսերից մեկն է, որին անշուշտ գումարվում է նաև ավտոմեքենայի ապահովագրության ծախսը։ Դուք չպետք է ավտոմեքենա վարեք առանց նախօրոք վարորդական իրավունք ձեռք բերելու և առանց ապահովագրության։

Դ. ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Եթե դուք ինքներդ անկարող եք ձեզ անհրաժեշտ հեռախոսի համարը գտնել, օգնության համար զանգահարեցեք 411 տեղեկատու բյուրոյին։ Ձեր գտնված շրջանից դուրս տեղեկատու բյուրոյի համար զանգահարեցեք 1-(շրջանի կոդը)-555-1212։ Քանի դեռ դուք ձեր անձնական հեռախոսը չունեք, աշխատեցեք

գտնել ձեր բնակավայրին ամենամոտ գտնվող հանրային (փողոցում գտնվող) հեռախոսախցիկը և միշտ ձեռքի տակ ունեցեք ամենաառաջնային կարիքի դեպքի համար անհրաժեշտ հեռախոսի համարը:

Ե. ԱԼԿՈՀՈԼԱՑԻՆ ԽՄԻԶՔ

Թեև ալկոհոլային խմիչք գործածվում է Միացյալ Նահանգներում, շատ օրենքներ գոյություն ունեն ալկոհոլի առուժախն ու օգտագործումը կարգավորելու համար: Այս օրենքները տարբերվում են մի տեղից մյուսը, իսկ որոշ տեղերում նույնիսկ; շատ խիստ: Միացյալ Նահանգների բոլոր մասերում խստիվ արգելված է և նույնիսկ համարվում է որագործություն ալկոհոլի ազդեցության տակ ավտոմեքենա վարելը: Զինազանդվելու դեպքում հասնում է բանտարկություն, տուգանք և նույնիսկ կրկնվելու դեպքում գրկվեք ավտոմեքենա վարելու իրավունքից: Փոքրահասակներին չի թույլատրվում ալկոհոլ օգտագործել, կախված շրջանից մինչև 18, 20, կամ 21 տարեկան լինելը, այդպիսիները նույնիսկ իրավունք չունեն խանութներից ալկոհոլ գնել:

Զ. ԶԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիկացիները սիրում են և միշտ աշխատում են լինել անպաշտոնական: Հասարակական վայրերում կամ ընկերական հավաքույթներում սովորաբար իրար են դիմում առաջին անունով: Իսկ գործատեղերում հաճախ օգտագործում են ազգանունը, հատկապես քանի դեռ պաշտոնապես յրար իետ դեռևս չեն ծանոթացել: Շատ աշխատակիցներ և աշխատանքի վերակացուներ նախընտրում են ընդհանրապես կոչվել իրենց առաջին անուններով: Պրոֆեսիոնալ կոչումները, ինչպիսիք են «դոկտոր» սովորաբար օգտագործվում են պաշտոնական աշխատանքային պայմաններում: Ժպիտը շատ կարևոր հանգամանք է, որ օգտագործվում է ողջունելու և՝ ընկերներին ու ծանոթներին և՝ անծանոթներին:

Է. ԱՌԱՆՉԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ

Չնայած իրենց ապրելակերպի անպաշտոնականությանը, ամերիկացիները մեծ արժեք են տալիս առանձնացածության (յուրաքանչյուր անձի ինքն իր մեջ լինելու իրավունք): Մարդիկ և ովորաբար խուսափում են այցելել մեկը մյուսի բնակարանը, առանց նախորոք զանգահարելու կամ պաշտոնապես իրավիրվելու:

Ֆինանսականի իետ առնչվող խնդիրները համարվում են անձնական: Ընդհանրապես անքաղաքավարություն են համարում հարցնել մեկին, թե որքան է իր աշխատավարձը կամ որքանով է գնել իր տունը, ավտոմեքենան, ևայլն:

Ը. ՑԵՏԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ժամանակը շատ բարձր է գնահատվում ՄՆ-ում: Ամերիկացիները աշխատում են լինել ծշտապահ և ծշտապահություն են ակնկալում նաև ուրիշներից: Լինի հասարակական թե անձնական կյանքում անհրաժեշտ է Միշտ ժամադրություն նշանակել և անշուշտ հարգել այն: Եթե դուք փորձեք այցելել որևէ աշխատանքային գրասենյակ առանց նախօրոք ժամադրություն նշանակելու, շատ հավանական է, որ չհաջողվի ճեզ հանդիպել այն անձնավորության հետ որի հետ որ ուզում էիք հանդիպել, իսկ եթե չեք կարող հարգել ճեր ժամադրությունը և կամ նախատեսում եք որ ուշանալու եք 15 րոպեից ավելի, պետք է զանգահարեք և բացատրեք ճեր ուշանալու կամ ժամադրությունը չեղյալ անելու պատճառը:

Թ. ԾԽԵԼԸ

Ամերիկացիներից շատեր չեն ծխում և կակնկալեն, որ ուրիշներ ևս երբ իյուր են իրենց տանը կամ իրենց աշխատանքի վայրում նույնպես չծխեն: Գոյություն ունեն նաև ուստորաններ և այլ հանրային վայրեր, ինչպիսիք են քաղաքային ավտոբուսները, որտե՛ւ: Ծխելը արգելված է կամ թույլատրվում է ծխելը միայն նշանակված բաժնում:

Ժ. ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ

Շատ ամերիկացիներ լոգանք կամ ցնցուղ են ընդունում ամեն օր, վրձինում են իրենց ատամները օրեկան առնվազն 2 անգամ, օճառահեղուկ (շամբուն) են օգտագործում մազերը լվանալու ժամանակ և հաճախակի լվանում են իրենց հագուստեղենը: Գոյություն ունեն հարյուրավոր արտադրատեսակներ՝ օծանելիքներ, բերանը լվանալու հատուկ հեղուկներ, շամբուններ և լվացքի փոշիներ, հատուկ մշակված և արտադրված այդ նպատակների համար:

Ի. ԹԵՑԱՆՎԵՐ

Ընդհանրապես սովորություն է ճեր վճարելիքի 15%-ի չափով թեյանվեր տալ ուստորանում մատուցողին, կամ տաքսիի վարորդին: Հարցրեք ճեր հովանավորին նաև թե ուրիշ որ ծառայությունների համար տեղին է թեյանվեր տալը: Նկատի ունեցեք, որ երբեք հարմար չէ դրամ կամ թեյանվեր տալ որևէ ոստիկանի կամ կառավարական պաշտոնյայի ի պատասխան նրանց կատարած օգնության:

L. ԹՎԵՐԻ ԳՐԵԼԱԶԵՒԸ

Մեկ թիվը սովորաբար գրվում է մեկ շաղահայաց գծով: Ամերիկացիները գրում են «4» ոչ թե «1»: Ցոթը թիվը սովորաբար գրվում է առանց մեջտեղի գծի «7» և ոչ թե «7»: Հարյուրավորները անցատվում են հազարավորներից, ինչպես նաև հազարավորները միլիոնավորներից, ստորակետով և ոչ թե կետով. օրինակի համար 5,600, ոչ թե 5.600: Տասնորդական կոտորակները գրվում են կետով ոչ թե ստորակետով. օրինակ 9.85 ոչ թե 9,85:

Խ. ԴՐԱՄ

Միացյալ Նահանգների դրամական սիստեմը հիմնված է դոլարի վրա: Դոլարը նշանակվում է հետևյալ հատուկ նշանով «2»: Մեկ սենտը ամենափոքր միավորն է: Մեկ դոլարը բաղկացած է 100 սենտից: Մնականական միավորներից առաջնականը հետևյալն է:

1. Մետաղադրամներ

պենի (1 սենտ)	1c կամ \$.01
նիկել (5 սենտ)	5c կամ \$.05
դայլ (10 սենտ)	10c կամ \$.10
քառորդ (25 սենտ)	25c կամ \$.25
կես-դոլար (50 սենտ)	50c կամ \$.50
մեկ դոլար (100 սենտ)	\$1.00

2. Քղթադրամներ

Մեկ դոլար	(\$ 1.00)
Երկու դոլար	(\$ 2.00)
Հինգ դոլար	(\$ 5.00)
Տասը դոլար	(\$ 10.00)
Քսան դոլար	(\$ 20.00)
Հիսուն դոլար	(\$ 50.00)
Հարյուր դոլար	(\$ 100.00)

Երկու դոլար և երեսուն սենտը միասնաբար գրվում է \$ 2.30:

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ժեռնարկ /Գլուխ VI

Ծ. ԿՇԻՌՆԵՐ ԵՒ ԶԱՓԵՐ

1. Գծային Զափեր

1 մղոն = 1,790 յարտի = 5,280 ոտքի = 1.609 կիլոմետրի

1 յարդ = 3 ոտքի = 91.44 սանտիմետրի

1 ոտքը = 12 ինչի = 30.48 սանտիմետրի

1 ինչը = 2.54 սանտիմետրի

2. Քառակուսու Զափեր

1 քառակուսի մղոնը = 640 (ամերիկյան) ակրի = 258.999 հեկտարի

1 ակրը = 43.6 քառ. ոտքի = 4.8 քառ. յարդի = 0.405 հեկտարի

1 քառ. յարդը = 9 քառ. ոտքի = 0.836 քառ. մետրի

1 քառ. ոտքը = 144 քառ. ինչի = 929 քառ. սանտիմետրի

1 քառ. ինչը = 6.45 քառ. սանտիմետրի

3. Ծանրության չափեր

1 տոն = 1.016 մետրական տոննայի

1 պաունդը = 16 ունցի = 453.592 գրամի

1 ունցը = 28.350 գրամի

4. Հեղուկային չափեր

1 կալոնը = 4 կվարտայի (քորտ) = 8 պինտայի = 3.785 լիտրի

1 կվարտան = 2 պինտայի = 0.946 լիտրի

1 բաժակը = 0.285 լիտրի

ԳԼՈՒԽ VII

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՕՐԵՐ

NEW YEAR'S DAY - ՆՈՐ ՏԱՐՎԱ ՕՐ, Հունվարի 1 -- Բոլոր նահանգներում տոնվող տոնական օր է:

MARTIN LUTHER KING'S BIRTHDAY - ՄԱՐՏԻՆ ԼՅՈՒԹԵՐ ԿԻՆԳԻ ԾՆՍԴՅԱՆ ՕՐԸ, ՀՈՒՆՎԱՐԻ 15 -- Այս հատուկ օրը նշանակված է խոշորագույն քաղաքացիական իրավունքների առաջնորդի պատվին, հանդիսանում է բոլոր նահանգներում տոնվող ազգային տոն:

LINCOLN'S BIRTHDAY - ԼԻՆԿՈԼՆԻ ԾՆՍԴՅԱՆ ՕՐԸ, ՓԵՏՐՎԱՐԻ 12 -- Տեղական տոն է շատ նահանգների համար:

VALENTINE'S DAY - ՎԱԼԵՆՏԱՅԻՆ ՕՐԸ, ՓԵՏՐՎԱՐԻ 14 -- Կոնֆետներ, ծաղիկներ և այլ իրերի փոխանակման օր է:

WASHINGTON'S BIRTHDAY - ՎԱԶԻՆԳՏՈՆԻ ԾՆՍԴՅԱՆ ՕՐԸ -- Փետրվարի երրորդ երկուշաբթին, ի պատիվ Ամերիկայի Միացյալ Նահանգների ստեղծողի և առաջին պրեզիդենտի: Սա օրինական տոնական օր է համարյա բոլոր նահանգներում:

ASH WEDNESDAY - ՀԱՑԵՆՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ -- Մեծ պասի առաջին օրը, հանրության կողմից նշվող օր է, սովորաբար Փետրվարի կամ Մարտի մեջ:

ST. PATRICK'S DAY - Ս. ՊԱՏՐԻԿԻ ՕՐ, ՄԱՐՏԻ 17 -- Իռլանդայի գլխավոր սուրբերից մեկի մահը նշելու օր է:

APRIL FOOL'S DAY - ԱՊՐԻԼԻ ԿԱՏԱԿԻ ՕՐԸ, ԱՊՐԻԼ 1 -- Նշվում է չկասկածող լրարդկանց վրա կատակներ անելով:

PALM SUNDAY - ԾԱՂԿԱՁԱՐԴ ԿԻՐԱԿԻ -- Զատկին նախորդող կիրակի օրը:

GOOD FRIDAY - ԱՎԱԳ ՈՒՐԲԱՐ -- Զատկին նախորդող Ուրբար օրը:

EASTER SUNDAY - ԶԱՏԻԿԻ ԿԻՐԱԿԻՆ -- Այն օրն է, որ համայն աշխարհի

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի Ժեննարկ/Գլուխ VII

Քրիստոնյա ժողովուրդները տոնում են Քրիստոսի Հարությունը:

PASSOVER - ՊԱՍՈՎՐ, ԱՊՐԻԼ 5-13 -- *Հրեական տոնական օր հայտնի որպես «Ազատության Խնճույք» անվան տակ: Դա հրյա ժողովրդի Եգիպտոսից ինչպես նաև գերությունից մասսայական ազատագրվելու տարելիցն է:

MOTHER'S DAY - ՄԱՅՐԵՐԻ ՕՐ -- Մայիսի Երկրորդ Կիրակին:

SHAVUOT - ՇԱՎՈՒԹ, ՄԱՅԻՍԻ 26-27 -- *Հրեական տոն, որով հրյաները տոնում են 10 պատվիրանների և ամբողջ Տորահի (հրեական կրոնական գիրքը) հայտնաբերումը:

MEMORIAL DAY - ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ -- Մայիսի Վերջին Երկուշաբթին, տոնական օր ի պատիվ բոլոր պատերազմներում զոհված ռազմիկների հիշատակին:

FLAG DAY - ԴՐՈՇԻ ՕՐ, ՀՈՒՆԻՍ 14 -- Ժողովրդական տոն օր, որը նշվում է որոշ նահանգներում: 1777 թվականին Կոնտինենտալ Կոնֆերանսի կողմից Երկրի դրոշի ընդունման տարեդարձը:

FATHER'S DAY - ՀԱՅՐԵՐԻ ՕՐ -- Հունիսի Երրորդ Կիրակին:

INDEPENDENCE DAY - ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ, ՀՈՒԼԻՍ 4 -- Տոնական օր ընդունված բոլոր նահանգներում: 1776 թվականին Անկախության Դեկլարացիայի ընդունման օրը:

LABOR DAY - ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԸ -- Սեպտեմբերի առաջին Երկուշաբթին: Ամերիկյան աշխատավորներին պատվելու օր, այս օրը սովորաբար նշում է նաև ամառային արժակուրդների վերջը: Բոլոր նահանգներում ընդունված տոնական օր է:

ROSH HASHANA - ՌՈՇ ՀԱՇԱՆԱ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 16-17 -- *Հրեական Նոր Տարի:

YOM KIPPUR - ՅՈՄ ԿԻՊՊՈՒՐ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 24-25 -- *Հրեական կրոնական օր է: Աղոթելով, խնճույք անելով և զղումով նշվող քավության օր է:

SUCCOTH - ՍՈՒՔՔՈԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը -- *Հրեական կրոնական տոն, որով նշվում է Թորահը:

COLUMBUS DAY - ԿՈԼՈՄՊՈՒՐ ՕՐ -- Հոկտեմբերի Երկրորդ Երկուշաբթին, 1492 թվականին Կոլոմպոսի կողմից Ամերիկյան մայր ցամաքը հայտնաբերելու տարեդարձը: Հատ նահանգներում նշվող տոնական օր է:

HALLOWEEN - ՀԱԼՈՈՒԻՆ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 -- Մի հատուկ օր, երբ Երեխաները և որոշ մեծահասակներ հատուկ զգեստներ հագած շրջում են մոտակա տները,

Միացյալ Նահանգներում Վերաբնակվելու մի ձեռնարկ/Գլուխ VII

քաղցրեղեն խնդրելով: Եթե նրանք համապատասխան վերաբերմունք չստանան, իրավունք ունեն վնաս չհասցնող շարաժիշտություններ անել:

VETERAN'S DAY - ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՕՐԸ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 -- Նշանակված է հատուկ պատվելու համար ՄՆ-ի Զինված Ուժերի կազմին: Համարյա բոլոր նահանգներում տոնվող տոնական օր է:

THANKSGIVING DAY - ԳՈՀԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ -- Առվորաբար նոյեմբեր ամսի չորրորդ Հինգշաբթին: Գլխավոր տոնական օրերից մեկն է, որով ամերիկացիները արտահայտում են իրենց երախտապարտ լինելը հողի առատաձեռնության համար: Գոհաբանության ընթրիքը, դա ամերիկացիների ավանդական ուտեստեղեններից ինչպիսիք են, հնդկահավը, քաղցր գետնախնձորը, եգիպտացորերը և դդումով պատրաստած կարկանդակը, բաղկացած խնճույք է: Սա նույնպես ընտանիքի վերամիավորման օր է: Ավանդությունը հավաստում է, որ այս օրը առաջին անգամ նշվել է Ամերիկայի առաջին գաղթականների կողմից: Սա բոլոր նահանգներում նշվող օր է:

CHRISTMAS DAY - ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՕՐԸ, ԴԵԿԵMBERԻ 25 – Սա և կրոնական և կառավարական տոնական օր է, որը նշվում է բոլոր նահանգներում: Դա Հիսուս Քրիստոսի ծննդյան օրն է:

*Հրեական բոլոր տոն օրերը սկսվում են նախորդ օրվա արևամուտից մինչև տոնական վերջին օրվա արևամուտը: Այս տոն օրերի տարեթվերը ամեն տարի փոխվում են, քանի դրանք տեղի են ունենում համաձայն հրեական օրացույցի, որը տարբերվում է ՄՆ-ում ընդունված Հուլիսյան օրացույցից:

ՄՆ-Ի ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք իույսով ենք, որ այս ուղղեգիրքը որոշ չափով պատասխանեց ձեզ հետ առնչություն ունեցող որոշ հարցերին: Որպես Ամերիկյան ժողովրդի նոր անդամի ցանկանում ենք ձեզ երկար և երջանիկ կյանք: Բարի գալուստ և հաջողություն ձեզ:

ԱԶԳԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՄԻՏԵ -ԱԾԱԿ
ԶԵԽՈՍԼՈՎԱԿ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՖՈՆԴ -ԶՓԱՑ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՉԽԱՐՁԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ -ԵՀԾ
ՀՐԵԱԿԱՆ ԷՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ -ՀՔՕԸ
ԱՅԴԱՀՈՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՍԻՏՈՒՏ
ԱՅՈՎԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ --ՄՕԿ
ԷՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ-
ՄԻԱՅՅԱԼ ԱԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՐՊԼԻԿ ԿՈՆՖԵՐԱՆՍ -ՄՆԿԿ
ԼԵՀԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԷՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՆՊԱՍՏԻ ԿՈՄԻՏԵ --ԼԱԷՆԿ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՉԽԱՐՁԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ --ԵԿՖ
ՏՈԼԱՏՈՅԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ -ՏՀ
ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻՅԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՉԽԱՐՁԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ -ՀՕ